

ՀՀ ԳԱԱ Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒ ԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԴՐԱՄԲՅԱՆ ԱՆԱՅԻՏ ԳԱԳԻԿԻ

ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀԱՐԿԱՅԻՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԶԴԵՑՈՒ ԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀԻՄՆԱԽԱԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒ ԹՅՈՒՆՈՒՄ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒ ԹՅՈՒՆ

Ը.00.02 - «Տնտեսություն, նրա ոլորտների
տնտեսագիտություն և կառավարում»
մասնագիտությունը տնտեսագիտություն
թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Գիտական ղեկավար՝

*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտություն դոկտոր, պրոֆեսոր
Հարությունյան Վլադիմիր Լիպարիտի*

ԵՐԵՎԱՆ - 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒ ԹՅՈՒՆ

ՆԵՐԱՃՈՒ ԹՅՈՒՆ.....

3

ԳԼՈՒԽ1. ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՄԻ ՄԼԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒ ԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒ ԹՅԱՆ ՉԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ.....7

1.1. Գործարար միջավայրի էությունը, կառուցվածքն ու առանձնահատկությունները.....7

1.2. ՀՀ գործարար միջավայրի ձևավորման ինստիտուցիոնալ հիմքերը և դրանց համեմատական վերլուծությունը.....20

1.3. Գործարար միջավայրի վրահարկային համակարգի ազդեցության գնահատման մոտեցումները.....31

ԳԼՈՒԽ2. ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՓՈՒԱԶԴԵՑՈՒ ԹՅԱՆ ՎԵՐԼՈՒՊՈՒ ԹՅՈՒՆԸ.....49

2.1. Գործարար միջավայրի գործունային վերլուծությունը.....49

2.2. Մակրոտնտեսական և հարկային ցուցանիշների ազդեցությունը գործարար միջավայրի վրա.....80

ԳԼՈՒԽ3. ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ.....96

3.1. Հարկային համակարգի բարելավման հիմնական ուղիները..... 96

3.2 Հարկային բեռի կառավարման հիմնախնդիրները.....120

3.3 Գործարար միջավայրի բարեփոխման գերակայությունները.....127

ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ.....

147

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ

ՑԱՆԿ.....152

ՀԱՎԵԼ ՎԱՃՆԵՐ.....166

-182

ՆԵՐԱՃՈՒ ԹՅՈՒՆ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Գործարար միջավայրի վրա հարկային համակարգի ազդեցությունը արդիական խնդիր է ոչ միայն Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման համար, այլ նաև դարձել է համաշխարհային տնտեսությունում մրցունակության բարձրացման հիմնական գործոն: Ընդ որում, հարկային հարաբերությունների ու հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները դարձնել են օբյեկտիվ անհրաժեշտություն և գործարար միջավայրի զարգացման հիմնական երաշխիքները: ՀՀ տնտեսության մրցունակության ներկայիս մակարդակը և դրանում գոյություն ունեցող բազմաթիվ խնդիրները ազդում են գործարար միջավայրի, դրա վարկանիշի, ներդրումային ակտիվության, մակրոտնտեսական քաղաքականության վրա: Պետք է նշել, որ թիվս այդ գործոնների, հանրապետությունում դեռևս չի ձևավորվել մրցունակ հարկային համակարգ, ինչը կաշկանդում է տնտեսության կայուն զարգացման, պետության ռիսկի նվազեցման, բնակչության բարեկեցության բարձրացման, հարկային համակարգի կայունության ապահովման հնարավորությունները: Տնտեսության զարգացման տեսանկյունից անհրաժեշտ է գնահատել գործարար միջավայրի զարգացմանը նպաստող և կաշկանդող գործոնները, առանձնացնել հարկային համակարգում գոյություն ունեցող թերացումներն ու բացթողումները, վերլուծել մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը գործարար միջավայրի և հարկային համակարգի կայունության վրա, ինչպես նաև առաջարկել միջոցառումներ, որոնք առավել մրցունակ կդարձնեն ՀՀ տնտեսության իրական հատվածի ոլորտներում ներդրումների

ներգրավմանը, գործարար ակտիվության բարձրացմանը: Թերևս, այդ խնդիրները վերլուծվել են ինչպես օտարազգի հեղինակների, այնպես էլ՝ հայ հեղինակների կողմից, ինչպիսիք են՝ Վ.Յարոնյանը, Մ.Մելքումյանը, Ա.Մարկոսյանը, Յ.Սարգսյանը, Ս.Դավոյանը, Ա.Ադամյանը, Ա.Ալավերդյանը, Ա. Թամազյանը, Գ.Կիրակոսյանը և ուրիշներ:

Պետք է նշել, որ գործարար միջավայրի գրավչությունը պայմանավորված է հարկային համակարգի արդյունավետության բարձրացման, հարկային բեռի օպտիմալացման, հարկային արտոնությունների և տնտեսության զարգացման գերակայություններով: Ավելի, զարգացած երկրներում գործարար միջավայրի վրա ազդում են տարբեր գործոններ, ինչպիսիք են՝ երկրի ռիսկը, հարկային համակարգի կայունությունը, ներդրողների շահերի պաշտպանությունը, մակրոտնտեսական քաղաքականության և տնտեսության դիվերսիֆիկացման ներդաշնակեցումը և այլն:

Տարածաշրջանային և հետանցումային երկրներում գործարար միջավայրի վրա ազդում են տնտեսական բարեփոխումները, որոնք պայմանավորված են հարկային դաշտի պարզեցման, հարկային օրենքներում տարընթերցումների նվազեցման, մրցակցային հավասար միջավայրի ձևավորման, տնտեսավարող սուբյեկտների և պետության համագործակցության հանգամանքներով: Այդ հիմնախնդիրների լուծումների բացահայտումը արդիական են դարձնում անտեսախոսության թեման:

Յետադոտության նպատակը և խնդիրները: Յետադոտության հիմնական նպատակն է հիմնավորել ՀՀ գործարար միջավայրի վրա ազդող հարկային համակարգի դերը, ինչպես նաև առաջարկել ուղիներ հարկային համակարգի բարելավման համար: Այս նպատակին հասնելու համար անտեսախոսությունում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել գործարար միջավայրի էությունը, կառուցվածքն ու առանձնահատկությունները,
- վերլուծել գործարար միջավայրի և հարկային մարմինների պետական կարգավորման հիմնախնդիրները,

- դիտարկել ՀՀ գործարար միջավայրի ձևավորման ինստիտուցիոնալ հիմքերն ու իրականացնել դրանց համեմատական վերլուծությունը,
- վերլուծել հարկային համակարգի բարելավման ուղիները և առաջարկել հարկային միջոցառումներ՝ ուղղված ՀՀ տնտեսության ոլորտներում ներդրումների ներգրավմանն ու կայուն տնտեսական աճի ապահովմանը:
- առաջարկել իրականացնել հարկային բարեփոխումներ՝ ուղղված հարկային հարաբերությունների պարզեցմանը ինտեգրացիոն գործընթացների ներդաշնակեցման համատեքստում:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ գործարար միջավայրն է, իսկ հետազոտության առարկան՝ ՀՀ գործարար միջավայրի բարելավման գործում հարկային համակարգի ազդեցությունը:

Հետազոտության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել գործարար միջավայրի և հարկային համակարգի վերաբերյալ տարբեր տնտեսագետների կողմից լայն կիրառություն ունեցող հրապարակումները, աշխատություններն ու մենագրությունները, ինչպես նաև առաջադրած հիմնարար տեսական ու վերլուծական բնույթի դրույթները:

Հետազոտությանն անհրաժեշտ տեղեկատվական հիմքերն են ԱՎԾ-ի, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պաշտոնական տվյալներն ու հրապարակումները, Համաշխարհային բանկի, միջազգային արժույթի հիմնադրամի, BERI միջազգային կազմակերպության, S324-ի կողմից հրապարակված զեկոլոյցներն ու պաշտոնական վիճակագրությունը, զեկոլոյցները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակագրական, հետազոտական՝ համեմատական, վերլուծության մեթոդները:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը: Հետազոտության արդյունքում մշակվել և ստացվել են տեսական ու գործնական նշանակության արդյունքներ, որոնց բովանդակությունը կայանում է հետևյալում՝

1. Արտադրական-ենթակառուցվածքային ֆունկցիայի միջոցով վերլուծվել և գնահատվել են մակրոտնտեսական ցուցանիշների (զբաղվածների թիվ, հարկային բեռ) ազդեցությունը գործարար միջավայրի բարելավման վրա, ինչպես նաև բացահայտվել և հիմնավորվել են հարկային համակարգի դերը տնտեսության զարգացման գործում:

2. Գործարար միջավայրի վրա ազդող գործոնների վերլուծության արդյունքում մշակվել է տնտեսաչափական մոդել, որի միջոցով հաշվարկվել է հարկային բեռի ազդեցությունը գործարար միջավայրի վրա՝ առաջարկելով իրականացնել հարկային բարեփոխումներ՝ ուղղված ուղղակի հարկերի մասով դրույթաչափերի, հարկային արտոնությունների վերանայմանը:

3. Հիմնավորվել և գնահատվել է ՀՀ տնտեսության զարգացման գործում ուղղակի ներդրումների և հարկային եկամուտների կոռելյացիոն կապը, ինչպես նաև մշակվել է միջոցառումների համալիր՝ ուղղված տնտեսության դիվերսիֆիկացմանը, գործարար միջավայրի բարելավմանը և տնտեսության մրցունակության բարձրացմանը:

4. Մշակվել և առաջարկվել է ԵԱՏՄ երկրների գործարար միջավայրի վրա ազդող տնտեսական քաղաքականության կապը հիմնավորող կառուցակարգ, ինչպես նաև հիմնավորվել են հարկերի հավաքագրման դիվերսիֆիկացման և տնտեսության մրցունակության բարձրացման միջոցառումները:

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը և օգտագործումը: Ատենախոսությունը գիտական հետազոտություն է, որտեղ կատարված վերլուծություններից բխող հետևությունների ու եզրակացությունների հիման վրա արված առաջարկությունները, ինչպես նաև գործարար միջավայրի վարկանիշի բարձրացման արդյունքում հարկային համակարգի բարելավման հիմնախնդիրներից էլ ներկայացված գնահատումները կարող են օգտագործվել գործադիր և օրենսդիր մարմինների կողմից՝ գործարար միջավայրի զարգացման, տնտեսության ոլորտներում ներդրումների ներգրավման, հարկային արտոնությունների և հարկային դրույթաչափերի վերանայման ուղղությամբ իրականաց-

վող աշխատանքների կատարման ժամանակ:

Հետագոտության արդյունքները կարող են օգտակար լինել պետական կառավարման մարմինների, գործարարների, հարկային մարմինների, ինչպես նաև գործարարության և հարկային համակարգի հիմնախնդիրներով զբաղվող տնտեսագետ-իրավաբանների, հետագոտողների համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնադրույթները և ուսումնասիրության արդյունքները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված 6 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության տեքստը շարադրված է 165 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

**ԳԼՈՒԽ1. ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ
ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՉԱՐԳԱՅՍԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

1.1. Գործարար միջավայրի էությունը, կառուցվածքն ու առանձնահատկությունները

Գործարար միջավայրի զարգացումն ազդում է տվյալ երկրի ինքնիշխանության բարձրացման, տնտեսավարող սուբյեկտների ավելացման, կյանքի որակի բարելավման վրա: Տնտեսական քաղաքականության արդյունավետ իրականացման համար գործարար միջավայրը հանդես է գալիս որպես տնտեսական, սոցիալական, քաղաքական կամ ինստիտուցիոնալ պայմանների ամբողջություն: ¹

¹ Fernando A. C. 'Business Environment', Pearson Education, 2011pp. 33-36.

Յետևաբար, առաջին հերթին, պետք է վերլուծել բիզնես միջավայրը և դրա կառուցվածքը: Այնուհետև՝ իրականացնել գործունային վերլուծություն՝ պարզելու, թե որ գործոններն են նպաստում կամ խոչընդոտում գործարար միջավայրի զարգացմանը:

«Գործարար միջավայր» տնտեսագիտական եզրույթի վերաբերյալ գոյություն ունեն տարբեր սահմանումներ և ձևակերպումներ: Օրինակ, ըստ Ֆիլ Բելիի գործարար միջավայրը բոլոր պայմանների, իրադարձությունների ամբողջությունն է, որոնք շրջապատում և ազդում են վերջինիս վրա²:

Ա.Դերգունովի կարծիքով՝ գործարար միջավայրը նույնացվում է բիզնես, ինովացիոն բիզնես, ձեռներեցություն եզրույթների հետ³: Սակայն բիզնես միջավայրն առավել լայն հասկացություն է և թվարկված բոլոր տեսակներն ընդգրկում է իր մեջ⁴:

Դ.Դոլարի համաձայն գործարար միջավայրը ինստիտուցիոնալ, քաղաքական և կարգավորող պայմաններն են, որոնց շրջանակներում գործում է առևտրային կազմակերպությունը⁵: Կամ գործարար միջավայրը հանդես է գալիս որպես գործոնների համախումբ, որը պետության կողմից ապահովում է գործարարության զարգացման համար անհրաժեշտ պայմաններ⁶:

Յամաշիտահային բանկի բնորոշմամբ գործարար միջավայրը հանդես է գալիս որպես գործոնների համախումբ, ինչը բնութագրում է տվյալ երկրի առևտրային կազմակերպությունների գործարարությամբ զբաղվելու մոտիվացիան՝ արդյունավետ ներդրումային քաղաքականության, նոր աշխատատեղերի ստեղծման, համաշխարհային մրցակցային շուկաներին ինտեգրման գործընթացում⁷:

Յետևաբար՝ ընդհանրացնելով գոյություն ունեցող սահմանումներն ու ձևակերպումները, կարելի է գործարար միջավայրը ներկայացնել որպես ներքին և արտաքին գործոնների

² Phil Kelly and Andrew Ashwin 'The Business Environment', 2013, pp.78-81.

³ Дергун А.И. «Системный подход к развитию национальной инновационной среды // Инновации,- №3.- 2008.- С. 53-56.

⁴ Saloman John 'Economics and the Business Environment', 2008, 461p.

⁵ Dollar D., Hallwart-Driemier M., Mengistae T., « Investement Climate and Firms Performance in the Developmenet Economies». World Bank, 2003 pp. 118-120

⁶ Inter-American Development bank, 2003, pp. 75

⁷ Всемирный Банк, «Доклад о мировом развитии» 2005, с 9-11.

փոխազդեցության հետևանքով տնտեսվարող սուբյեկտների գործարար ունակությունը կարգավորող գործընթաց, որի նպատակը նվազագույն ռեսուրսներով առավելագույն շահույթի ապահովումն է: Բացի այդ, գործարար միջավայրը ներքին և արտաքին գործոնների փոխազդեցության արդյունքում գործարարների ձեռնարկատիրական ունակությունների դրսևորման վարքագիծն է, որը հետագայում կարող է խթանել ներդրումային հոսքերի, նոր աշխատեղերի, հարկային եկամուտների ավելացմանն ու նպաստել տնտեսության զարգացմանը: :


Ինչպես ներկայացվել է գծապատկեր 1.1.1-ում, գործարար միջավայրի վրա ազդում են ներքին և արտաքին գործոններ, որոնք իրենց հերթին դասակարգվում են՝ միկրոմիջավայրի և մակրոմիջավայրի:

Արտաքին միջավայրի վրա ազդող գործոնները բաժանվում են 2 խմբերի՝

1. ուղղակի ազդեցության միջավայր, որը կոչվում է նաև միկրոմիջավայր,
2. անուղղակի ազդեցության միջավայր, որը կոչվում է նաև մակրոմիջավայր:

Ներքին միջավայրի վրա ազդող գործոնները բաժանվում են 2 խմբերի՝

1. նպատակ,
2. մարդիկ, խնդիրներ, տեխնոլոգիա, կառուցվածք:



Գծապատկեր 1.1.1. Գործարար միջավայրի կառուցվածքը⁸

Միկրոմիջավայրի կամ ուղղակի ազդեցության միջավայրի մեջ ներառվում են այն գործոնները, որոնք անմիջականորեն ազդում են բիզնես միջավայրի վրա: Դրանք են՝ օրենքներն ու պետական կառավարման մարմինների գործունեությունը, աշխատանքային ռեսուրսները, մատակարարներն ու սպառողները, մրցակիցները: Թվարկված գործոններից յուրաքանչյուրի վարքագծի փոփոխությունն անմիջական ազդեցություն է ունենում գործարար միջավայրի վրա: Օրինակ՝ հարկային օրենքների փոփոխությունը, մասնավորապես՝ շահութահարկի դրույքաչափի նվազեցումը դրական ազդեցություն է ունենում գործարար ակտիվության վրա: 2004 թվականից ՀՀ ֆինանսական շուկա է մուտք գործել շվեդական օպերատոր Նասդաք-Օ-Էմ-Էքսը, և մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ֆոնդային բորսայում օրենքով սահմանված կարգով հասարակ բաժնետոմսեր ցուցակված ռեզիդենտները (բացառությամբ՝ պետության կողմից կարգավորվող սակագներ կիրառող ռեզիդենտների) օգտվում են հաշվետու տարիների շահութահարկը 50%-ով (բայց ոչ ավելի, քան յուրաքանչյուր տարվա համար 300,0 մլն դրամով) նվազեցնելու արտոնությունից, եթե նրանց բաժնետոմսերի միջին տարեկան հաշվարկով առնվազն 20%-ի մասը պատկանում է հանրությանը, ֆինանսական հաշվետվությունները կազմվում և հրապարակվում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան և նրանց բաժնետոմսերի թիվը միջին տարեկան հաշվարկով կազմում է առնվազն 100՝ նշված բոլոր պայմանները միաժամանակ տեղի ունենալու տարվա և դրան հաջորդող 2 հաշվետու տարիների ընթացքում (այսուհետ՝ ցուցակված ռեզիդենտների

⁸ Фазй Л., Рэнделл Р. Курс МВА по стратегическому менеджменту // Перевод с англ. под ред. В. Осипова. М.: Альпина Бизнес Букс,- 2004.- С 596.

արտոնությունը)⁹:

Շահութահարկի գծով հարկային արտոնության նպատակն է եղել ցուցակված ընկերությունների թվաքանակի ավելացումը և տնտեսությունում «երկարաժամկետ փողերի» ստեղծումը: Սակայն այդ արտոնությունը չի առաջացրել մոտիվացիա, քանի որ ՀՀ տնտեսությունում եղել և շարունակում են լինել սովետային տնտեսություն և սովետային գործարքներ, որոնց նկատմամբ տնտեսավարող սուբյեկտների հակվածությունն առավել մեծ է, քան օրինական և թափանցիկ հարկային դաշտում գործունեություն ծավալելը: Դա առաջին նախապայմաններից մեկն է միջազգային հաշվապահական ստանդարտներով հաշվապահություն վարելու, ցուցակում իրականացնելու և հանրային նշանակություն բաժնեգումարներ թողարկելու ու վաճառելու համար:

Մակրոմիջավայրի կամ անուղղակի ազդեցության գործոններն առավել գլոբալ են և անմիջապես չեն ազդում գործարար միջավայրի վրա, սակայն դրանք նույնպես կարող են վճռորոշ դեր ունենալ վերջինիս զարգացման գործում¹⁰: Օրինակ՝ 2007 թվականին Համաշխարհային Ֆինանսատնտեսական ճգնաժամն անմիջապես ազդեցություն չունեցավ ՀՀ գործարար միջավայրի վրա, սակայն դրա հետևանքները ՀՀ տնտեսությունը սկսեց շոշափել 2008-2009 թվականներից հետո¹¹: Այսինքն՝ մակրոմիջավայրի կամ անուղղակի ազդեցության միջավայրի գործոնները հանդիսանում են հենց նույն մակրոտնտեսական ցուցանիշները, ինչպիսիք են՝ դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության ցուցանիշները, օրենքների և դրանց կատարման համապատասխանությունը, մաքսային և հարկային կանոնակարգերը և դրանց հետ կապված վարչարարությունները, ժողովրդագրությունն ու դրա կառուցվածքը, տնտեսական և տեխնոլոգիական զարգացումը, ենթակառուցվածքների վիճակն ու դրա վրա ազդող գործոնները, աղքատությունը, սոցիալական և մշակութային առանձնահատկու-

⁹ «Ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության հարկային տեսչության 1998թ. փետրվարի 5-ի N 01/10 և 1999թ. փետրվարի 11-ի N 01/8 հրամանները ուժը կորցրած ճանաչելու մասին»: ՀՀԳՏ 2004.05.03/10(158)

¹⁰ Георгиев Р. Развитие инновационных сетей и альянсов в условиях глобализации //Экономическое возрождение России,-№ 1 (11).- 2007

¹¹ Մեփական տեսակետ:

թյուրևերը, շրջակա միջավայրն ու դրա պահպանման հետ կապված պետական քաղաքականությունը և այլն:

Անուղղակի գործոնների ազդեցությունը առավել մեծ է և կրում է երկարաժամկետ բնույթ, քանի որ դրանք ազդում են՝

- երկրի տնտեսական զարգացման վրա,
- ներքին և արտաքին քաղաքականությունների վրա,
- իրավական ինստիտուտներ վիճակի վրա,
- սոցիալ-մշակութային զարգացման վրա,
- պետության սոցիալական քաղաքականության վրա, մասնավորապես՝ գիտության, կրթության, տեխնոլոգիայի և տեխնիկայի վրա,
- երկրի աշխարհաքաղաքական զարգացումների վրա,
- ժողովրդագրության վրա,
- ազգային անվտանգության և շրջակա միջավայրի պաշտպանության վրա:

Գործարար միջավայրի ներքին գործոնները հանդես են գալիս որպես արտադրանքի արտադրության և դրա իրացման ամբողջություն, որոնք կարգավորվում են կազմակերպության կողմից¹²: Եթե արտաքին գործոնների նկատմամբ կազմակերպությունը կարող է մասամբ ունենալ ազդեցություն, ապա ներքին գործոններն ամբողջությամբ վերցրած, կառավարվում և վերահսկվում են անմիջապես կազմակերպության կողմից: Ներքին գործոններից են՝

- նպատակը,
- մարդիկ,
- խնդիրները
- տեխնոլոգիան,
- կառուցվածքը:

Դրանք բոլորը փոխկապակցված են իրար հետ և առանց մեկը մյուսի չեն կարող գործել: Օրինակ՝ նպատակը ցանկալի արդյունքն է, որին ձգտում է հասնել կոնկրետ կազմակերպությունը: Այն սահմանվում է մարդկանց կողմից, մասնավորապես՝ կազմակերպությունում ներգրավված

¹² Мировая экономика и международный бизнес. Под ред. Полякова В.В., Щенина Р.К. 5-е изд., стер. – М.: Кнорус, 2008. с.44-45 (688 с.)

աշխատանքային ռեսուրսների կողմից: Իհարկե, տարբեր կազմակերպություններում նպատակները տարբեր են լինում, սակայն դրանք, ըստ էության, նման են միմյանց, քանի որ հետապնդում են նվազագույն ծախսերով ստանալ առավելագույն շահույթ:

Խնդիրներն արդեն իսկ սահմանված նպատակների իրագործման գործընթաց է, որը պետք է կատարվի նախապես մշակված միջոցներով և ժամկետներում: Խնդիրների լուծման գործընթացում դրանք տրոհվում են առանձին մասերի, որոնց կատարումն իրականացվում է տարբեր պաշտոնական դիրք ունեցող աշխատանքային ռեսուրսների միջոցով: Կազմակերպություններում խնդիրների կատարումը և դրա հետ կապված գործընթացը պահանջում է տարբեր մոտեցումներ, կամ կարելի է ասել, որ ըստ պաշտոնների խնդիրները տարբեր են, քանի որ տարբեր են դրանց հետ կապված պարտավորությունները:

Տեխնոլոգիան հումքից վերջնական արդյունքի վերածման գործընթաց է: Այն ենթադրում է ձևավորել համապատասխան որակավորում ունեցող մասնագետների խումբ, սարքավորումներ, տեխնոլոգիական գիտելիքներ, որոնք նպաստում են սահմանված նպատակի իրագործմանը: Այսինքն, գործարար միջավայրի ներքին գործոնների շարքում կենտրոնականը և շարժիչ ուժը մարդն է:

Կառուցվածքը կազմակերպության կառավարման մակարդակն է գծային և ֆունկցիոնալ տարբեր հարթություններում:

Այսպիսով՝ գործարար միջավայրի կառուցվածքի վերլուծությունից կարելի է նշել, որ գործարար միջավայրի զարգացման համար անհրաժեշտ է ապահովել ներքին և արտաքին միջավայրերի և դրանց գործոնների միջև փոխհամայնեցվածություն: Ինչ վերաբերում է գործարար միջավայրի վարկանիշի ձևավորմանը, վերջինիս վերաբերյալ գոյություն ունեն տարբեր մոտեցումներ և վերլուծություններ: Օրինակ՝ տարբեր հեղինակների կողմից դրանք գնահատվում են տարբեր մեթոդներով և ստացվում են տարբեր արդյունքներ¹³:

Կարևոր հարցադրումներից մեկն այն է, որ անհրաժեշտ է

¹³ Чумарова, О.Н. Финансово-экономический контроль как одна из форм борьбы с коррупцией в России / О.Н. Чумарова // Вестник Российского университета дружбы народов, серия: юридические науки. – 2006. – №2. – С. 116-120.

պարզել, թե ինչ գործոններ են ազդում գործարար միջավայրի զարգացման վրա: Պետք է նշել, որ տարբեր երկրներում գործարար միջավայրի վրա ազդում են միևնույն գործոնները, սակայն դրանց արդյունքները տնտեսության զարգացման վրա տարբեր են լինում:

Այդ առումով, անհրաժեշտ է պարզել, թե ինչ է «գործարար միջավայրի վարկանիշ» եզրույթը և ինչ սահմանումներ, մեկնաբանություններ գոյություն ունեն վերջինիս վերաբերյալ, որից հետո հնարավոր կլինի գնահատել այդ վարկանիշը:

Այսպես, գործարար միջավայրի վարկանիշի վրա ազդում են տարբեր գործոններ, որոնք վերջին հաշվով ձևավորում են գործարար միջավայրի կառուցվածքը: Այն բաղկացած է 3 տարրերից, որոնք իրենց հերթին բաղկացած են առանձին գործոններից՝ հետևյալ տարրերից՝

1. մակրոտնտեսական քաղաքականություն, որի վրա ազդում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ գործազրկության կրճատումը, ֆինանսավորման հասանելիությունը, հարկաբյուջե տային քաղաքականության արդյունավետության բարձրացումը, միջսահմանային առևտրի ազատականացումն ու պարզեցումը,
2. ենթակառուցվածքների զարգացում, ինչը պայմանավորված է հետևյալ գործոններով՝ հեռահաղորդակցություն, էլեկտրոնների գիտ, տրանսպորտ և կապ, բանկային հաստիք, կրթական համակարգ, միջազգային մրցակցային շուկայի հասանելիություն և այլն,
3. օրենսդրափրավական դաշտի պարզեցում, որի վրա ազդում են հետևյալ գործոնները՝ դատափրավական համակարգի պարզեցում, աշխատանքային հարաբերությունների օրենսդրական կարգավորում, հարաբերությունների շինարարական պարզեցում,



Գծապատկեր 1.1.2. Գործարար միջավայրի վարկանիշի ձևավորման կառուցակարգը¹⁴

Յետևաբար, վերը թվարկված տարրերի ամփոփման միջոցով տրվում է գործարար միջավայրի վարկանիշային գնահատականը, որի արդյունքները անհրաժեշտ են՝

- միջազգային մակարդակում տարբեր երկրներում ներդրումային ռիսկերի գնահատման համար,
- ազգային մակարդակում պետության տնտեսական քաղաքականության գնահատում՝ տնտեսական և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացման համար,
- տվյալ երկրի ներսում տվյալ երկրի ներդրումային ռիսկերի գնահատման համար:

¹⁴ Հեղինակային մոտեցում:


Այս ափսոսվ՝ գործարար միջավայրի վարկանիշը կախված է առաջին հերթին մակրոտնտեսական քաղաքականության արդյունավետությանից, ինչն էլ հուսալի պայմաններ է ստեղծում օրինակ՝ ֆինանսավորման հասանելիության, հեռահաղորդակցության, հարկային քաղաքականության, փոխարժեքային կորստերի և գների կառավարման համար:

Ուստի, գործարար միջավայրի վարկանիշի ձևավորման վրա ազդում են մակրոտնտեսական քաղաքականությունը, ենթակառուցվածքների զարգացումը, օրենսդրա-իրավական դաշտի պարզեցումը:

Ինչպես նշվել է գծապատկեր 1.1.2-ում, գործարար միջավայրի վարկանիշի ձևավորման վրա ազդում են տարբեր գործոններ, որոնց գնահատումը պահանջում է համակարգային մոտեցում և տարբեր պետական, օրենսդիր և մասնավոր հատվածների ներգրավվածություն:

Պետք է նշել, որ այն դեռևս ՀՀ-ում չի իրականացվել, թեպետ գործարար միջավայրի վարկանիշի վերաբերյալ կատարվել են տարբեր գնահատումներ հատկապես միջազգային կազմակերպությունների կողմից, ինչպիսիք են՝ Համաշխարհային բանկը, Միջազգային արժույթային հիմնադրամը, Եվրոպական զարգացման և վերակառուցման բանկը:

Հետևաբար, գործարար միջավայրի վարկանիշը կախված է առաջին հերթին մակրոտնտեսական քաղաքականության արդյունավետությանից, ինչն էլ հուսալի պայմաններ է ստեղծում օրինակ տնտեսության հիմնական ոլորտների գուտ հարկերի, ՀՆԱ-ի համար (գծապատկեր 1.1.3):




Գծապատկեր 1.1.3. 2006-2015թթ. ՀՀ տնտեսության հիմնական ոլորտների դինամիկան¹⁵

Կարելի է ասել, որ ՀՀ տնտեսության զարգացման կարևորագույն նախապայմաններից է գործարար և ներդրումային միջավայրի բարելավումը, որին հասնելու համար անհրաժեշտ է Հայաստանում ստեղծել ձեռնարկատիրական գործունեության պետական կարգավորման, ծառայությունների և վարչական ընթացակարգերի պարզ, թափանցիկ և քիչ ծախսատար միջավայր, ապահովել հավասար մրցակցային պայմաններ, գործարարությանն օժանդակող զարգացած շուկայական ենթակառուցվածքներ, ինչպես նաև իրականացնել հարկային և մաքսային հավասարակշռված քաղաքականություն:

Ուստի, ՀՀ գործարար միջավայրի զարգացման համար անհրաժեշտ է վերլուծել ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական ոլորտների իրական աճի ինդեքսները: Այսպես, **գծապատկեր 1.1.3**-ից կարելի է եզրակացնել, որ արդյունաբերության իրական աճի ինդեքսը սկսել է նվազել սկսած 2006 թվականից. 2000 թվականին այն 106,1%-ից դարձել է 99,1%: Արդյունաբերության իրական աճի ինդեքսը բարելավել է գնաճի (12 ամսյա) տոկոսային փոփոխությամբ, որը 2006 թվականին 2000 թվականի համեմատ ավելացել է 4,8 %-ային:

¹⁵ Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր: ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442 - Ն որոշման: Էջ 20-21:

կետով: Կտրուկ նվազում է նկատվել 2010 թվականին գյուղատնտեսության իրական աճի ինդեքսի մասով, որը 2006 թվականի համեմատ նվազել է շուրջ 14 %-ային կետով: Թերևս վերջինիս անկումը կարելի է պայմանավորել ֆինանսատնտեսական ճգնաժամի երկրորդ փուլի հետ: Նվազման միտում է նկատվել նաև շինարարության իրական աճի ինդեքսի մասով սկսած 2009 թվականից, որը նույնպես պայմանավորված է ֆինանսատնտեսական ճգնաժամով:



Գծապատկեր 1.1.4. 2000-2015թթ. ՀՀ տնտեսության հիմնական ոլորտների իրական աճի ինդեքսները, %¹⁶

2015 թվականին ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական ոլորտների իրական աճի ինդեքսներն աճել են, բացառությամբ՝ առևտրի և ծառայությունների ոլորտների, որոնք 2014 թվականի համեմատ նվազել են համապատասխանաբար՝ 9.6 և 5.1 տոկոսային կետերով: Նվազման միտումները կարող են պայմանավորված լինել գնաճի անկման հետ, որը նվազել է շուրջ 4.7 տոկոսային կետով (գծապատկեր 1.1.4):

Հարկ է նշել, որ գործարար միջավայրի գնահատումն անհրաժեշտ է իրականացնել հետևյալ ուղղություններով՝

¹⁶ Գծապատկեր 1.1.4-ը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով <http://mfe.am/index.php?cat=41&lang=1> ինտերնետային այքը:

1. պէտական քաղաքականության միջոցով,
2. նորմատիվա-իրավական դաշտի միջոցով,
3. ռեսուրսների և արտադրական ենթակառուցվածքների հասանելիության միջոցով,
4. հումքային շուկաների առկայության միջոցով,
5. տեղեկատվական դաշտի միջոցով,
6. կրթական համակարգի միջոցով:

Ընդ որում, թվարկված ուղղությունները ինչպես առանձ-առանձին, այնպես էլ՝ ամբողջությամբ վերցրած ազդում են ներկաև ապագատնտեսավորող սուբյեկտների գործարարորոշումների վրա:

Այսպիսով՝ ՀՀ տնտեսության, գործարարության զարգացման համար անհրաժեշտ է ներդնել գործարար միջավայրի վարկանիշային գնահատման կառուցակարգը, որի գործնականում հաշվարկելը հնարավորություն կտա մշակել ՀՀ գործարար միջավայրի զարգացման ձևաչափ՝ ներդրումային հոսքերի ներգրավման, նոր աշխատեղերի ստեղծման, գործարար ակտիվության բարձրացման, բնակչության բարեկեցության բարելավման և տնտեսության զարգացման համար: Այդ գործում, կարելի է ասել, որ հարկային համակարգը էական և նշանակալի ազդեցություն ունի գործարար միջավայրի բարելավման, դրա վարկանիշի բարձրացման գործում: Մասնավորապես, ՀՀ հարկային նոր օրենսգիրքը պետք է նոր ազդակ հաղորդի գործարար միջավայրի բարելավմանը: Իսկ հարկային համակարգում առկա խնդիրները բավականին խոր և բացասական ազդեցություն են թողնում ներդրումային ակտիվության բարձրացման, տնտեսության զարգացման և կենսամակարդակի բարելավման գործընթացներում: Ընդ որում, հարկային մարմինների պետական կարգավորման արդի հիմնադրարարներից են հանդիսանում հարկային վարչարարության ցածր մակարդակը, բյուջետային հատկացումների և համահարթեցման անհամամասնությունները, տնտեսավորող սուբյեկտների հարկերից խուսափելու վարքագիծը, սովերային տնտեսության տարածումը տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում և այլն¹⁷:

¹⁷ Налоги и налогообложение: Учеб. пособие/ Под ред. Алиева Б.Х. - М.: Финансы и статистика, 2005. - 416 с.

Յետևաբար, հարկային համակարգի և հարկային մարմինների գիսավոր խնդիրն է հարկային օրենսդրության համաձայն հարկային եկամուտների գանձումը և հարկային օրենքների ընդունումը, որոնք նպաստում են գործարար միջավայրի զարգացմանը և պետական բյուջեի կատարմանը: Իհարկե, այստեղ պետք է հաշվի առնել արտաքին գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են՝ տնտեսական և քաղաքական իրավիճակների փոփոխությունը, ճգնաժամերի և սոցիալական նոր պահանջների առաջացումը:

Կախված հարկային քաղաքականության ուղղությունից, հարկային մարմինները կարող են ազդել գործարար միջավայրի և բյուջեի հարկային եկամուտների հավաքագրման վրա, մասնավորապես՝

- հարկային քաղաքականության նպատակն է տնտեսվարող սուբյեկտներից առավելագույն կերպով հարկային եկամուտների հավաքագրումը, այսինքն՝ այստեղ գործում է «գանձել այն ամենը, ինչ հնարավոր է» սկզբունքը,
- հարկային քաղաքականության նպատակն է սահմանել հարկային բեռի օպտիմալ մակարդակ, որը նպաստում է գործարար միջավայրի զարգացմանը՝ արդյունավետ հարկային համակարգի ձևավորման միջոցով,
- հարկային քաղաքականության նպատակն է հարկային բարձր բեռի պայմաններում վերանայել բնակչության սոցիալական պաշտպանության հիմնահարցերը:

Վերոգրյալներից վերջին երկուսը լայն կիրառություն են ստացել զարգացած տնտեսությունն ունեցող երկրներում¹⁸, իսկ ՀՀ հարկային համակարգում գործում է առաջին ուղղությունը, այսինքն՝ հարկային քաղաքականությունն իրականացվում է շեշտադրելով հարկերի ֆիսկալ գործառույթի վրա: Յետևաբար, կարելի է ասել, որ հարկային քաղաքականության ժամանակ պետությունը, հանձինս հարկային մարմինների միջոցով սահմանում է հարկերի հավաքագրման ընդհանուր վարքագիծ և հարկային վարչարարության խտացման դեպքում հարկային

¹⁸ Кумлин В. – «Государственное регулирование экономики: назревшие решения» // «Экономист», 2007, №11;

Եկամուտների առավելագույն հավաքագրումների մակարդակը չի նպաստում տնտեսության զարգացմանը¹⁹:

Հետևաբար՝ կարելի է եզրակացնել, որ շուկայական տնտեսությունն ունեցող երկրներում հարկային հարաբերությունների և գործարար միջավայրի համագործակցությունը պահանջում է իրականացնել բարեփոխումներ, ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ՝ կառուցվածքային: Իսկ դա նշանակում է, որ ճկուն հարկային համակարգ ձևավորելու գործում անհրաժեշտ է առաջին հերթին վերանայել մասնավոր և պետական հատվածի շահերը՝ ի նպաստ տնտեսության զարգացման, եկամուտների վերաբաշխման, սոցիալական քաղաքականության իրականացման և բնակչության կենսամակարդակի բարձրացման:

1.2. ՀՀ գործարար միջավայրի ձևավորման ինստիտուցիոնալ հիմքերը և դրանց համեմատական վերլուծությունը

Ցանկացած երկրի տնտեսության զարգացման գրավականներից մեկը գործարար միջավայրի վարկանիշի բարձրացումն է, ոչ միայն ներքին տնտեսության և ռեզիդենտների, այլ նաև՝ ոչ ռեզիդենտների և համաշխարհային տնտեսության համար:

Պետք է նշել, որ տարբեր երկրներում կիրառվում են տնտեսական քաղաքականության տարբեր գործիքներ և լծակներ: Դրանց համատեղելիությունը խոսում է բարենպաստ գործարար միջավայրի զարգացման և հետևաբար, նաև՝ գործարար միջավայրի վարկանիշի բարձրացման մասին:

Օրինակ՝ Գերմանիայում տնտեսական քաղաքականության իրականացման համատեքստում որպես բարենպաստ գործարար միջավայրի զարգացման և դրավարկանիշի բարձրացման գործիք է կիրառվում IFO-ի ինդեքսը²⁰: Վերջինս սահմանվում է որպես գործարարության հուսալիության կամ գործարար միջավայրի

¹⁹ Кумлин В. – «Государственное регулирование экономики: назревшие решения» // «Экономист», 2007, №11.

²⁰ file:///C:/Documents%20and%20Settings/Fg/My%20Documents/Downloads/KT_08_15_ee.pdf

ինդեքս: Այն մշակվել է Մյունխենի հետազոտական ինստիտուտի կողմից և լայն կիրառություն է ստացել Գերմանիայում: Բացի դրանից, այդ ինստիտուտը գերմանական ընկերությունների համարյուրաքանչյուր ամիս պարտադիր կարգով ներկայացնում է IFO-ի հաշվետվություն: Պետք է նշել, որ այդ հաշվետվությունը ներկայացվում է նաև ԵՄ երկրների համար: Այն ընդգրկում է տարբեր ոլորտներում ներգրավված ավելի քան 7000 տնտեսվարող սուբյեկտներ, բացառությամբ՝ բանկային հատվածի²¹:

IFO ինդեքսի գնահատման համար հաշվի են առնվում երկու գործոններ՝

1. տնտեսության ներկավիճակը և դրա գնահատականը (current sentiment component),
2. տնտեսական սպասումները և դրանց գնահատականը (expectations components):²²

IFO ինդեքսը որոշելու համար դիտարկվում են 2 գործոնների միջին մեծությունը: Սակայն IFO ինդեքսի գլխավոր գործոնը տնտեսական սպասումներն են:

Գերմանիայում առանձնացվում են 4 ինդեքսներ, որոնց հիման վրա իրականացվում է կանխատեսում տնտեսական կենսապարբերաչափաների վերաբերյալ: Դրանք են՝ IFO, ESIN, PMI և ZEW²³:

Օրինակ, IFO ինդեքսի (գործարարության և ավատեսության ինդեքս) միջոցով գնահատվում է Գերմանիայում արդյունաբերության զարգացվածության մակարդակը, արդյունահանվող արտադրանքների ներմուծման և արտահանման գները, զբաղվածությունը, նյութական պաշարների առկայությունը և այլն: Եթե IFO ինդեքսը գնահատվում է 100-ից ցածր, նշանակում է, որ Գերմանիայի տնտեսության զարգացման մակարդակը սկսում է դանդաղել՝ գործոնների բացասական ազդեցության արդյունքում²⁴:

²¹ file:///C:/Documents%20and%20Settings/Fg/My%20Documents/Downloads/KT_08_15_ee.pdf

²² <https://www.cesifo-group.de/ifoHome/facts/Survey-Results/Business-Climate/Next-internet-publication-date.html>

²³ Felix P. Hüfner and Michael Schröder, «Forecasting Economic Activity in Germany – How Useful are Sentiment Indicators?». Zentrum für Europäische Wirtschaftsforschung GmbH Centre for European Economic Research. Discussion Paper No. 02-56. September 2002. pp. 3-4 /14p./

²⁴ file:///C:/Documents%20and%20Settings/Fg/My%20Documents/Downloads/KT_08_15_ee.pdf

Իսկ եթե այդ ինդեքսը 100-ից բարձր է, նշանակում է, որ Գերմանիայի տնտեսությունն ունի նկատվում են դրական փոփոխություններ, տնտեսական աճը կայունանում է, գործարար ակտիվությունը բարձանում է եվրոյի դիրքերն ամրապնդվում են և այլն²⁵:

IFO ինդեքսը հրապարակվում է յուրաքանչյուր ամիս, դրանով իսկ ազդելով գործարարների վարքագծային դրսևորման վրա: Արդյունքներն ամփոփվում են գործարարների շրջանակներում իրականացված հարցումների արդյունքում նախապես մշակված 12 հարցերի ամփոփման ժամանակ: Հարցերի պատասխանները խմբավորում են 3 խմբերում՝ «լավ», «բավարար» կամ «վատ», որոնք ամփոփ ձևով ներկայացնում են Գերմանիայի տվյալ ամսվա գործարար միջավայրի վիճակը՝ այն բնութագրելով որպես «առավել բարենպաստ, «առավել անբարենպաստ կամ «առանց փոփոխությունների»: Քանի որ եվրոմիության երկրների համեմատ Գերմանիան ունի բավականին զարգացած տնտեսություն՝ ԵՄ երկրների ՀՆԱ-ի շուրջ 25%-ը կենտրոնացված է Գերմանիայում, ուստի, գործարար միջավայրի վստահության ինդեքսն այդ երկրում ցույց է տալիս հենց տնտեսության վիճակը՝ բոլոր ոլորտներում: Բացի այդ, գործարար միջավայրի վստահության ինդեքսն հաշվարկելիս Գերմանիայի հետազոտական կենտրոնները հաշվի են առնում նաև համաշխարհային տնտեսության ազդեցությունը այդ երկրի տնտեսության և գործարար ակտիվության վրա: Այդ նպատակով, Գերմանիայում յուրաքանչյուր ամիս շուրջ 2000 կազմակերպությունների միջև իրականացվում են հարցումներ՝ բացահայտելու, թե յուրաքանչյուր կազմակերպությունն որ ոլորտում է մասնագիտացված և, արդյոք, ունի համեմատական առավելություններ:²⁶

Տնտեսության զարգացման ներկա պայմաններում գործարար միջավայրի վարկանիշի վրա ազդում են տարբեր գործոններ, որոնք հնարավորություն են տալիս կամ բարձրացնել տվյալ երկրի և տնտեսության մրցունակությունը կամ այն դարձնել ոչ նախընտրելի ներքին և օտարերկրյա ներդրողների համար: Հետևաբար, ցանկացած երկրում անհրաժեշտ է ձևավորել մրցունակ

²⁵ <https://www.cesifo-group.de/ifoHome/facts/Survey-Results/Business-Climate/Next-internet-publication-date.html>

²⁶ file:///C:/Documents%20and%20Settings/Fg/My%20Documents/Downloads/KT_08_15_ee.pdf

տնտեսություն և ոլորտներ, որտեղ ինստիտուցիոնալ զարգացման հիմքերը կխթանեն ներդրումային ծրագրերի իրագործմանը՝ միևնույն ժամանակ շարունակական բարեփոխումներ իրականացնելով ոչ ֆորմալ հարաբերությունների, կոռուպցիայի կրճատման համար²⁷:

Ըստ Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի զեկուլյցի տվյալների՝ յուրաքանչյուր տարի վերլուծվում և գնահատվում են 189 երկրների գործարար միջավայրի վարկանիշը կամ գործարարությանը զբաղվելու վարկանիշը: Այն ցույց է տալիս գործարարության ծախսերը կամ վարչարարական բեռը: Վերջիններս տարբերվում են 189 երկրներում՝ ըստ արդյունքային ցուցանիշների:

Ուստի, գործարար միջավայրի բարելավման ինստիտուցիոնալ հիմքերը պայմանավորված են գործարար հատվածի մուտքի և ելքի տարբեր արգելքների վերացմամբ²⁸: Օրինակ, տարբեր երկրներում դրանք գնահատվում են միջազգային կառույցների կողմից, ինչպիսիք են՝ Բլոմբերգը (Best for doing business)²⁹, Համաշխարհային բանկը (doing business)³⁰: Իհարկե, միջազգային կառույցների կողմից գործարար միջավայրի վարկանիշային գնահատման հիմքում ընկած է Երևանդո դե Սոտոյի գործարարության վրա ընկնող գործառնական ծախսերի տեսությունը^{31, 32}: Երևանդո դե Սոտոն Պերույում գնահատել է տարբեր ընկերություններում հագուստի արտադրության վրա ընկնող ժամանակի և վարչարարական ծախսերը³³:

Չարգացնելով Երևանդո դե Սոտոյի տեսությունը՝ Համաշխարհային բանկը սկսած 2004 թվականից մինչ օրս իրականացնում է գործարարությանը զբաղվելու վարկանիշային գնահատում 189 երկրների տարբեր ոլորտներում ներգրավված

²⁷ Нуреев Р. М., Ахмадеев Д. Р. Классификация неформальной занятости и методы ее оценки // TERRA ECONOMICUS. – 2015. – Т. 13. – С. 14–29.

²⁸ Uwe D., Frijters P., Winter-Ebmer R. Reducing Start-up Costs for New Firms: The Double Dividend on the Labor Market // Scandinavian Journal of Economics. – 2006. – N 108. – P. 317–337.

²⁹ <http://www.bloomberg.com/slideshow/2014-01-21/best-countries-for-business-2014.html>

³⁰ <http://www.doingbusiness.org/data/good-practice>


³¹ Нуреев Р. М. Очерки по истории институционализма. – 2-е изд. – Ростов н/Д. : Изд-во «Содействие-XXI век», 2014. С.322-342.

³² Barseghyan L. Entry Costs and Cross-Country Differences in Productivity and Output // Journal of Economic Growth. – 2008. – N 13 (2). – P. 145–67.

³³ Сото Э. де. Загадка капитала. – М. : Олимп-Бизнес, 2004.

ընկերությունների համար: Այդ գեկույցի արդյունքները հնարավորություն են տալիս տվյալ և ավագույն և վատթարագույն երկրների միջև կատարել համեմատական գնահատում, և տվյալ երկրում բարենպաստ գործարար միջավայրի ձևավորման համար կիրառելի դարձնել արագընթաց աճ ունեցող երկրների փորձը, ինչպես նաև հիմնավորել տվյալ երկրում տնտեսական բարեփոխումների անհրաժեշտությունը³⁴:

Այսպես, ցանկացած երկրում, այդ թվում նաև՝ ՀՀ-ում գործարար միջավայրի կարգավորումն իրականացվում է հետևյալ կերպ³⁵.



Գծապատկեր 1.2.1-ի համաձայն գործարար միջավայրի զարգացման համար անհրաժեշտ է կրճատել բիզնեսի մուտքի արգելքները, ինչպիսիք են՝ գրանցումն ու աշխատողների ընդունումը, այնուհետև՝ իրականացնել ինստիտուցիոնալ բարեփոխումներ, ինչպիսիք են՝ շինարարության թույլտվության, էլեկտրաէներգիայի կայանների միացման, սեփականության

³⁴ Գործարարությանը զբաղվելը Հայաստանում 2004-2015թթ. <http://www.doingbusiness.org/>
³⁵ Calderon C., Chong A., Leon G. Institutional Enforcement, Labor-Market Rigidities, and Economic Performance // Emerging Markets Review. – 2007. – N 8(1). – P. 38–49
³⁶ Հիմք է ընդունվել «Գործարարությանը զբաղվելը աշխարհում» գեկույցի տվյալները 2004-2015թթ. <http://www.doingbusiness.org/>

գրանցման ընթացակարգերի պարզեցումն ու վարչարարական ռիսկերի վերացումը: Գրեթե բոլոր երկրներում բավականին խնդրահարույց են, այսպես ասած, «սարդային գործարքները», ինչպիսիք են՝ հարկերի վճարումը, միջսահմանային առևտուրը, ինչպես նաև առկա են ֆինանսավորման խնդիրներ՝ վարկավորումը, ներդրողների շահերի պաշտպանությունը:

Համաշխարհային բանկը յուրաքանչյուր տարի ավելացնում է գործարարությունը զբաղվող երկրների ցանկը և ընթացակարգերի թիվը՝ 2004 թվականին 133 երկրներից 2015թ. հասցնելով 189 երկրների, իսկ 2004թ. 5 ընթացակարգերից 2015թ-ին դրանք հասցնելով 10-ի (Աղյուսակ 1.2.1):

**«Գործարարությունը» երկրներն ու ընթացակարգերը
2004-2015թթ.³⁷**

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Երկրներ	133	135	155	175	178	181	183	183	183	185	189	189
Ընթացակարգեր	5	7	10	10	10	10	10	10	10	10	10	10

2006-2015թթ. «Գործարարությունը» գեկույցում ներկայացված են 10 ընթացակարգեր.

1. բիզնեսի գրանցումը,
2. շինարարական թույլ տվող թյունը,
3. Էլեկտրաէներգիայի կայանների միացումը,
4. սեփականության գրանցումը,
5. վարկերի ստացումը,
6. ներդրողների շահերի պաշտպանությունը,
7. հարկերի վճարումը,
8. միջսահմանային առևտուրը,
9. պայմանագրերի կիրարկումը,
10. բիզնեսի լուծարումը և սնանկության ճանաչումը:

Ներկայացված 10 ընթացակարգերի ամփոփման արդյունքում տրվում է տվյալ երկրի գործարար միջավայրի վարկանիշային գնահատականը, ինչը նաև ապագայում ստեղծում է հնարավորություններ և նախադրյալներ՝ օտարերկրյա ներդրողների ներգրավման, ներդրումային նոր ծրագրերի իրագործման և կայուն տնտեսական աճի ապահովման համար³⁸:

Չնայած դրական փոփոխություններին, դեռևս հանրապետությունում գոյություն ունեն բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնք կաշկանդում են գործարար միջավայրի զարգացմանը: Ի թիվս դրանց, կարելի է ընդգծել հարկերի վճարման, միջսահմանային առևտրի, վարկերի ստացման, պայմանագրերի կիրարկման, ներդրողների շահերի պաշտպանության հետ կապված խնդիրները, որոնք պայմանավորված են նաև կոռուպցիոն ռիսկերով, սովետային տնտեսությանը, գործազրկության բարձր մակարդակով,

³⁷ Հիմք է ընդունվել «Գործարարությանը զբաղվելը աշխարհում» գեկույցի տվյալները 2004-2015թթ. <http://www.doingbusiness.org/>

³⁸ Djankov S., Freund C., Cong S. Pham. Trading on Time // Review of Economics and Statistics. – 2010. – N 92 (1) – P. 166–173.

եկամուտների անհավասարաչափ բաշխմամբ, հարկային վարչարարությունները և քաղաքական դիրքորոշմամբ, անհավասար մրցակցային պայմաններով և այլն:

Աղյուսակ 1.2.2

2007-2015թթ. «Գործարարությունները գեկույցի» զեկույցի

Ցուցանիշներ	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Բիզնես սկսելու մեկնարկային պայմաններ	84,71	84,77	84,97	90,4	90,34	94,82	94,86	97,51	97,77
Սեփականության գրանցում	92,89	92,95	93,17	93,25	92,8	92,85	92,96	93	93,03
Հարկերի վճարում	41,62	40,53	40,62	40,62	40,6	53,57	71,42	74,46	82,10
Շինարարության թույլ տվող անտրամադրում	46	59,7	63,92	65,34	64,72	73,99	73,7	73,64	73,78
Վարկերի հասանելիություն	37,5	68,75	68,75	68,75	68,75	75	75	65	65
Միջսահմանային առևտուր	54,7	61,36	56,81	56,02	63,98	63,94	64,68	64,46	68,81
Էլեկտրոններգիայի դյուրիանություն	-	-	-	49,45	49,29	49,37	55,98	63,99	64,02
Ներդրողների շահերի պաշտպանվածություն	50	50	50	50	50	50	63,33	60	60
Պայմանագրերի կիրառում	58,2	58,2	59,24	59,24	59,24	51,45	51,45	53,33	53,33

արդյունքները ՀՀ-ում³⁹

Հայաստանի Հանրապետությունում 2004 թվականից մինչ օրս կատարվել են ինստիտուցիոնալ բարեփոխումներ, որոնք կարելի է գնահատել դրական և կայացած⁴⁰:

Հայաստանում, ըստ Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի զեկույցի, 2012-2015 թթ. առավել դյուրին է դարձել հարկերի վճարման գործընթացը՝ միասնական եկամտային հարկի ներդրման արդյունքում, որն իր մեջ ներառում է գործատուների և աշխատողների սոցիալական վճարները և անհատների կողմից վճարվող եկամտահարկը: Աղյուսակով ներկայացնենք 2007-2015թթ. «Գործարարությունները գեկույցի» զեկույցի շարժումները Հայաստանի Հանրապետության ցուցանիշները:

Օրինակ՝ ինչպես ցույց են տալիս աղյուսակ 1.2.2-ի տվյալները,

³⁹ Հիմք է ընդունվել «Գործարարության գեկույցը աշխարհում» զեկույցի տվյալները 2007-2015թթ.

<http://www.doingbusiness.org/>

⁴⁰ Հեղինակային մոտեցում:

ՀՀ-ում բիզնես սկսելու մեկնարկային պայմանների, սեփականության գրանցման, հարկերի վճարումների, շինարարության թույլ տվողական տրամադրման, վարկերի հասանելիության, միջազգային առևտուր վարելու դյուրինության, ներդրողների պաշտպանվածության և պայմանագրերի կիրառման ընթացակարգերն ազդում են գործարար միջավայրի վրա: Մասնավորապես, 2007-2015թթ. հարկերի վճարումները, վարկերի հասանելիությունը և միջազգային առևտուր վարելու դյուրինությունն առավել էական ազդեցություն են ունեցել «Գործարարությունը զբաղվելու» զեկույցի արդյունքների վրա:

Պետք է նշել, որ ՀՀ հարկերի դրույքաչափերը բավականին բարձր են այլ երկրների հետ համեմատած, և դրանք բացասաբար են ազդում գործարար միջավայրի զարգացման վրա: Իհարկե, այդ դեպքում չպետք է անտեսել նաև ներդրողների շահերի պաշտպանության կարևորությունը: Գտնում ենք, որ անհրաժեշտ է մշակել օրենսդրական և իրավական այնպիսի համակարգ, որը թույլ կտա ՀՀ տնտեսությունը դարձնել գրավիչ հատկապես օտարերկրյա ներդրումների համար:

Այդ առումով, չպետք է անտեսել նաև տարածաշրջանային և հետանցումային երկրներում իրականացվող ինտեգրացիոն գործընթացները: Մասնավորապես, Եվրասիական տնտեսական միության ստեղծման հիմնական նպատակը անդամ պետությունների կայուն զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումն է, որը ենթադրում էր բնակչության կենսամակարդակի բարելավում, կապիտալի, աշխատուժի, ապրանքների և ծառայությունների միասնական շուկայի ձևավորում, ազգային տնտեսությունների մրցունակության բարձրացում: Ինտեգրացիայի բարձր մակարդակը երաշխավորում է կապիտալի, աշխատուժի, ապրանքների և ծառայությունների ազատ տեղաշարժը, տնտեսության առանցքային ճյուղերի՝ էներգետիկայի, արդյունաբերության, գյուղատնտեսության և տրանսպորտի, համաձայնեցված քաղաքականության իրականացումը:

ԵՍՏ անդամ երկրների առանցքային նպատակներից մեկը գործարարությունը զբաղվելու պայմանների ներդաշնակեցումն է:

Համաշխարհային բանկը և Միջազգային ֆինանսական կորպորացիան հրապարակում են «Doing Business» տարեկան զեկույցները, որոնցում ամփոփ ներկայացվում են աշխարհի 189 երկրներում գործարարությանը զբաղվելու 10 ցուցանիշներ⁴¹: Դրանց հաշվարկումը հնարավորություն է տալիս բավականին հստակ պատկերացում կազմել ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը խոչընդոտող գործոնների մասին: Աղյուսակով ներկայացնենք 2015թ. ԵԱՏՄ անդամ երկրների դիրքերը «Գործարարությունը զբաղվելը» զեկույցի վարկանշային աղյուսակ 1.2.3-ում:

Աղյուսակ 1.2.3

Հայաստանի Հանրապետությունը և տարբեր երկրների «Գործարարությունը զբաղվելը» զեկույցի վարկանշային աղյուսակում 2015 թ.⁴²

1	Սինգապուր	23	Լատվիա	72	Մոնղոլիա
2	Նոր Չեչանդիա	24	Լիտվա	77	Ղազախստան
3	Հոնկոնգ	45	Հայաստան	80	Ադրբեջան
4	Դանիա	50	Կաթար	96	Ուկրաինա
5	Հարավային Կորեա	51	Սլովենիա	99	Շրի Լանկա
6	Նորվեգիա	55	Թուրքիա	102	Ղրղզստան
7	ԱՄՆ	57	Բելոռուս	141	Ուզբեկստան
8	Մեծ Բրիտանիա	59	Լյուքսեմբուրգ	156	Իրաք
15	Վրաստան	62	Ռուսաստան	166	Տաջիկստան
17	Էստոնիա	63	Մոլդովա	189	Էրիթրեա

Աղյուսակ 1.2.3-ի տվյալների համաձայն 2015 թվականին «Գործարարությունը զբաղվելը» վարկանշային սանդղակում առաջին հորիզոնականը պատկանում է Սինգապուրին: Առաջին տասնյակում են գտնվում նաև Հոնկոնգը, Նոր Չեչանդիան, Ամերիկայի Միացյալ Նահանգները, Դանիան, Հարավային Կորեան, Նորվեգիան, Մեծ Բրիտանիան, Ֆինլանդիան և Ավստրալիան: Իսկ ԵԱՏՄ անդամ երկրների ռազմավարական զարգացման ծրագրի մարտահրավերն է հայտնվել վարկանշային աղյուսակի 50 լավագույն երկրների ցանկում:

Հայաստանը 2015 թվականին գործարարությունը զբաղվելու դյուրինությամբ 189 երկրների շարքում զբաղեցրել է 45-րդ տեղը՝ անցած տարվա համեմատ դիրքը բարելավելով 4 հորիզոնականով:

⁴¹ <http://www.doingbusiness.org/>

⁴² <http://russian.doingbusiness.org/rankings>

Բելոռուսը, պահպանելով իր դիրքերը, զբաղեցրել է 57-րդ տեղը: Ռուսաստանը զբաղեցրել է 62-րդ տեղը՝ անցած տարվա համեմատ բարելավվելով իր դիրքը: Ղազախստանի դիրքը «Գործարարության զբաղվելը» 2015-ի վարկանշային աղյուսակում նվազեցրել է իր դիրքը 1 հորիզոնականով՝ զբաղեցնելով 77-րդ տեղը:

Ղրղզստանը զբաղեցնում է 102-րդ տեղը: «Գործարարության զբաղվելը» գեկոլյցում վարկանշային դիրքի փոփոխությունն արձանագրում է, թե անցած մեկ տարվա ընթացքում տվյալ երկիրը ինչ առաջընթաց է գրանցել բարեփոխումների մասով և որքանով է բարելավել գործարար միջավայրը (Աղյուսակ 1.2.4):

Աղյուսակ 1.2.4

**ԵՍՏՄ անդամ երկրների վարկանշային գնահատականը՝
ըստ «Գործարարության զբաղվելը» գեկոլյցի 2015 թ.⁴³**

<i>Ցուցանիշներ</i>	<i>Հայաստան</i>	<i>Բելոռուս</i>	<i>Ղազախստան</i>	<i>Ղրղզստան</i>	<i>Ռուսաստան</i>
Բիզնես սկսելու մեկնարկային պայմանները	4	40	55	9	34
Սեփականության գրանցումը	7	3	14	6	12
Հարկերի վճարումները	41	60	17	136	49
Շինարարության թույլ տվող անտրամադրումը	81	51	154	42	156
Վարկերի հասանելիությունը	36	104	71	36	61
Էլեկտրականության միացումը	131	148	97	168	143
Պայմանագրերի կիրառումը	119	7	30	56	14
Ներդրողների պաշտպանվածությունը	49	94	25	35	100
Միջազգային առևտուր վարելու դյուրինությունը	110	145	185	183	155
Անվճարունակության հարցերի կարգավորումը	69	68	63	157	65

Ցուցանիշներից 5-ի մասով Հայաստանը առաջընթաց է արձանագրել, 3-ով՝ հետընթաց, իսկ 2 ցուցանիշների դիրքերը մնացել են անփոփոխ: Հայաստանը միանգամից 32 կետով բարելավել է իր դիրքը «Հարկերի վճարումներ» ցուցանիշով՝ զբաղեցնելով 41-րդ

⁴³ <http://russian.doingbusiness.org/rankings>

տեղը: «Միջազգային առևտուր վարելու դյուրինությունը
ցուցանիշով առաջընթացը կազմել է 14 կետ՝ 110-րդ տեղ: Հայաստանը
1 կետով առաջընթաց է արձանագրել «Բիզնես սկսելու մեկնարկային
պայմաններ» ցուցանիշով և զբաղեցրել է 4-րդ տեղը: Մինչև 2010
թվականը «Էլեկտրականության միացում» ցուցանիշի փոխարեն
հաշվարկվում էր աշխատողների ներգրավվածությունը բնութագրող
ցուցանիշը: Ներկայումս գոյություն ունեն բազմաթիվ օրենքներ,
օրենսդրական ակտեր, որոնք պաշտպանում են վարձու աշխատողների
շահերը: 2010 թվականից սկսած հաշվարկվում է
«Էլեկտրականության միացում» ցուցանիշը: «Շինարարության
թույլ տվության տրամադրում» և «Էլեկտրականության միացում»
ցուցանիշներով Հայաստանի առաջընթացը կրկին 1 կետով է՝
համապատասխանաբար 81-րդ և 131-րդ տեղերը: Միաժամանակ՝
Հայաստանը 6 կետով հետընթաց է արձանագրել «Վարկերի
հասանելիություն» ցուցանիշով՝ զբաղեցնելով է 36-րդ տեղը:
Վարկերի հասանելիության սահմանափակումը կարող է լուրջ խնդիր
հանդիսանալ ձեռնարկությունների հետագա զարգացման համար:
«Ներդրողների պաշտպանվածություն» ցուցանիշով հետընթացը
եղել է 1 կետ՝ 49-րդ տեղ: Գործունեության այս ոլորտն ունի
բարելավման առաջնահերթություն: «Անվճարունակության
հարցերի կարգավորում» ցուցանիշով Հայաստանը դիրքը զիջել է 2
կետով և զբաղեցրել 69-րդ տեղը: Բիզնեսն անհնար է առանց
պայմանագրերի կատարման: «Սեփականության գրանցում» և
«Պայմանագրերի կիրառում» ցուցանիշներով երկրի դիրքն անփոփոխ
է մնացել. այն զբաղեցնում է համապատասխանաբար 7-րդ և 119-րդ
տեղերը:

Բելոռուսը լավագույն արդյունքներ է գրանցել
«Սեփականության գրանցում» և «Պայմանագրերի կիրառում»
ցուցանիշների մասով՝ զբաղեցնելով համապատասխանաբար 3-րդ և 7-
րդ տեղերը: «Միջազգային առևտուր վարելու դյուրինություն»
ցուցանիշի մասով զբաղեցրել է 145-րդ տեղը, ինչը նշանակում է, որ
երկիրը դեռ բավականին անելիքներ ունի միջազգային առևտրի
պայմանները բարելավելու համար:

Ռուսաստանը «Շինարարության թույլ տվության տրամադրում»

ցուցանիշի մասով զբաղեցնում է 156-րդ տեղը, որը վատագույնն է բոլոր տասը ցուցանիշներից: Սա փաստում է այն մասին, որ առաջիկա տարիների ընթացքում անհրաժեշտ է իրականացնել զգալի բարեփոխումներ՝ բարելավելու երկրի դիրքը աղյուսակում: «Սեփականության գրանցում» ցուցանիշի մասով Ռուսաստանը զբաղեցնում է 12-րդ տեղը՝ նախորդ տարվա համեմատ բարելավելով իր դիրքերը 5 հորիզոնականով: «Պայմանագրերի կիրառում» ցուցանիշի մասով Ռուսաստանը 4 հորիզոնականով զիջել է իր դիրքերը՝ զբաղեցնելով 14-րդ տեղը (Աղյուսակ 1.2.4):

Այսպիսով, ԵԱՏՄ անդամ երկրներից առաջատար դիրքեր են զբաղեցնում Հայաստանը, Բելառուսը և Ռուսաստանը, սակայն բոլոր երկրներն էլ դեռ զգալի անելիքներ ունեն ներկայացված ցուցանիշների բարելավման գործում:

ԵԱՏՄ անդամ երկրների հետագա ռազմավարությունը պետք է ուղղված լինի հարկային քաղաքականության համաձայնեցմանը, ազգային տնտեսությունների խթանմանը, այդ թվում հարկային օրենսդրության բարելավմանը՝ հաշվի առնելով հարկային ինքնիշխանությունն ու իրավաբանական անձանց մրցակցությունը: Վերը նշված միջոցառումները կնպաստեն ձեռնարկությունների մրցունակության բարելավմանն ու կվերացնեն հարկային համակարգում առաջացող խոչընդոտները, որոնք իրենց ազդեցությունն են ունենում ԵԱՏՄ անդամ երկրների միջև տնտեսական հարաբերությունների զարգացման վրա:

1.3 Գործարար միջավայրի վրահարկային համակարգի ազդեցության գնահատման մոտեցումները

Գործարար միջավայրի վրա հարկային համակարգի ազդեցության գնահատման խնդիրը հանդիսանում է ցանկացած երկրի տնտեսական քաղաքականությունն գերակայություններից մեկը: Ընդ որում, դրանում իրականացված բոլոր միջոցները կապված են պետական բյուջեում հարկային եկամուտների ապահովման պետական

ծախսերի օպտիմալ բաշխման հետ: Պետական բյուջեի հիմնական եկամուտ հանդիսացող հարկերի հետ մեկտեղ պետական ծախսերը հանդես են գալիս՝ որպես պետության կողմից տնտեսության զարգացման վրա ազդող գործիք: Պետական ծախսերի համակարգի միջոցով տեղի է ունենում ազգային եկամտի էական մասի վերաբաշխում պետության տնտեսական ու սոցիալական քաղաքականության իրականացման համար⁴⁴:

Այս առումով, տարբեր հետազոտողների մոտ տրվել են տարբեր գնահատականներ: Օրինակ, Լի Ջի հեղինակը ուսումնասիրել է, թե հարկաբյուջետային քաղաքականությունը որքանով արդյունավետ է արձագանքում «երկրորդային ճգնաժամի» (“twin crisis”) շրջանում⁴⁵, և դա ինչպես է ազդում գործարար միջավայրի և տնտեսության զարգացման վրա: Ուայթի կողմից առաջարկված մոտեցումն օգտագործելով՝ հեղինակի կողից առանձնացվել է «երկրորդային ճգնաժամի» 57 դրվագներ⁴⁶: Մեկ այլ հեղինակներ Կիմ Դոնգը և ուրիշների կողմից առաջարկված մեթոդներին հետևելով⁴⁷, Լի Ջին բացահայտել է «երկրորդային ճգնաժամի» տևողությունը, և կատարված ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ հարկաբյուջետային քաղաքականությունը չի ազդում «երկրորդային ճգնաժամի» կրճատման վրա, քանի որ երկարաժամկետ հատվածում հարկային քաղաքականության դիրեկտիվ մեթոդների կիրառման դեպքում տնտեսությունը չի զարգանում և այն բերում է գործարար ակտիվության անկմանը⁴⁸:

Մեկ այլ հեղինակներից Ժու Խոնդոգը գնահատել է հարկային համակարգի դերը տնտեսության զարգացման և գործարար ակտիվության բարձրացման գործում՝ կիրառելով ստոխաստիկ տարբեր մոդելներ և մեթոդներ⁴⁹:

Չարին և ուրիշներ հարկային քաղաքականության և բիզնես գործընթացների մոդելների փոխադարձ կապն ուսումնասիրելով

⁴⁴ Мельников В.Д. Финансы.- А.: Экономика, 2011. – 603с.

⁴⁵ Li Jie, The effectiveness of fiscal and monetary policy responses to twin crisis // Applied – 2013. - №45 (27). –pp. 3904-3913.

⁴⁶ Lieven Baele, Pilar Soriano The Determinants of Increasing Equity Market Comovement: Economic or Financial Integration, pp-3-31

⁴⁷ Kim, Dong Heon, What is an oil shock? Panel data evidence // Empirical – 2012. – № 43 (1). – pp. 121-143.

⁴⁸ White, H. A Heteroscedasticity-Consistent Covariance Matrix Estimator and a Direct Test for Heteroscedasticity // Econometrica. – 1980. – № 48 (4). – pp. 817-838.

⁴⁹ Zhu, Xiaodong. 1992. Optimal fiscal policy in a stochastic growth model. Journal of Economic Theory 58 (2):250–289.

հիմնավորել են, որ հարկային քաղաքականությունն է բերում բիզնեսի արդյունավետության բարձրացմանը⁵⁰:

Տոգել Լուկաս, Ռոեգեր Վերներ, Խերզ Բեյրխարդ հեղինակները⁵¹ վերանայելով ընդհանուր հավասարակշռության միջակայքային դինամիկ մոդելի կանխավարկածը, հարկային համակարգին բնորոշ տնտեսական օրինաչափություններին համաձայն հիմնավորել են այն վարկածը, որ տնտեսության զարգացման վրա ազդում են ոչ միայն պետական ծախսերը, տրանսֆերտները, սպառման ծախսերը, աշխատուժն ու կապիտալը, այլև շատ կարևոր է հարկային համակարգի դերը վերջինիս զարգացման գործում:

Հանսենի, Լարսի, Թոմասի աշխատանքներում արտացոլվում է սահմանափակ և օպտիմալացվող տնային տնտեսությունների նկատմամբ հարկաբյուջետային քաղաքականության դրական ազդեցությունը, այսինքն՝ մի խմբի հարստության մեծացումը, որպես կանոն, նվազեցնում է մեկ այլ խմբի հարստությունը⁵²: Հարկային համակարգում առկա թերություններն ու բացթողումները բերում են հարկային բեռի անհավասարաչափ բաշխմանը, իսկ ոչ օպտիմալ հարկային քաղաքականության դեպքում հարկային բեռի ավելացումն ուղեկցվում է բնակչության հարստության չափավոր միջին աճով և միևնույն ժամանակ բնակչության հարստության առավել մեծ կորուստներով⁵³:

Անաստաչիյ Կարանտունիսի «Հոռետեսական սպասումների կառավարումը և հարկաբյուջետային քաղաքականությունն» թեմայով աշխատությունում⁵⁴ ուսումնասիրվել է օպտիմալ հարկային քաղաքականությունը, համաձայն որի կառավարությունը բախվում է հոռետեսական սպասումները ձևավորող հասարակության վախի հետ, երբ տեղի է ունենում պլանավորված պետական ծախսերի կրճատում կամ պետական բյուջեի սեկվեստոր: Հեղինակը առանձնացրել է երկու դրոյթներ, որոնք ձևավորել են վերջնական արդյունքները:

⁵⁰ Chari, V.V., Lawrence J. Christiano, and Patrick J. Kehoe. 1994. Optimal Fiscal Policy in a Business Cycle Model. *Journal of Political Economy* 102 (4):617–652

⁵¹ Vogel Lukas, Roeger Werner, Herz, Bernhard The Performance of Simple Fiscal Policy Rules in Monetary Union // *Open Economies Review*. – 2013. – № 24 (1), ՏԼ. – pp. 165-196.

⁵² Hansen, Lars Peter, Thomas Sargent, and Thomas Tallarini. 1999. Robust Permanent Income and Pricing. *Review of Economic Studies* 66:873–907.

⁵³ Vogel Lukas, Roeger Werner, Herz, Bernhard The Performance of Simple Fiscal Policy Rules in Monetary Union//*Open Economies Review*.-2013.-№24(1), ՏԼ.-pp. 165-196.

⁵⁴ Karantounias, Anastasios, Managing pessimistic expectations and fiscal policy // *Theoretical Economics*. – 2013. – № 8 (1). – pp. 193-231.

Մի կողմից, կառավարությունն անհավանական հոռետեսական տնտեսական իրավիճակների զարգացմամբ պայմանավորված հարկային աղավաղումների համակենտրոնացման շարժառիթ է ունեցել, մյուս կողմից՝ հասարակության ներքին սպասումները դրդել են նոր շարժառիթներին, որոնք վերափոխվել են պետական պարտքի ռազմավարությունը և նպաստել հավասարակշիռ գների ձևավորմանը⁵⁵:

Սուիզին «Քեյնսականությունն ու հանրային կառավարումը»⁵⁶ աշխատությունում նույնպես առաջնային է հարկային համակարգի դերը տնտեսության զարգացման, պետական կարգավորման գործիքակազմի կիրառման դեպքում:

Յետևաբար, ամփոփելով տարբեր հեղինակների գործարար միջավայրի վրա հարկային համակարգի գնահատման մոտեցումները, կարելի է ավելացնել այն, որ քանի դեռ չի լուծվել համակարգի արդյունավետության բարձրացման խնդիրը, միանշանակ լիարժեք չենք կարող գնահատել դրա դերը գործարար միջավայրի վրա: Այդ խնդրի լուծումը ենթադրում է տարբեր մոտեցումներ, որոնց մեջ, մասնավորապես, կարելի է նշել խնդրի լուծման «որակյալ» մեթոդը: Այն կայանում է ամբողջ հարկային օրենսդրության կառավարման և կատարելագործման մեջ: Կարելի է գնահատել հարկային քաղաքականության արդյունավետությունը տարբեր տեսանկյուններից, հատկապես տնտեսվարող սուբյեկտի և պետության տեսանկյուններից: Պետության հարկային քաղաքականության արդյունավետության գնահատումը ֆիզիկական և իրավաբանական տեսանկյունից գիտական հետաքրքրություն չի ներկայացնում, քանի որ այստեղ գործում են ուղիղ և պարզ տրամաբանություն՝ որքան շատ հարկային հավաքագրում, այնքան վատ: Պետության տեսանկյունից հարկային քաղաքականության գնահատման ժամանակ հնարավոր են վերլուծության երկու չափորոշիչներ.

⁵⁵ Karantounias, Anastasios, Managing pessimistic expectations and fiscal policy//Theoretical Economics.-2013.-№8 (1).-pp. 193-231.

⁵⁶ Sweezy, A. (1972) The Keynesians and Government Policy, 1933–1939, American Economic Review, 62, 2, 116–124.

- հարկային քաղաքականության գնահատում, որն ազդում է տնտեսական համակարգի և գործարար ակտիվության, պետական բյուջեի եկամտային մասի ավելացման վրա,

- հարկային քաղաքականության գնահատում, որն ազդում է պետական բյուջեի եկամտային մասի նվազեցման վրա:

Որպես կանոն, այդ երկու գնահատականները հակադիր են, և ըստ առաջին չափորոշիչի արդյունավետ հարկային քաղաքականությունը, կարող է լինել ընդհանրապես ոչ արդյունավետ, իսկ ըստ երկրորդ չափորոշիչի՝ արդյունավետ: Բացի այդ, նույնիսկ միևնույն չափորոշիչի շրջանակում հարկային քաղաքականությունը չի կարող ունենալ միանշանակ արդյունք, այսինքն՝ տնտեսական գործընթացների ժամանակ կարող են առաջանալ բիզնեսի, պետության և հասարակության շահերի բախումներ և առաջացնել տնտեսական աղավաղումներ:

Տնտեսության զարգացման, հարկային բեռի, հարկային եկամուտների անուղղակի կապն ու դրա օպտիմալ հարաբերակցությունը ենթադրում է, որ անհրաժեշտ է իրականացնել հարկային համակարգում բարեփոխումներ: Որպես կանոն, այդ կապը, ի սկզբանե, ցույց է տրվել «հարկային տնտեսագիտությունում» հայտնի Լաֆֆերի կորի միջոցով, որում ֆունկցիոնալ կախվածությունն գոյություն ունի պետության, հարկային եկամուտների և հարկային բեռի մակարդակի միջև:

Նշենք, որ Լաֆֆերի կորի հասկացությունը գտնվում է հարկային կարգավորման տեսության կենտրոնական տեղում: Ընդ որում, հստակ ուսումնասիրությունները կատարվում են երկու ուղղությամբ,

1. Առաջինը ենթադրում է արտադրական և հարկային գործընթացների մոդելավորում և Լաֆֆերի պարաբոլային կախվածությունից մշակված ձևաչափից տեսական դուրսբերում, այսինքն՝ շեշտը դրվում է, այսպես ասած, «հարկային կորի բեկման էֆեկտի» և դրա առաջացման պայմանների հայտնաբերման վրա:

2. Երկրորդ ուղղությունը կապված է առանձին երկրներում, այսպես կոչված, «Լաֆֆերի կետերի» մեծությունների հաշվարկման հետ: Այս դեպքում տնտեսական համակարգի ֆունկցիոնալ

առանձնահատկություններն իրենց տեղը զիջում են կոնկրետ վիճակագրական տվյալներին և ալգորիթմներին⁵⁷: Մի շարք դեպքերում տեսական ձևաչափերի մշակումը գուցակցվում է էմպիրիկ հաշվարկների հետ, որն ապահովում է առաջին և երկրորդ մոտեցումների միավորումը: Այսպիսի դեպքերը շատ քիչ են և ունեն ցածր արդյունավետություն:

Այդ երկու ուղղությունների շրջանակներում գոյություն ունեն խնդրի վերլուծության մոտեցման տարբերություններ: Պայմանականորեն դրանց կարելի է բաժանել երկու խմբերի.

- առաջին խմբում, որպես կանոն, մշակվում է համակարգի նկարագրական միկրոտնտեսական մոտեցումը⁵⁸, և պայմանականորեն վերցրած մեկ տնտեսվարող սուբյեկտի համար հաշվարկված արդյունքները «պիլոտային մոտեցմամբ» տարածվում են բոլոր տնտեսվարող սուբյեկտների վրայ նքան ժամանակ, մինչև կատարվող վերլուծությունը կհասնի իր ընդհանրական մակարդակին,
- երկրորդ խմբում կիրառվում է սկզբունքային ամփոփ կառուցվածք⁵⁹, ինչը թույլ է տալիս կատարել մակրոընդհանրացումներ և մուտք չգործել տնտեսության ներքին կառուցվածքին:

Վերջին շրջանում ուսումնասիրություններ են կատարվում, որոնցում տրվում են տարբեր գնահատականներ հարկային համակարգի առանձին բաղադրիչների արդյունավետությունը՝ շեշտադրում կատարելով դրանց ազդեցությանը գործարար միջավայրի բարելավման վրա: Այդ ուսումնասիրություններում⁶⁰

⁵⁷ Гусаков С.В., Жак С.В. Оптимальные равновесные цены и точка Лаффера // Экономика и математические методы. 1995. Т. 31. Вып. 4, Балацкий Е.В. Лафферовы эффекты и финансовые критерии экономической деятельности // Мировая экономика и международные отношения. 1997. № 11, Балацкий Е.В. Точки Лаффера и их количественная оценка // Мировая экономика и международные отношения. 1997. № 12, Балацкий Е.В. Налог на имущество фирм и накопление основного капитала // Мировая экономика и международные отношения. 1999. № 3.

⁵⁸ Соколовский Л.Е. Подходный налог и экономическое поведение // Экономика и математические методы. 1989. Т. 25. Вып. 4, Аркин В., Сластников А., Шевцова Э. Налоговое стимулирование инвестиционных проектов в российской экономике. М.: РПЭИ/Фонд Евразия. 1999, Капитоненко В.В. Инфляционный сдвиг налоговой ставки на кривой Лаффера // Экономика и технология: межвузовский сборник научных трудов. М.: РЭА, 1994, Гусаков С.В., Жак С.В. Оптимальные равновесные цены и точка Лаффера // Экономика и математические методы. 1995. Т. 31. Вып. 4.

⁵⁹ Мовшович С.М., Соколовский Л.Е. Выпуск, налоги и кривая Лаффера // Экономика и математические методы. 1994. Т. 30. Вып. 3, Балацкий Е.В. Точки Лаффера и их количественная оценка // Мировая экономика и международные отношения. 1997. № 12, Балацкий Е.В. Налог на имущество фирм и накопление основного капитала // Мировая экономика и международные отношения. 1999. № 3.

⁶⁰ Соколовский Л.Е. Подходный налог и экономическое поведение // Экономика и математические методы. 1989. Т. 25. Вып. 4, Мовшович С.М., Соколовский Л.Е. Выпуск, налоги и кривая Лаффера //

հատկապես առանձնացվում են հարկային համակարգի արդյունավետության բարձրացման միջոցով տնտեսությանը ստեղծված ավելացրած արժեքն ինչ մոլորակի կատիվ արդյունք է տալիս տնտեսական քաղաքականության արդյունավետության, հասարակության բարեկեցության բարձրացման վրա: Օրինակ, ավելացված արժեքի հարկը, շահույթահարկը, եկամտահարկը, գույքահարկն ինչպես կարող են ազդել գործարար միջավայրի բարելավման, տնտեսությանը ավելացրած արժեքի ստեղծման, տնտեսության ոլորտներում եկամտաբերության բարձրացման վրա: Դրա հետ մեկտեղ Լաֆֆերի կորի հասկացությունը, ի սկզբանե, ստեղծվել է ընդհանուր հարկային բեռի օպտիմալացման համար, այսինքն՝ Լաֆֆերի կորի վրա գտնել կետեր հարկային բեռի միջին ցուցանիշի համար: Վերջինս պետք է ընկալել՝ որպես ՅՆԱ-ում պետական բյուջեի հարկային մոլորակի մաս:

Այդ առումով, մշակվել են տարբեր տնտեսաչափական մոդելներ և ձևաչափեր, որոնք այս կամ այն կերպ որոշել են, թե Լաֆֆերի կորի վրա որն է այն օպտիմալ կետը, որը կարող է բերել հարկային եկամուտների ապահովմանը և տնտեսության զարգացմանը: Այդ խնդրի լուծման համար ներկայացնենք այն վարկածը, որ ՅՆԱ-ում արտադրության ծավալը կախված է հարկային բեռից՝

$$\theta = \frac{T}{X},^{61}$$

որտեղ՝

T- բյուջեում հարկային մոլորակի գումարն է:

X(θ) կախվածությունը մոտարկվում է անուղղակի ֆունկցիայով, որի պարամետրերը ենթարկվում են քանակական գնահատման: X(θ) ֆունկցիայի նույնականացումը թույլ կտա հաշվարկել Լաֆֆերի կետերը:

Экономика и математические методы. 1994. Т. 30. Вып. 3, Аркин В., Сластников А., Шевцова Э. Налоговое стимулирование инвестиционных проектов в российской экономике. М.: РПЭИ/Фонд Евразия. 1999, Капитоненко В.В. Инфляционный сдвиг налоговой ставки на кривой Лаффера // Экономика и технология: межвузовский сборник научных трудов. М.: РЭА, 1994, Гусаков С.В., Жак С.В. Оптимальные равновесные цены и точка Лаффера // Экономика и математические методы. 1995. Т. 31. Вып. 4, Балацкий Е.В. Лафферовы эффекты и финансовые критерии экономической деятельности // Мировая экономика и международные отношения. 1997. № 11, Балацкий Е.В. Точки Лаффера и их количественная оценка // Мировая экономика и международные отношения. 1997. № 12, Балацкий Е.В. Налог на имущество фирм и накопление основного капитала // Мировая экономика и международные отношения. 1999. № 3.

⁶¹ Балацкий Е.В. Лафферовы эффекты и финансовые критерии экономической деятельности // Мировая экономика и международные отношения. 1997. № 11.

Լաֆֆերի կորի առաջին կետը պայմանականորեն նշանակենք θ^* տառով, որի դեպքում արտադրական կորը հասնում է իր $X = X(\theta)$ առավելագույն արժեքի այն ժամանակ, երբ տեղի են ունենում հետևյալ պայմանները՝ $\partial X(\theta^*)/\partial \theta = 0, \partial^2 X(\theta^*)/\partial \theta^2 < 0$ [39]

Լաֆֆերի երկրորդ կետը պայմանականորեն նշանակենք θ^{**} , որի դեպքում այսպես ասած, «հարկային կորը»՝ $T = T(\theta)$ հասնում է իր առավելագույն արժեքի այն ժամանակ, եթե տեղի ունենում հետևյալը՝ $\partial T(\theta^*)/\partial \theta = 0, \partial^2 T(\theta^*)/\partial \theta^2 < 0$:

Կարելի է ասել, որ Լաֆֆերի առաջին կետը տնտեսական առումով նշանակում է հարկային բեռի այն սահմանը, որի ընթացքում արտադրական համակարգը չի անցնում անկման շրջանը: Լաֆֆերի երկրորդ կետը ցույց է տալիս հարկային բեռի այն մեծությունը, որի շրջանակից դուրս հարկային մուտքերի ծավալի մեծացումը հնարավոր չէ:

Ընդհանուր առմամբ դրված խնդիրը կարելի է լուծել տնտեսաչափական մեթոդների միջոցով, որոնց հիմքում ընկած է այն դրույթը, որ արտադրության ծավալը ոչ ուղղակիորեն է կախված հարկային բեռից: Այդ դեպքում, ՅՆԱ-ի ծավալը բավական է մոտարկել հետևյալ բազմանդամային ռեգրեսիայի միջոցով [108].

$$X = \sum_{i=0}^m \beta_i \theta^i, \quad (1) \text{ որտեղ } \beta_i -$$

հետադարձ դիսամիկ շարքերի հիման վրավիճակագրական գնահատման ենթակա պարամետրերն է:

Հաշվի առնելով բանաձևը և հարկերի ծավալների մեծությունը [108]՝

$$T = \theta X, \quad (2)$$

կարելի գրել հետևյալ հարաբերակցությունը [108]՝

$$T = \beta_0 \theta + \sum_{i=1}^m \beta_i \theta^{i+1} : \quad (3)$$

Այս ուսումնասիրությունը կատարելու համար պետք է ներկայացնել երկու «սկզբնական» ցուցանիշները՝ T և X դիսամիկ

շարքերի տեսքով: Իմանալով այդ երկու մեծությունները՝ ըստ բանաձև (2)-ի կարելի հաշվարկել երկրորդային ցուցանիշը, ինչպիսին է $\theta - \bar{\epsilon}$, մեծությունը: Հետագայում հետազոտությունների արդյունքում որոնվում է համապատասխան մակարդակի բազմանդամ (1): Ցանկալի է, որ այն լինի քառակուսային կամ խորանարդային Φ ունկցիայի տեսքով, քանի որ բազմանդամի ավելի բարձր կարգը կարող է խոչընդոտել Լաֆֆերի կետի որոնմանը:

Բանաձև (1)-ը ունի մի շարք առանձնահատկություններ: Նախ, β_i պարամետրերի ստացման համար անհրաժեշտ է ունենալ վիճակագրական առումով «երկար» ու «լավ» դինամիկ շարքեր: Երկրորդ, β_i պարամետրերը անընդհատ են ժամանակի մեջ, ինչը բերում է Լաֆֆերի կետերի կայունության: Դա այդքան էլ իրատեսական չի կարող ներկայացնել տնտեսական իրավիճակը և դրանում տեղի ունեցող փոփոխությունները, քանի որ ավելի ճիշտ կլիներ ենթադրել, որ Լաֆֆերի կետերը հանդիսանում են ժամանակի մեջ «լողացող» մեծություններ:

Պետք է նշել, որ այս դեպքում լուծվում է միայն տեխնիկական, գործիքային խնդիրը՝ առանց հաշվի առնելու ներհամակարգային տնտեսական կապերը: Համակարգի Φ ունկցիոնալ հատկությունների ակնհայտ մոդելավորում չի կատարվում, չնայած դրանք անուղղակի կախվածություն մեջ են (1): [39]

Այլ ընտրանքային մոտեցումների շարքին կարելի է դասել Լաֆֆերի կորի կետերի մոտարկման մեթոդները, որոնք սկզբունքորեն տարբերվում են ինտերվալային մոտարկման վրա հիմնված Էկոնոմետրիկ մեթոդներից: Այս դեպքում, յուրաքանչյուր մեկնարկային կետի համար կառուցվում է իր Φ ունկցիան $X = X(\theta)$ պարամետրերին համապատասխան իմաստով: Քանի որ Φ ունկցիայի պարամետրերի քանակը կարող է լինել մեկից շատ, դրանց միանշանակ գնահատման համար անհրաժեշտ է օգտագործել ժամանակի մեջ ընդմիջումների աճի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն: Հաշվի առնելով հարկային բեռի և արտադրության ծավալի անուղղակի կապը՝ որպես մոտարկման

Ֆունկցիա կարելի օգտագործել քառակուսային բազմանդամ: Այս տեղ հնարավոր են երկու տարբերակներ՝ ընդհանրական եռապարամետրային և պարզ երկպարամետրային: Դրանք կարելի է դիտարկել առանձին-առանձին:

1. *Եռապարամետրային մեթոդ*: Այս մեթոդի հիմքում ընկած է եռապարամետրային քառակուսային ֆունկցիայով տնտեսական աճ գործընթացի մոտարկումը, որտեղ որպես փաստարկ հանդես է գալիս հարկային բեռը [109].

$$X = \alpha + \beta\theta + \gamma\theta^2, \quad (4)$$

որտեղ՝

α, β և γ - գնահատման ենթակա պարամետրերն են:

Այդ դեպքում համապատասխան (2)-ի հարկային մուտքերի գումարը կհաշվարկվի հետևյալ կերպ.

$$T = \alpha + \beta\theta^2 + \gamma\theta^3: \quad (5)$$

ՅՆԱ-ի ծավալը կախված է հարկային բեռի մակարդակից, ընդ որում այդ կախվածությունը ցույց է տրվել բանաձև (4)-ում: Բանաձև (4)-ը բավական չէ այդ երեք պարամետրերի ստույգ որոշման համար, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է կազմել այդ պարամետրերը պարունակող ևս երկու հավասարումներ: Այդ հավասարումները կարելի է կազմել բանաձևեր (4)-ից և (5)-ից անցում կատարելով դրանց ածանցյալ վիճակին [109].

$$\Delta X = (\beta + 2\gamma\theta)\Delta\theta, \quad (6)$$

$$\Delta T = (\alpha + 2\beta\theta + 3\gamma\theta^2)\Delta\theta: \quad (7)$$

Անցումը կատարելիս բանաձևեր (4)-ից և (5)-ից դեպի բանաձևեր (6)-ի և (7)-ի ենթադրվել է, որ θ և X փոփոխականների ածանցյալները բավարար մոտարկվում են վերջնական տարբերություններին. $\partial X \sim \Delta X$; $\partial T \sim \Delta T$; $\partial \theta \sim \Delta \theta$: Այդպիսի ենթադրությունը ուսումնասիրվող դեպքի համար հանդիսանում է լիովին ընդունելի: Յետևյալ մեծությունները ΔX ; ΔT ; $\Delta \theta$ նշանակում են երկու հաշվարկային կետերի հավելած ընտրված ժամանակաշրջանի համար (տարի, ամիս), այսինքն՝ $\Delta T_t = T_{t+1} - T_t$, $\Delta \theta_t = \theta_{t+1} - \theta_t$, որտեղ t -ն հանդիսանում է ժամանակի ինդեքսը:

Այս պիստով, հավասարում (4)-ը նկարագրում է «կետային» տնտեսական աճ, այսինքն՝ կոնկրետ տժամանակի համար, իսկ (6) և (7) հավասարումները արտացոլում են արտադրության ծավալի և հարկահավաքման «ժամանակահատվածային» աճը, որն ընդգրկում է t և (t+1) հաշվարկային կետերի միջանկյալ հատվածը: Համապատասխան մոտեցմամբ (4) և (5) հավասարումները ցույց են տալիս արտադրական և ֆիսկալային կորերը, իսկ (6) և (7) հավասարումները, համապատասխանաբար, ամրագրում են դրանց կորությունը՝ թույլ տալով ընտրել նշված խմբերից հայցվող ֆունկցիոնալ կախվածություններ:

Հաշվարկման այսպիսի սխեման հիմնված է (4), (6) և (7) հավասարումների համակարգերի կազմման և α, β, γ պարամետրերի լուծման վրա, որը թույլ է տալիս բնութագրել այս սխեման՝ որպես վերլուծական կամ հանրահաշվական: (4), (6) և (7) համակարգերի լուծումը գնահատվող պարամետրերի համար տալիս է հետևյալ բանաձևերը [109].

$$\gamma = \frac{\Delta T / \Delta \theta - X - \theta(\Delta X / \Delta \theta)}{2\theta^2}, \quad (8)$$

$$* \quad \alpha = X - \theta[\Delta X / \Delta \theta - \gamma\theta]: \quad (10)$$

(4) և (5) ֆունկցիաների պարամետրերի նույնականացումը թույլ է տալիս տարրական ձևով գտնել Lաֆֆերի կետերը: Lաֆֆերի առաջին կարգի կետը θ^* , երբ $\partial X / \partial \theta = 0$, որոշվում է հետևյալ բանաձևով [109].

$$\theta^* = -\frac{1\beta}{2\gamma}, \quad (11)$$

Իսկ Lաֆֆերի երկրորդ կարգի հավասարման կետը θ^{**} , երբ $\partial^2 T / \partial \theta^2 = 0$, գտնվում է հետևյալ քառակուսային հավասարման լուծման մեջ [109].

$$3\gamma\theta^2 + 2\beta\theta + \alpha = 0 \quad (12)$$

Արդյունքում ստացվում է՝

$$\theta^{**} = \frac{-\beta \pm \sqrt{3\alpha\gamma - \beta^2}}{3\gamma}: \quad (13)$$

(4) և (5) \$ֆուսկցիաների առանձնահատկությունների հետագա ուսումնասիրությունները թույլ կտան որոշելու, թե արդյոք գտնված անշարժ կետերը հանդիսանում են ԼաՖֆերի կետեր: Եթե անշարժ կետերը կհանդիսանան տեղային մինիմումի կետեր կամ դրանց սահմանները դուրս կգան թույլատրելի սահմաններից [0;1], ապա ԼաՖֆերի կետերը բացակայում են:

Տվյալ մեթոդի այլընտրանք կարող է հանդիսանալ արտադրական \$ֆուսկցիայի փոխարեն երրորդ կարգի հատվածային բազմանդամի օգտագործման մոտեցումը. $X = \alpha\theta + \beta\theta^2 + \gamma\theta^3$: Ընդ որում պարամետրերի քանակը չի փոխվում՝ մնալով երեքը: Այս դեպքում ԼաՖֆերի կետերի որոնման գործընթացը կարգավորվում է հաշվի առնելով ելակետային խորանարդային կախվածությունը, իսկ \$ֆիսկալային կորի անշարժ կետերը գտնվում են խորանարդային հավասարումների լուծման արդյունքում: Հասկանալի է, որ նմանալ գործիքները կարող են առաջացնել երկրորդ կարգի ԼաՖֆերի երկու կետեր: Միանշանակ լուծում ստանալու համար գործնականում նպատակահարմար է օգտագործել եռապարամետրային մեթոդի առաջին, բազային տարբերակը:

Պետք է նշել, որ \$ֆիսկալ քաղաքականության արդյունավետության գնահատման վերլուծական մեթոդը թույլ է տալիս օգտագործել երեք պարամետրերը չգերազանցող \$ֆուսկցիոնալ կախվածություն: Պարամետրերի ավելացումը պահանջվում է բազային համակարգի լրացուցիչ հավասարումների համար, ինչը հնարավոր չէ իրականացնել ելակետային պահանջների սղության պատճառով:

2. *Երկպարամետրային մեթոդ*. Այս մեթոդի հիմքում ընկած է տնտեսական աճ գործընթացի մոտարկումը հատվածային քառակուսային \$ֆուսկցիային, որը ներառում է ընդամենը երկու պարամետր.

$$X = \beta\theta + \gamma\theta^2: \tag{14}$$

Այդ դեպքում \$ֆիսկալային մոտեքերի գումարը հավասար կլինի [109]

$$T = \beta\theta^2 + \gamma\theta^3: \tag{15}$$

Արտադրական համակարգի \$n\$ կցիոնալ առանձնահատկությունների վրա դրված և բացուցիչ սահմանափակումները արտահայտվում է համանման հավասարմամբ (6). [109]

$$\Delta X = (\beta + 2\gamma\theta)\Delta\theta: \tag{16}$$

(14), (16) հավասարումների համակարգի կառուցումը բավական է β, γ պարամետրերի որոնման համար: Ինչպես եռապարամետրային մեթոդի օգտագործման ժամանակ (14) հավասարումը արտացոլում է արտադրական համակարգի «կետային» առանձնահատկությունները, իսկ (16) հավասարումը՝ «ժամանակաշրջանային»: Ընդ որում՝ հարկային համակարգում տեղի ունեցող դինամիկ փոփոխությունների արդյունքում կարելի է ենթադրել, որ հարկային եկամուտներն ամբողջությամբ դետերմինացվում են արտադրական համակարգի և հարկային ճնշման հետ:

Պարամետրերի գնահատման բանաձևերը, որոնք ընկած են (14), (16) հավասարումների լուծման հիմքում, ունեն հետևյալ տեսքը [109].

$$\beta = 2X/\theta - \Delta X/\Delta\theta, \tag{17}$$

$$\gamma = (\Delta X/\Delta\theta)/\theta - X/\theta^2, \tag{18}$$

Լաֆֆերի առաջին և երկրորդ կարգի կետերը որոշվում են (14) և (15) հավասարումներով համապատասխան բանաձևերով [109].

$$\theta^* = -\frac{1\beta}{2\gamma}, \tag{19}$$

$$\theta^{**} = -\frac{2\beta}{3\gamma}, \tag{20}$$


Երկրորդ կարգի հավասարման վերլուծությունը ցույց է տալիս հետևյալը. որպեսզի (19) և (20) հավասարումների անշարժ կետերը լինեն Լաֆֆերի կետեր, անհրաժեշտ է և բավարար հետևյալ պայմանը. $\beta > 0$ և $\gamma < 0$:

Լաֆֆերի կետերի որոնման կառուցակարգը ավելի ընդունելի է տեսականորեն: Ապացուցման համար բավական է ուսումնասիրել ֆիսկալային և արտադրական կորերի առանձնահատկությունները:

Եթե Լաֆֆերի առաջին և երկրորդ կարգի հավասարման կետերը (14) և (15) կախվածությունների համար գոյություն ունեն, ապա

արտադրական կորը և նրա համանման ֆիսկալ ային կորը կունենան նկարում պատկերված տեսքը: Դժվար չէ տեսնել, որ արտադրության ծավալը և հարկային մուտքերը համահունչ հավասարվում են գրոյի երկու կետերում. $\theta = 0$ և $\theta = -\beta/\gamma$: Այսպիսով, արտադրական և ֆիսկալ ային ֆունկցիաների որոշման ակտիվ շրջանները համընկնում են: Ակնհայտ է, որ եթե $-\beta/\gamma = 1$, ապա հարկային բեռը իր մաքսիմալ մակարդակում է, որի դեպքում երկու կորերի ամբողջությամբ համընկման հավանականությունը հավասար է 100%-ի: $0 < -\beta/\gamma < 1$ դեպքում արտադրական և ֆիսկալ ային կորերի անկումը սկսվում է ավելի շուտ, երբ $-\beta/\gamma > 1$, երկու համակարգերն էլ շարունակում են աշխատել, նույնիսկ տնային տնտեսությունների ստացած ամբողջ եկամուտների հավաքագրման դեպքում: 100-տոկոսանոց ֆիսկալ ային բեռի պայմաններում բոլոր դեպքերում արտադրության և հարկահավաքման ծավալների մեծությունները համընկնում են, ինչը համապատասխանում է ելակետային դրույթներին և հավասար են $X(1) = T(1) = \beta + \gamma$:

Ամենակարևոր և հետաքրքիր է Լաֆֆերի առաջին և երկրորդ կարգի հավասարման կետերը կարող են չհամընկնել և այդ ենթադրության համաձայն Լաֆֆերի երկրորդ կարգի կետը տեղակայված է Լաֆֆերի կորի վրա առաջին կարգի հավասարման կետից աջ. $\theta^{**} > \theta^*$ (գարֆիկ 1. 3. 1-ում արտահայտված երևում է): Լաֆֆերի առաջին կարգի հավասարման կետ հանդիսացող արտադրության առավելագույն ծավալը X^* կազմում է $X^* = -\beta^2/4\gamma$, Լաֆֆերի երկրորդ կարգի կետ հանդիսացող հարկահավաքման առավելագույն չափը T^* , կազմում է $T^* = -\beta^2/9\gamma$:



Գրաֆիկ 1.3.1. Արտադրական և հարկային կորերի գրաֆիկական տեսքը [109]

Լաֆֆերի առաջին և երկրորդ կարգի հավասարման կետերի փոխադարձ տեղայնացման առանձնահատկությունն ը կարևոր է, քանի որ հարկերի ժամանակակից տեսությունն հիմնվում է հիմնականում Լաֆֆերի երկրորդ կետերի վրա՝ անուշադրության մատնելով Լաֆֆերի առաջին կետերը: Դրա հետ մեկտեղ, հարկային համակարգի կառուցողական վերլուծությունը ենթադրում է երեք պարամետրերի դիտարկում՝ $\theta, \theta^*, \theta^{**}$: Յնարավոր են դեպքեր, որի ժամանակ տեղի կունենա $\theta^* < \theta < \theta^{**}$ իրավիճակը: Դա նշանակում է, որ փաստացի հարկային բեռը փոքր է Լաֆֆերի երկրորդ կարգի կետից, և, հետևաբար, պետությունը հարկային համակարգի տեսանկյունից ունի խելամիտ մեծություն: Միաժամանակ այն մեծ է Լաֆֆերի առաջին կարգի կետից, իսկ դա նշանակում է, որ հարկային «հալածանքները» նպաստում են արտադրության ծավալների անկմանը և հակասում են երկրի երկարաժամկետ տնտեսական զարգացման ռազմավարության նպատակներին:

Անդրադառնալով գործարար միջավայրի վրա հարկային համակարգի ազդեցության գնահատմանը, հարկ ենք համարում վերլուծել ՅՅ հարկային համակարգն ու հարկային

օրենսդրությունը, իսկ հետո միայն պարզել, թե դրանք ինչպես են ազդում գործարար միջավայրի վրա:

ՀՀ հարկային համակարգն անցել է ձևավորման ու զարգացման՝ ավելի քան երկու տասնամյակ ընդգրկող ժամանակահատված, և թեև այդ ընթացքում առանձին օրենսդրական փոփոխություններով մշտապես լուծվել են հարկային համակարգի կատարելագործման, մրցունակության բարձրացման, ազգային տնտեսության գործարար միջավայրի բարելավման ու պետական բյուջեի համար անհրաժեշտ հարկային եկամուտների ապահովման խնդիրները, այդուհանդերձ համաշխարհային տնտեսության զարգացման ներկամիտումները, նոր մարտահրավերները, տարածաշրջանային զարգացումներն ու տնտեսական միությունների շրջանակներում ընթացող ինտեգրացիոն գործընթացները հարկային հարաբերությունները նորովի կարգավորելու օբյեկտիվ անհրաժեշտություն են առաջացրել: Այս իմաստով, հարկային օրենսգիրքը կարևորվում է տնտեսության ակտիվացման, գործարար միջավայրի հետագա բարելավման ու օտարերկրյան ներդրումների ներգրավման գործում, ինչի արդյունքում հնարավոր է ապահովել երկարաժամկետ և կայուն տնտեսական աճ: Շատ կարևոր է նաև այն, որ հարկային օրենսգրքի առկայությունը խոսում է առավել կայացած, կայուն և կանխատեսելի հարկային համակարգի ու հարկային միջավայրի մասին: Հետևաբար, հարկային օրենսգրքի առկայությունը նաև կարևոր ու դրական ազդակ է ՀՀ տնտեսության ինտեգրման արդի մարտահրավերներին, ինչպիսին է ԵԱՏՄ, տարածաշրջանային երկրների հետ նոր ձևաչափի, ներդրողների ու միջազգային գործընկեր կազմակերպությունների համար:

Հատկանշական է նաև այն, որ ՀՀ հարկային հարաբերությունները կարգավորվում են տարբեր մակարդակների իրավական ակտերով (ՀՀ օրենքներ, ՀՀ կառավարության որոշումներ, հարկային մարմնի հրամաններ և այլն): Արդյունքում, մի կողմից նկատելիորեն բարդացել է հարկային հարաբերություններ կարգավորող օրենսդրությունից օգտվելը, մյուս կողմից հարկային հարաբերություններ կարգավորող իրավական ակտերի այս տարանջատվածությունն ու բազմազանությունը ստեղծել են մի

այնպիսի իրավիճակ, երբ միևնույն նշանակություն ունեցող հասկացությունները տարբեր իրավական ակտերում կիրառվում են տարբեր եզրույթներով, երբ միատեսակ հարկային հարաբերությունները կարգավորվում են տարբեր սկզբունքներով ու կանոններով: Այս առումով, ՀՀ հարկային օրենսգրքով հնարավոր է այդ հակասությունները շտկել և այսպես ասած, վերացնել վարչարարական խոչընդոտները, տարբեր օրենքների տարընթերցումները և դրանց մեկնաբանման երկիմաստությունը: Արդյունքում հարկային օրենսդրությունը կարող է լինել առավել համակարգված, իսկ դրանից օգտվելը՝ դյուրին: Մասնավորապես, հարկային օրենսգրքի շրջանակներում կարգավորում է ինչպես հարկ վճարողների հարկային հաշվառման, հարկերի հաշվարկման ու վճարման, հարկ վճարողների սպասարկման ու նրանց գործունեության նկատմամբ հսկողության իրականացման, հարկային պարտավորությունների ու գերավճարների հաշվառման, այնպես էլ հարկային օրենսգրքի պահանջների խախտման համար պատասխանատվության միջոցների կիրառության, հարկային հարցերով վարչական վարույթի իրականացման, հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցների կիրառության ու հարկային ծառայողների գործողությունների և անգործության բողոքարկման հետկապված հարաբերությունները:

ՀՀ հարկային օրենսգրքի հիմքում ընկած է հարկային քաղաքականության հիմնարար տարրերը, ինչպիսիք են՝ հարկման դրույթաչափերը, հարկման բազաները, հարկային արտոնությունները և հարկի հաշվարկման ու վճարման կարգին վերաբերող հետևյալ հիմնական մոտեցումները: Բացի այդ, կարևորվել է հարկման այնպիսի դրույթաչափերի կիրառությունը, որոնք մի կողմից չեզոք ազդեցություն կարող են ունենալ հարկային միջավայրի վրա, մյուս կողմից հնարավորություն են տալ իստնտեսության տարբեր ոլորտների, տարբեր չափերի, ինչպես նաև հարկման տարբեր համակարգերում գտնվող հարկ վճարողների համար սահմանել հավասարակշռված և տնտեսապես հիմնավորված հարկային բեռ:

Վերլուծելով գործարար միջավայրի վրահարկային համակարգի ազդեցության խնդիրները, հարկ ենք համարում անդրադառնալ հարկային օրենսգրքի հիմքում ընկած հարկման բազաների որոշման սկզբունքների ու կանոնների վերանայմանը: Վերջինս հնարավորություն կընձեռի մի կողմից ամրապնդել հարկման արդարության սկզբունքները, ինչը կդրսևորվի հարկման բազաների որոշման սկզբունքների միասնականացմամբ, մյուս կողմից՝ սահմանել առավել հիմնավորված հարկման բազաներ, ինչը կդրսևորվի հարկման բազան արհեստականորեն մեծացնող և տնտեսագիտական որևէ հիմնավորում չունեցող սահմանափակումների վերացմամբ: Արդյունքում հիմնական հարկատեսակների գծով հարկման բազաները կճշգրտվեն՝ դրանով իսկ ամրապնդելով հարկման արդարացիության սկզբունքը:

Կատարված վերլուծության արդյունքների հիման վրահարող ենք հիմնավորել, որ ՀՀ-ում հարկային համակարգում առկա խնդիրների լուծման և, այսպես ասած, «անթերի հարկային քաղաքականություն» իրականացնելու համար պետք է գործի հետևյալ պայմանը $\theta^* > \theta$:

Աղյուսակ 1.1.3
2000-2015թթ. ՀՆԱ-ն և պետական բյուջեի հարկային եկամուտները ՀՀ-ում

Ժամանակաշրջան (տարի)	ՀՆԱ		Հարկային եկամուտներ
	Ընթացիկ գներով (մլրդ դրամ)	ՀՆԱ-ի դեֆլյատոր	
2000	1.031.338	98,6	143.534,7
2001	1.175.877	104,1	154.913,6
2002	1.362.472	100,7	185.437,5
2003	1.624.643	104,6	212.232,8
2004	1.907.945	106,3	250.119,1
2005	2.242.881	103,2	304.257,1
2006	2.656.190	104,6	359.715,0
2007	3.149.283	104,2	483.676,6
2008	3.568.228	105,9	598.797,5
2009	3.141.651	102,6	503.328,8
2010	3.460.203	107,8	574.066,8
2011	3.777.946	104,3	631.595,4
2012	4.000.722	98,8	725.496,9

2013	4.555.638	103,4	956.012,3
2014	4.828.626	102,3	1.012.622,7
2015	5.032.089	101,2	1.026.784,9

Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 1.1.3-ի տվյալները, ՀՀ-ում ՀՆԱ-ի, դեֆլյատորի շարունակական աճի միջոցով ավելացել են նաև հարկային եկամուտները, սակայն վերջիններիս աճը տեղի է ունեցել ավելի արագ տեմպերով, քան ՀՆԱ-ն և դեֆլյատորը:

Կարելի է ասել, որ Լաֆֆերի կետերի⁶² գնահատման տեսանկյունից նույնիսկ ՀՀ-ում դրանք ունեն տեսական ուղղվածություն, քանի որ տնտեսական իրավիճակում տեղի են ունենում բավականին արագընթաց փոփոխություններ, որի արդյունքում այսպես ասած, «հարկային կորի» դիֆերենցիալ հատկությունները փոխվում են: Իսկ դաբերում է պանակավորված և փաստացի հարկային եկամուտների բացասական տարբերությանը, քանի որ նրանց վրա մեծ ազդեցություն է ունենում արտաքին աշխարհից ներթափանցող տնտեսական, քաղաքական, սոցիալական գործոնները:

Ամփոփելով վերոգրյալը, կարելի է եզրակացնել, որ ՀՀ-ում հարկային համակարգի արդյունավետության բարձրացումը դրական է ազդում գործարար միջավայրի վրա, եթե զուգահեռաբար պահպանվում են ֆիսկալ քաղաքականության արդյունավետ կառավարման դրույթները: Բացի այդ, Լաֆֆերի կորի կետերի հետադարձ գնահատումը կարող է մեկնաբանվել հետևյալ տրամաբանությամբ. եթե իրական հարկային բեռը տեղափոխվում է Լաֆֆերի երկու կետերից դեպի աջ, պետության և արտադրողների միջև կարող է լուրջ հակամարտությունների առիթ դառնալ: Իսկ Լաֆֆերի կետերի օգնությամբ հարկային քաղաքականության արդյունավետության միանշանակ գնահատումը հնարավոր չէ: Նույնիսկ տնտեսամաթեմատիկական և տնտեսաչափական մեթոդների միջոցով կարելի է օգտագործել ինչպես երկպարամետրային, այնպես էլ՝ եռապարամետրային հաշվարկման մեթոդներ: Ինքնին այդ փաստը վկայում է ոչ այնքան նոր մեթոդների մշակման պահանջարկի, որքան արդեն գոյություն ունեցողների համեմատական

⁶² Балацкий Е.В. Точки Лаффера и их количественная оценка //Мировая экономика и международные отношения. 1997. № 12.

վերլուծության մասին, իսկ ստացված արդյունքները չեն կարող
ամբողջական բնութագրել տնտեսական իրավիճակում տեղի ունեցող
փոփոխությունները:

ԳԼ ՈՒ Խ2. ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՓՈԽԱՉԴԵՑՈՒ ԹՅԱՆ ՎԵՐԼ ՈՒՃՈՒ ԹՅՈՒՆԸ

2.1. Գործարար միջավայրի գործոնային վերլուծությանը


Գործարար միջավայրի բարելավման շնորհիվ երկիրն առավել գրավիչ և տեղեկատվության առումով բաց է դառնում, հատկապես, օտարերկրյա ներդրումների համար, որի արդյունքում տնտեսությանը զարգանում է, գործազրկության խնդիրը՝ լուծվում, կյանքի որակը՝ բարձանում:

Հետևաբար՝ կարևորվում է տվյալ երկրի ներսում և դրսում ներդրումային ու գործարար միջավայրերի վրա ազդող գործոնների ուսումնասիրությունն ու վերլուծությունը:

Պետք է նշել, որ գործարար միջավայրի վրա ազդում են տարբեր գործոններ, որոնց գնահատումը բավականին բարդ և աշխատատար գործընթաց է: Այդ ուղղությամբ կատարվել են բազմաթիվ հետազոտություններ, վերլուծություններ, ինչպես օտարազգի, այնպես էլ՝ հայ հետազոտողների, տնտեսագետների կողմից: Այդ հարցում, ներկայացվել է Համաշխարհային բանկի «Գործարարությանը զբաղվելը» գեկոլյոցը: Բացի դրանից, տարբեր երկրներում լայն կիրառություն է ստացել BERI⁶³ միջազգային հետազոտական կազմակերպության կողմից կատարված հետազոտությունը ներդրումային և գործարար միջավայրի վերաբերյալ: Այսպես՝ օրինակ, BERI միջազգային հետազոտական կազմակերպության կողմից յուրաքանչյուր տարի գործարարության տեսանկյունից գնահատվում են լավագույն երկրները, որոնց վերաբերյալ տրվում են վարկանիշներ (գծապատկեր 2.1.1)՝

1. տնտեսության վիճակը բնութագրող վարկանիշ,
2. մրցունակության և գործարար միջավայրի վարկանիշ,
3. գործարար միջավայրի օրենսդրական դաշտի և արդյունավետության վարկանիշ,
4. պետության և աշխատուժի վարկանիշներ,
5. կյանքի որակի և կենսապայմանների ապահովման վարկանիշներ:

⁶³ BERI- Business Environment Risk Intelligence



Աղյուսակ 2.2.1-ում տնտեսության վիճակը բնութագրող վարկանիշը գնահատվում է ըստ՝

- ներդրումային միջավայրի,
- արտաքին առևտրի և ներդրումների:

Օրինակ, 15 լավագույն ներդրումային միջավայր ունեցող երկրներից Սինգապուրը գտնվում է առաջին հորիզոնականում, որը նաև համընկնում է Համաշխարհային բանկի «Գործարարության մրցուցակ» զեկույցի արդյունքների հետ (աղյուսակ 2.1.1):

Այս վարկանիշի գնահատման համար հաշվի են առնվել տվյալ երկրի՝

- տնտեսական և իրավական ինդեքսները՝
- գործառնական ռիսկի ինդեքսը,
- քաղաքական ռիսկի ինդեքսը,
- դրամական միջոցների փոխանցման ինդեքսը:

BERI ընկերությունը գնահատում է նաև արտաքին առևտրի, ներդրումային միջավայրի ընթացակարգերը տարբեր երկրներում: Ըստ այդմ, եթե 2014 թվականին լավագույն ներդրումային միջավայր ունեցող երկիր է ճանաչվել Սինգապուրը, ապա իրավիճակը փոխվել է 2015 թվականին՝ առաջատար դիրքում թողնելով Շվեյցարիային, երկրորդ տեղում՝ Սինգապուրին: 2015 թվականին իր դիրքն է զիջել Թայվանը, որի փոխարեն 2015 թվականին 3-րդ հորիզոնականում զբաղեցրել է Գերմանիան 2015 թվականին 4-10-րդ վարկանիշները պատկանում են եվրոպական երկրներին՝ բացառությամբ Եկվադորի, 5-րդ, 9-րդ և 10-րդ հորիզոնականները (Թայվան, ԱՄՆ, Հարավային Կորեա): Այդ վարկանիշի գնահատման համար հիմք է ընդունվում

⁶⁴ <https://www.edb.gov.sg/content/edb/en/why-singapore/about-singapore/facts-and-rankings/rankings.html>

տվյալ երկրի աշխարհագրական դիրքը, երկրի ռազմավարությունը և ներթափանցելի գարգացվածության մակարդակը, իրավական և տնտեսական դաշտի ներդաշնակությունը, հարկային դաշտը, դրամավարկային քաղաքականությունը և այլն:


Աղյուսակ 2.1.1

**2014-2015թթ. լավագույն ներդրումային միջավայր ունեցող երկրները՝
ըստ BERI գնահատականի.⁶⁵**

2014			2015		
Վարկանիշ +5 տարիների	100=Lավագույն երկիր	2014թ. վարկանիշ	Վարկանիշ +5 տարիների	100=Lավագույն երկիր	2015թ. վարկանիշ
1	Սինգապուր	75	1	Շվեյցարիա	70
2	Շվեյցարիա	74	2	Սինգապուր	70
3	Թայվան	72	3	Գերմանիա	69
4	Նորվեգիա	69	4	Նորվեգիա	69
5	Գերմանիա	69	5	Թայվան	69
6	Ավստրիա	67	6	Ավստրիա	67
7	Կանադա	62	7	Կանադա	62
8	Նիդերլանդներ	65	8	Նիդերլանդներ	65
9	Դանիա	58	9	ԱՄՆ	58
10	Ֆինլանդիա	59	10	Կորեա (Հարավային)	58
11	ԱՄՆ	58	11	Իռլանդիա	58
12	Չինաստան	56	12	Ավստրալիա	57
13	Շվեդիա	59	13	Դանիա	57
14	Բելգիա	59	14	Բելգիա	57
15	Իռլանդիա	57	15	Ֆինլանդիա	57

Արտաքին առևտրի և ներդրումների տեսանկյունից 2015 թվականին 1-ին տեղում է 7,81 միավորով, 2-րդ տեղում է Սինգապուր՝ 6,31 միավորով, իսկ լավագույն տասնյակը շարունակում են Արևմտյան Եվրոպայի երկրները (Գծապատկեր 2.1.2):

⁶⁵ <https://www.edb.gov.sg/content/edb/en/why-singapore/about-singapore/facts-and-rankings/rankings.html>



**Գծապատկեր 2.1.2 Լավագույն արտաքին առևտուր և ներդրումներ
 ու նեցող երկրներն՝ ըստ BERI գնահատականի, 2015թ.⁶⁶**

Մրցակցության և գործարար միջավայրի վարկանիշի համաձայն գործարարությունը զբաղվելու դյուրինությունը 2014 թվականին Լավագույն երկիր է ճանաչվել Միևգապուրը, ինչը պահպանվել է նաև 2015 թվականին: Փոփոխություններ են կատարվել 2-րդ հորիզոնականի մասով՝ Նոր Զելանդիան 2015 թվականին իր տեղը զիջելով Շվեյցարիային, 4-րդ հորիզոնականի մասով, 5-րդ հորիզոնականի մասով Կորեան՝ Ավստրալիային և այլն: (Աղյուսակ 2.1.2):

⁶⁶ <https://www.edb.gov.sg/content/edb/en/why-singapore/about-singapore/facts-and-rankings/rankings.html>

2014-2015թթ. 1 ավագույն գործարար միջավայր ունեցող երկրներն՝
ըստ BERI գնահատականի ⁶⁷

<i>Երկրներ</i>	<i>2014 վարկանիշ</i>	<i>Երկրներ</i>	<i>2015 վարկանիշ</i>
Սինգապուր	1	Սինգապուր	1
Նոր Զելանդիա	2	Շվեյցարիա	2
Հոնկոնգ	3	Հոնգկոնգ	3
Դանիա	4	Կանադա	4
Կորեա	5	Ավստրալիա	5
Նորվեգիա	6	Շվեդիա	6
ԱՄՆ	7	ԱՄՆ	7
Անգլիա	8	Նոր Զելանդիա	8
Ֆինլանդիա	9	Ֆինլանդիա	9
Ավստրալիա	10	Դանիա	10

Ինչ վերաբերում է ՀՀ տնտեսության գործարար միջավայրի կարգավորմանը, պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությանը, լինելով փոքր բաց տնտեսություն, չի կարող խուսափել արտաքին գործոնների ազդեցությունից, մասնավորապես՝ տարածաշրջանային և հետանցումային երկրներում տեղի ունեցող քաղաքական և տնտեսական իրավիճակներից, ինտեգրացիոն, փոխարժեքային տատանումներից քաղաքական դիրքորոշումից, ռազմական մարտահրավերներից: Ավելին, ՀՀ տնտեսության զարգացման վրա ազդում են տարածաշրջանային երկրների ռեսուրսային ապրանքների (նավթ, դիզվառելիք, բենզին, գազի) գները, Ռուսաստանում տեղի ունեցող տնտեսական և քաղաքական գործընթացները և այլ գործոններ: Պետք է նշել, որ ինտեգրացիոն գործընթացներից մեկը ԵԱՏՄ-ի ձևավորումն է և ՀՀ-ի մասնակցությունը: Մասնավորապես, Ղազախստանի նախագահ Նորսուլթան Նազարբաևը Ռուսաստանի առաջին պաշտոնական այցի ժամանակ, 1994 թ-ի մարտի 29-ին, Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանում առաջին անգամ հանդես եկավ Պետությունների Եվրասիական Միության կազմավորման գաղափարով:

⁶⁷ <https://www.edb.gov.sg/content/edb/en/why-singapore/about-singapore/facts-and-rankings/rankings.html>

1994 թվականի հունիսին մանրամասն մշակված ինտեգրացիոն ծրագիրն ուղարկվեց պետությանը ղեկավարներին, իսկ հետո՝ տպագրվեց մամուլում: Պաշտոնական փաստաթղթերում, առաջին անգամ, ինտեգրացիոն միությանը անվանվել է Եվրասիական Միություն:

1995 թվականին Բելոռուսի Հանրապետությանը, Ղազախստանի Հանրապետությանը և Ռուսաստանի Դաշնությանը ստորագրեցին Մաքսային միության մասին համաձայնագիր, որն ուղղված էր տնտեսվարող սուբյեկտների միջև ազատ տնտեսական հարաբերությունների հաստատման համար խոչընդոտների հաղթահարմանը, ազատ ապրանքափոխանակման և մրցակցության ապահովմանը և, վերջապես, անդամ պետությանների տնտեսական զարգացմանը:

1996թ-ի մարտի 29-ին Մոսկվայում Բելոռուսի, Ղազախստանի, Ղրղզստանի և Ռուսաստանի նախագահները ստորագրեցին պայմանագիր, տնտեսական և հումանիտար շրջանակների խորացման մասին:

Տաջիկստանի Հանրապետությանը պայմանագրին միացավ ավելի ուշ 1998 թ-ին: 1999 թ-ի փետրվարի 26-ին Մոսկվայում Բելոռուսից, Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի և Ռուսաստանի նախագահները ստորագրեցին Մաքսային միության և միասնական տնտեսական տարածքի մասին պայմանագիր:

2003թ-ի սեպտեմբերի 19-ին Յալթայում Բելոռուսի, Ղազախստանի, Ռուսաստանի և Ուկրաինայի նախագահները ստորագրեցին համաձայնագիր Միասնական տնտեսական տարածքի ձևավորման մասին: Կողմերի ղեկավարությունները սկսեցին Միասնական տնտեսական տարածքի օրենսդրական բազայի նախապատրաստման աշխատանքները, որն ապահովում էր ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժ:

2014 թվականին հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրվեց պայմանագիր, համաձայն որի Հայաստանի Հանրապետությանը միացավ Եվրասիական տնտեսական միությանը: Բացի այդ, 2014թ-ի դեկտեմբերի 23-ին Մոսկվայում Բելոռուսի, Ղազախստանի և

Ռուսաստանի նախագահները մի կողմից, և Ղրղզստանի նախագահը մյուս կողմից ստորագրեցին պայմանագիր՝ ԵԱՏՄ-ին միացման մասին:

Եվրասիական տնտեսական միությունը հիմնադրվել է Եվրասիական Տնտեսական Ընկերակցության Մաքսային միության հիման վրա՝ 2014թ.-ի մայիսի 29-ի Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի ստորագրմամբ և ուժի մեջ է մտել 2015թ.-ի հունվարի 1-ից: Միության անդամ են հանդիսանում Ռուսաստանի Դաշնությունը, Ղազախստանը, Հայաստանը, Բելոռուսիան և Ղրղզստանը: Միավորման նպատակն է անդամ-պետությունների տնտեսությունների ամրապնդումը, դրանց միջև կապերի սերտացումը, տնտեսության մոդեռնացումը, համաշխարհային շուկայում տվյալ պետությունների մրցունակության բարձրացումը: ԵԱՏՄ-ն հիմնադրվել է Ռուսաստանի, Ղազախստանի և Բելոռուսի նախագահների կողմից ստորագրված պայմանագրով՝ Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիր: Պայմանագրով սահմանվում է ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժ, կոորդինացված, համաձայնեցված կամ միասնական տնտեսական քաղաքականության իրականացում:

ԵԱՏՄ-ը զբաղեցնում է 20.229.248 կմ² տարածք՝ 182.5 մլն ընդհանուր բնակչությամբ, ներառյալ՝ Ղրիմի և Սևաստոպոլի տարածքները)⁶⁸, որի բարձրագույն մարմինը Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդն է, իսկ կազմի մեջ մտնում են միության անդամ պետությունների նախագահները: Եվրասիական տնտեսական միության միջպետական խորհուրդն այն մարմինն է, որի կազմի մեջ են մտնում անդամ պետությունների կառավարությունների ղեկավարները: Եվրասիական տնտեսական հանձնաժողովը միության մշտական գործող կարգավորող մարմինն է, որը ձևավորում է Հանձնաժողովի խորհուրդն ու Հանձնաժողովի Կոլեգիան: Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝ ԵԱՏՄ գործունեության և զարգացման պայմանների ապահովումը, ինչպես նաև Միության շրջանակներում տնտեսական ինտեգրացիայի բնագավառում առաջարկների մշակումը:

⁶⁸ Договор о Евразийском экономическом союзе-г.Астана 29.05.2014

ԵԱՏՄ-ի առանձնահատկություններին Ե այն, որ անդամ երկրները միասնական դրույթաչափով պարտավորվում են մաքսազերծել երրորդ, այսինքն՝ անդամ չհանդիսացող երկրներից ներմուծվող ապրանքները: Այս կերպ, ԵԱՏՄ-ն հավակնում է կարգավորել իր անդամ պետությունների և երրորդ երկրների միջև առևտրային հարաբերությունները, որ ԶԶ-ն չկարողանա Եվրամիության հետ ստորագրել ազատ առևտրի համաձայնագիր, որի շուրջ ծավալվել էին բանակցություններ համաձայնության գալով 2013թ.-ի օգոստոսին:

2014թ. հոկտեմբերին Չայաստանի տնտեսության անդամակցությունից հետո ԵԱՏՄ անդամ երկրների հետ հետագայում նոր հնարավորություններ է ստեղծվել արտաքին շուկաների մուտքի համար: Իսկ դադեռևս նախանշված է եղել 2007թ. փետրվարի 7-ին ընդունված ԶԶ Ազգային անվտանգության ռազմավարությունում⁶⁹: Այդ փաստաթղթում, մասնավորապես, խոսվում է այն մասին, որ Ռուսաստանի հետ փոխհարաբերությունները և դրանց ներուժը կրում են ռազմավարական բնույթ, որն իր հերթին պայմանավորված է Չայաստանի անվտանգության ապահովման գործում Ռուսաստանի կարևոր դերով, հայ-ռուսական ավանդական բարեկամական հարաբերություններով, լայն առևտրատնտեսական համագործակցությամբ, Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում Ռուսաստանի դերով, ինչպես նաև Ռուսաստանում ստվար հայ համայնքի առկայությամբ⁷⁰: Ռուսաստանի քաղաքական դեկավարությունը նույնպես փաստարկել է այն, որ Ռուսաստանը Չայաստանի հետ հատուկ հարաբերություններ ունի՝ «ռազմավարական գործընկերության և, միևնույն ժամանակ, սերտ դաշնակցային հարաբերություններ»⁷¹:

Սկզբից ևեթ Եվրասիական տնտեսական միությունը ներկայացվել է որպես բաց նախագիծ, դա, իր հերթին, ենթադրում է ապագա միության մասնակիցների և անդամների ընդլայնում: Բայց այս նախագծի հնարավոր անդամների մեջ կարող են հայտնվել նաև այն երկրները, որոնք կարող են որոշակի սպառնալիք ներկայացնել

⁶⁹ http://www.mfa.am/u_files/file/doctrine/Doctrinerus.pdf

⁷⁰ Նույն տեղում:

⁷¹ <http://www.kremlin.ru/transcripts/8691>

Հայաստանի ազգային անվտանգության ապահովմանը: Այնպես որ, իրականում եվրասիական գաղափարի շրջանակներում տնտեսական, քաղաքական, արտաքին, սոցիալական և այլ հարցերի առաջադրումը, կողմերի նպատակների և շահերի պարզեցումը, փոխադարձ քննարկումը և դիրքորոշումների ճշտումը միակ ճիշտ ռազմավարությունն է, որին պետք է հետևեն եվրասիական երկխոսության բոլոր մասնակիցները:

Պետք է նշել, որ տնտեսական տարբեր օրինաչափություններին հնարավորություն են տալիս բացահայտել տվյալ երկրում համեմատական առավելությունները, խոցելի կողմերը և տնտեսության ռիսկային ոլորտները: Դրանք ի հայտ են գալիս տնտեսական քաղաքականության բարեփոխման տարբեր փուլերում:

ԵԱՏՄ-ին անդամակցությունը ՀՀ-ին ընձեռում է նոր հնարավորություններ՝

- ընդլայնել և արդիականացնել ՀՀ արտադրական ներուժը՝ հիմք ընդունելով ԵԱՏՄ տնտեսական հարաբերությունների նոր կանոնները,
- ձևավորել ԵԱՏՄ-ի տարածքաշրջանային երկրների հետ նոր շուկա,
- առավել բարելավել Էներգակիրների սակագնային քաղաքականությունը, մասնավորապես՝ վառելիքը ներմուծվելու է հատուկ, շուկայականից ցածր գնով, բացի այդ, Եվրասիական զարգացման բանկի փորձագետները հաշվարկել են, որ ԵԱՏՄ-ին անդամակցելով Հայաստանը միայն գազի ցածր գնի (180 ԱՄՆ դոլար) և մաքսավճարի զրոյացման պայմաններում տարեկան կարող է տնտեսել 140 մլն. ԱՄՆ դոլար, իսկ ՀՆԱ կարող է ավելանալ շուրջ 4.5%-ով⁷²:
- բարելավել ներքին արտադրողի և ներքին ներդրողների պաշտպանվածության աստիճանը, ինչպես նաև խթանել հայրենական արտադրությունը, ձևավորել նոր աշխատատեղեր և կրճատել արտագաղթը,
- հարկային արտոնությունների սահմանման միջոցով ավելացնել ԵԱՏՄ երկրների կողմից կատարվող ներդրումները,

⁷² <http://www.kremlin.ru/transcripts/869>

- ամրապնդել Հայաստանի անվտանգության և պաշտպանվածության մակարդակը, հաշվի առնելով Ռուսաստանի հետ տնտեսական ինտեգրման նոր հնարավորությունները,
- կայունացնել Լեռնային Ղարաբաղում առկա սոցիալ-տնտեսական իրավիճակը և Հայաստանի միջոցով խթանել Արցախի արտադրանքի արտահանումը դեպի ԵԱՏՄ երկրների շուկաներ,
- անդամակցելով ԵԱՏՄ-ին, Ռուսաստանում աշխատող հայերի համար կձևավորվի առավել նպաստավոր պայմաններ և կվերացվեն ժամանակավոր գրանցման խնդիրները, տարբեր արտոնագրերի և քվոտաների ձեռք բերումը:

ԵԱՏՄ-ին անդամակցելու պայմանագրի նորմերից մեկը նախատեսում է, որ Հայաստանում վերացվում է ռազմական նշանակության արտադրանքի մաքսազերծումը 2015-2022թթ. ժամանակահատվածում: Այս արտոնությունը պետք է վերաբերի ՀՀ գինված ուժերի համար նախատեսված արտադրանքին, որոնց համարժեքները չեն արտադրվում Միության այլ անդամ պետություններում: Մաքսերից նաև ազատվելու են մինչև 2022թ. Հայաստան ներմուծվող քաղաքացիական ինքնաթիռների և ուղղաթիռների որոշ տեսակներ, ինչպես նաև ԱԷԿ-ի շինարարության և արդիականացման համար անհրաժեշտ այլ արտադրանք:

ԵԱՏՄ անդամ երկրները, այդ թվում նաև Հայաստանը, համագործակցում են նաև մի շարք այլ ոլորտներում: Մասնավորապես, ՀՀ-ն մի շարք համաձայնագրեր է կնքել սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում համաձայնեցված քաղաքականության իրականացման մասին, սանիտարական, անասնասանիտարական և կարանտինային բուսականիտարական միջոցների կիրառման, համաձայնեցված արժույթային քաղաքականության իրականացման ուղղված միջոցների, համակարգված տրանսպորտային քաղաքականության մասին, գնումների կարգավորման մասին, մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանության և պաշտպանության, ԵԱՏՄ պաշտոնական վիճակագրական տեղեկությունների ձևավորման և տարածման կարգի մասին: ԵԱՏՄ անդամակցության հետ մեկտեղ փոփոխություններ են կատարվել

աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում, ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տնտեսավարող սուբյեկտներին լիցենզիաների տրամադրման ոլորտում, ոստիկանության գործունեության, առողջապահության ոլորտում, տրանսպորտի բնագավառում և նույնիսկ մշակույթի նախարարության կարգավորման բնագավառում:

ՀՀ-ի համար նաև առանցքային է խորացնել համագործակցությունը ԵԱՏՄ-ի հետ ՏՏ ոլորտում: Հայաստանը ՏՏ և ճարտարագիտության մասով համեմատական լուրջ առավելություններ ունի Բելոռուսիայի, Ղազախստանի և Ղրղըզստանի նկատմամբ:

ՀՀ տնտեսական և ինտեգրացիոն բարեփոխումներից հարկ ենք համարում առանձնացնել Եվրոպական հարևանության և գործընկերության միջոցով կազմված 2007-2013թթ. «Երկրի ռազմավարական փաստաթուղթը (ԵՌՓ)», որը Հայաստանի համար սահմանում է ԵՄ աջակցության ամբողջական նպատակները, ներառյալ դրա գործիքներն ու ծրագրերը⁷³: Դրանք ներառվում են «Ազգային ծրագրում», և նպատակների իրականացման համար սահմանվում է հստակ սահմանված բյուջե և ժամկետ 157.3 մլն Եվրոյի չափով և 3 տարի ժամկետում⁷⁴: Այդ ծրագիրը կենտրոնանում է երեք առաջնային ոլորտների վրա, որոնցից հարկ ենք համարում առանձնացնել «Առևտուր և ներդրումներ, կարգավորիչ դաշտի համապատասխանեցում և բարեփոխումներ» ոլորտը, որտեղ իրականացվել են միջոցառումներ՝ ինդիկատիվ բյուջեի 31-39 մլն Եվրո է (20-25 տոկոս)⁷⁵: Այդ միջոցառումները ներառում են՝

- շուկայի զարգացման ու կարգավորիչ դաշտի բարեփոխումներ,
- հարկային ու մաքսային բարեփոխումներ, որոնք կնպաստեն գործարար միջավայրի զարգացմանը,
- գործարար միջավայրին վերաբերող օրենսդրական և ոլորտային բարեփոխումներ, ինչպիսիք են՝ վարչական կարողությունների հզորացում, մաքսային սահմանների, միգրացիայի, ներդրումային հոսքերի կառավարում⁷⁶:

⁷³ http://www.mineconomy.am/uploads/NIP_2011-2013.pdf

⁷⁴ Նույն տեղում:

⁷⁵ http://www.mineconomy.am/uploads/NIP_2011-2013.pdf

⁷⁶ http://www.mineconomy.am/uploads/NIP_2011-2013.pdf

Տնտեսական քաղաքականության կարևորագույն տարրերից է հարկային քաղաքականությունը և հարկային համակարգը, որոնք հանդես են գալիս որպես տնտեսության կարգավորման գործիքներ:

ՀՀ-ում հարկային քաղաքականությունն ունի ֆիսկալ ուղղվածություն, մինչդեռ այն պետք է ուղղված լինի գործարար միջավայրի զարգացմանը, այսինքն՝ հանդես գա որպես տնտեսության խթանման գործիք: Այս դեպքում չպետք է անտեսել նաև դրամավարկային քաղաքականության ազդեցությունը տնտեսության զարգացման գործում, քանի որ, եթե վերջինս համահունչ չէ դրամավարկային քաղաքականությանը, ապա տնտեսության զարգացումը խաթարվում է, տնտեսական աճը՝ ընկնում, գործարար ակտիվությունը՝ նվազում:

Իր հերթին, հարկային քաղաքականությունն ազդում է գործարար միջավայրի զարգացման, տնտեսական աճի ապահովման վրա: Ընդ որում, վերջինս հանդես է գալիս հարկային դրույքաչափերի փոփոխությամբ: Պատահական չէ, որ բազմաթիվ երկրներում հարկաբյուջե տային քաղաքականության իրականացման ժամանակ հարկային դրույքաչափերը հանդես են գալիս որպես հարկային քաղաքականության ամենաճկուն գործիքներից մեկը: Հարկային դրույքաչափերի և տնտեսության զարգացման միջև գոյություն ունեցող կապը դեռևս հիմնավորվել է ամերիկացի տնտեսագետ Ա.Լաֆֆերի կողմից: Համաձայն վերջինիս հարկային բեռի ավելացումը առավելագույն չափից (50%) բերում է նրան, որ կապիտալը գործարար հատվածից սկսում է հոսել դեպի բանկային հատված, ինչն էլ դանդաղեցնում է տնտեսության զարգացման տեմպերը⁷⁷:

Սակայն պետք է նշել, որ Լաֆֆերի տեսությունը գործնականում կիրառելիս ոչ միշտ է բերում ներկայացված արդյունքները, քանի որ, եթե նախկինում զարգացած երկրներում հարկային վճարումները կազմում էին հարկվող եկամտի 50 տոկոսը, և կիրառվում էր հարկային դրույքաչափի նվազման քաղաքականություն, ապա այն իր արդիականությունը, կարծես, կորցրել է⁷⁸:

⁷⁷ <http://www.laffercenter.com/the-laffer-center-2/the-laffer-curve/>

⁷⁸ Соколов В.М. «Фантом теарии, или кривая Лаффера», «Экономист» (2010), N2, С.45-52

Տնտեսվարման ներկա պայմաններում հարկային դրույքաչափերի փոփոխությունը ոչ միշտ է բերում իր դրական արդյունքը տնտեսության զարգացման և գործարար ակտիվության բարձրացման գործում: Առավել լայն տարածում է ստացել հարկային միջոցառումները, որոնք կրում են նպատակային բնույթ: Այսպես, հարկային միջոցառումները կարելի է դասակարգել 2 խմբերում՝

1. Էքստենսիվ (պասիվ) միջոցառումներ, որոնք հանդես են գալիս հարկային դրույքաչափերի իջեցմամբ,
2. Ակտիվ նպատակային միջոցառումներ, որոնք հանդես են գալիս՝
 - արագացված ամորտիզացիոն քաղաքականությամբ,
 - հարկային արտոնություններով, հատկապես՝ սահմանամերձ և աղետի գոտիներում՝ տարածքային անհամաչափ զարգացման տարբերությունները կրճատելու նպատակով:

Յետևաբար, տնտեսության զարգացումը պայմանավորված է ոչ միայն հարկային ցածր դրույքաչափերով, այլև՝ երկարաժամկետ հատվածում տարբեր հարկատեսակների համար սահմանված հարկային արտոնություններով: Օրինակ, ամերիկացի տնտեսագետ Փ.Սամուելսոնի «Հարկերի չեզոքության տեսության» համաձայն գործարար ակտիվության աստիճանը բարձրացնելու համար անհրաժեշտ է ապահովել հարկային արտոնության և տնտեսական արժեքի միջև հավասարակշռվածություն: Այսինքն, հարկերի \$իսկալ գործառույթը հանդես է գալիս չեզոք դերում, կարելի է ասել, որ այն չի խաթարում գործարար միջավայրի զարգացմանը և ներդրումային հոսքերին⁷⁹:

Տարբեր երկրներում լայն տարածում է ստացել ակտիվ նպատակային միջոցառումները, որոնց նպատակն է զարգացնել գործարար միջավայրը, խթանել տնտեսական ակտիվությունը և բարելավել կյանքի որակը:

Օրինակ 2015թ. Չեխիայի կառավարությունը նախատեսել է ԱԱՀ-ի մասով բարեփոխումներ⁸⁰, մասնավորապես՝

- ԱԱՀ 10% նվազող դրույքաչափի կիրառում մանկական սննդի,

⁷⁹ Samuelson P.A., «Tax Deductibility of Economic Depreciation to Insure Invariant Valuation». Journal of Political Economy Vol. 72, pp. 604-622

⁸⁰ ՀՀ ՖՆ, «Միջազգային հարկային նորություններ»: Եկամուտների քաղաքականության, գնահատման և կարգապահական ծրագրերի վարչություն: 2015թ. մայիս, էջ 13/19 էջ/:

դեղերի որոշակի տեսականու (նաև անասնաբուժական), որոշակի դիետիկ ապրանքատեսակների վաճառքի, գրքերի վաճառքի և վարձույթի նկատմամբ:

- ԱԱՀ-ի ստանդարտ դրույքաչափով (21%) շարունակում են հարկվել տեղական արտադրողները, որոնք կատարում են ոսկու և մետաղական ջարդոնների և այլ թափոնների արտանետումներ, իրականացնում են շինմոնտաժային աշխատանքներ: Միաժամանակ 2015 թվականի ապրիլի 1-ից ստանդարտ դրույքաչափը կկիրառվի նաև հացահատիկային և տեխնիկական մշակաբույսերի մատակարարման, մետաղների, բջջային հեռախոսների, միկրոսխեմաների, նոթբուքերի, լափթփերի և վիդեո խաղերի նկատմամբ:
- 2015 թվականի սեպտեմբերի 1-ից ԱԱՀ ստանդարտ դրույքաչափ կկիրառվի շաքարի ճակնդեղի մատակարարման նկատմամբ: Հարկման ստանդարտ ռեժիմը կկիրառվի, եթե տնտեսավարող սուբյեկտի ընդհանուր հարկման բազան գերազանցում է 100 հազար չեխական կրոնը (մոտավորապես՝ 3600 եվրո):
- Հեռահաղորդակցության ծառայությունների, ռադիո և հեռուստատեսության հեռարձակման և էլեկտրոնային եղանակով ծառայություններ իրականացնող տնտեսավարող սուբյեկտների հարկման վայր է համարվում այն վայրը, որտեղ «գտնվում է» սպառողը: Եթե նման ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտները չեն ցանկանում գրանցվել իրենց կողմից ծառայություններ մատուցած ԵՄ բոլոր անդամ երկրների հարկային ծառայություններում, ապա վերջիններս կարող են գրանցվել միայն մեկ երկրի հարկային ծառայությունում՝ «մեկ պատուհան» ռեժիմով:
- 2015 թվականին նվազող ԱԱՀ 15% դրույքաչափ կիրառվում է սոցիալական ուղղվածությամբ հաստատությունների համար:

2015 թվականին նշվել է, որ Լատվիայում անհրաժեշտ է կատարել լրացուցիչ քայլեր՝ 2016-2017 թվականներին ՀՆԱ-ն 0.6 տոկոսով ավելացնելու համար: Մասնավորապես նշվել է, որ անհրաժեշտ է զերծ մնալ եկամտահարկի նվազեցման քաղաքականությունից՝ հրաժարվելով 2015 թվականին եկամտահարկը սահմանել 23 տոկոս և ևս

1 տոկոս նվազեցնել 2016 թվականին⁸¹: Բացի այդ, գույքահարկի դրույքաչափը ևս պետք է բարձրացվի, քանի որ վերջինս կազմում է ՀՆԱ-ի 0.8 տոկոսը, ինչը բավականին ցածր է միջին եվրոպական ցուցանիշից: Այսինքն, հարկային միջոցառումները պետք է բավարար լինեն ՀՆԱ-ի աճն ապահովելու համար, իսկ որպես այլընտրանքային տարբերակ առաջարկվել է բարձրացնել շահույթահարկի դրույքաչափը, որը ԵՄ անդամ երկրներում ամենացածրն է⁸²:

Ինչ վերաբերում է ՀՀ հարկային համակարգին և հարկային քաղաքականությանը, հարկ ենք համարում նշել, որ տարբեր հարկատեսակներ սահմանելուց բացի՝ հարկային օրենսդրությամբ կիրառվում են նաև հարկ վճարողներին խախտելու միջոցներ՝ հարկային արտոնություններ: Մասնավորապես՝ հարկային օրենսդրությամբ կարող են սահմանվել հարկային արտոնությունների հետևյալ տեսակները⁸³.

1. հարկվող օբյեկտի նվազեցում,
2. հարկի դրույքաչափի նվազեցում,
3. հարկի նվազեցում,
4. հարկի հաշվարկման ժամկետի հետաձգում,
5. հարկի վճարման ժամկետի հետաձգում,
6. հարկային օրենսդրությունը և Հայաստանի Հանրապետությունում հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերը խախտելու համար հաշվարկված հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերից և տուգանքներից ազատում, նվազեցում, վճարման ժամկետների հետաձգում,
7. բանկի կամ վարկային կազմակերպության կողմից հարկային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար տուժանքների և այլ \$ինանսական պատժամիջոցների վճարման պարտավորության հետաձգում՝ ՀՀ կենտրոնական բանկի

⁸¹ ՀՀ ՖՆ, «Միջազգային հարկային նորություններ»: Եկամուտների քաղաքականության, գնահատման և կարգապահական ծրագրերի վարչություն: 2015թ. մայիս, էջ 17/19 էջ/:

⁸² Նույն տեղում:

⁸³ «Հարկերի մասին» ՀՀ օրենք, հոդված 12: Ընդունվել է 14.04.1997: ՀՀ ՊՏ 1997.05.20/11 <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1837#2>

կողմից բանկի կամ վարկային կազմակերպության պարտատերերի պահանջների սառեցման (մորատորիումի) ժամանակահատվածում:

Չարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով հարկ վճարողներին փոխհատուցվում է վճարված հարկի գումարը: Չարկային արտոնությունները սահմանվում են օրենքով, եթե առանձին հարկատեսակների մասին օրենքներով այլ բան նախատեսված չէ: Գործող հարկային արտոնության դադարեցման կամ փոփոխման դեպքում սահմանվում է տվյալ արտոնությունից օգտվող հարկ վճարողների նկատմամբ դրակիրառման կարգը:

Օրինակ, հարկային արտոնությունների մասով 2014-2015թթ. ընդունվել են «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» և «Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքները: Համաձայն վերջինիս սահմանամերձ համայնքի բնակչության ռեգիստրում հաշվառված և սահմանամերձ համայնքում մշտական բնակություն ունեցող անձանց սպառած բնական գազի, էլեկտրական էներգիայի, ոռոգման ջրի վարձավճարները մասամբ փոխհատուցվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից⁸⁴: Բացի այդ նույն օրենքի հոդված 3-ի համաձայն, սահմանամերձ համայնքների վարչական տարածքում գտնվող, մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքերում նեցող գյուղատնտեսական նշանակության հողատարածքների, ներառյալ՝ բնակավայրերում բնակչին արարող այն համար հատկացված, տնամերձ և այգեգործական, ամառանոցային, հողամասերը) համար վճարման ենթակա հողի հարկի և այդ հողերի վրա ունեցած անշարժ գույքի գույքահարկի տարեկան գումարը հարկ վճարող ֆիզիկական և իրավաբանական անձանց անուսից, նրանց փոխարեն համապատասխան համայնքի բյուջե վճարվում է ՀՀ տարեկան պետական բյուջեով այդ նպատակի համար նախատեսված գումարներից, ՀՀ կառավարության

⁸⁴ «Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի հոդված 2: Կ-665-15.11.2014-SS-010/0

կողմից սահմանված կարգով⁸⁵:

«Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի ստեղծման նախադրյալը սահմանամերձ գյուղերում տնտեսական գործունեության խթանումն ու նոր աշխատատեղերի ստեղծումն է՝ այդ բնակավայրերում գործազրկության խնդիրները լուծելու համար:

«Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենքում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ցանկում ներառված սահմանամերձ համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու արտոնությունների կիրառությունը նշանակում է, որ՝ այդ համայնքների վարչական սահմաններում գտնվող առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով բնակչությանը մանրածախ վաճառքի (առք ու վաճառքի) իրականացման գործունեությունից եկամուտներն ազատվում են շրջանառության հարկից, իսկ այդ գործունեությունն իրականացնող և շրջանառության հարկ վճարող համարվող անհատ ձեռնարկատերերն ազատվում են ձեռնարկատիրական գործունեության համար օրենքով նախատեսված եկամտային հարկից, ինչպես նաև տնտեսական գործունեության շրջանակներում արտադրության (բացառությամբ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների արտադրության) կազմակերպման արդյունքում ստացված արտադրանքի՝ իրացումից եկամուտներն ազատվում են շրջանառության հարկից, օտարման գործարքներն ազատվում են ավելացված արժեքի հարկից, եթե Ցանկում ներառված սահմանամերձ համայնքներում գործունեությունն իրականացնող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենքի հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով իրենց գրանցման վայրի հարկային մարմին չեն ներկայացրել սույն ենթակետով նախատեսված արտոնությունից

⁸⁵ «Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի հոդված 3: Կ-665-15.11.2014-SS-010/0

հրաժարվելու վերաբերյալ հայտարարություն, իրացումից ստացման ենթակա եկամուտներն ազատվում են շահույթահարկից կամ եկամտային հարկից:

Մեկ այլ հարկային արտոնություն կիրառվում է ՓՄՁ-երի ուղորտում: Այսպես, ՓՄՁ-երին խրախուսելու նպատակով հանրապետությունում կիրառվում են բազմաթիվ գործիքներ, այդ թվում՝ հարկային արտոնություններ: Դրանց նպատակը գործարար միջավայրի բարելավումն է՝ հատկապես ՓՄՁ-երի համար: Չարկային բեռի թեթևացումն, ինչ խոսք, գործարարության զարգացման երաշխիքներից է, ինչը կարող է նպաստել բիզնեսի կայացմանն, այդ թվում նաև՝ նոր աշխատատեղերի ստեղծմանը⁸⁶:

«Արտոնագրային վճարների մասին» Չայաստանի Չանրապետության օրենքով նախատեսված գործունեությունը, բացառությամբ թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրման գործունեության, ազատվում է արտոնագրային վճարից, իսկ այդ գործունեությունն իրականացնող անհատ ձեռնարկատերերն ազատվում են ձեռնարկատիրական գործունեության համար օրենքով նախատեսված եկամտային հարկից. կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերն ազատվում են Ցանկում ներառված սահմանամերձ համայնքներում իրականացվող գործունեության մասով Չայաստանի Չանրապետության օրենքներով նախատեսված դեպքերում, որպես հարկային գործակալ, հարկը հաշվարկելու, պահելու և պետական բյուջե փոխանցելու պարտավորությունից, բացառությամբ հարկային գործակալի կողմից վճարվող՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներից և դրանց հավասարեցված եկամուտներից օրենքով սահմանված ընդհանուր կարգով հաշվարկվող եկամտային հարկի և սոցիալական վճարի⁸⁷:

Չարկային դաշտում տեղի են ունեցել հարկային բարեփոխումներ և սահմանվել են հարկային արտոնությունները նստանեկան ձեռնարկատիրության սուբյեկտների համար: Այսինքն՝ արտադրությամբ և ծառայությունների մատուցմամբ զբաղվող ընտանեկան ձեռներեցների համար գործում է հարկման արտոնյալ

⁸⁶ <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=6673&Reading=0#>

⁸⁷ «Սահմանամերձ համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենք : ՀՀՊՏ 2014.12.17/69(1082)

համակարգ:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ են կատարվել, որոնք վերաբերում են ընտանեկան ձեռնարկատիրության հարկմանը⁸⁸: Համաձայն վերջինիս ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտները ազատվում են բոլոր պետական հարկերից: Նույն օրենքի հոդված 13-ի 10-րդ կետի համաձայն ընտանեկան ձեռնարկատիրությունը շահույթ ստանալու նպատակով ընտանիքի մեկից ավելի անդամների կողմից համատեղ իրականացվող գործունեությունն է, որի սուբյեկտներ կարող են համարվել, ինչպես անհատ ձեռնարկատերերը, այնպես էլ՝ առևտրային կազմակերպությունները: Սակայն երկուսի դեպքում էլ գործունեությունը պետք է իրականացվի բացառապես ընտանիքի անդամների անմիջական մասնակցությամբ: Իսկ առևտրային կազմակերպության դեպքում կանոնադրական կապիտալը և ամբողջությամբ պետք է պատկանի ընտանիքի մեկ կամ մի քանի անդամների, և եթե կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է բացառապես կազմակերպության բաժնետերերի ընտանիքի անդամների միջոցով:

Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտներն այն անձինք են, որոնց կողմից նախորդ օրացուցային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների իրացումից հասույթը՝ առանց ԱԱՀ-ի չի գերազանցի 18.0 մլն դրամը: Այսինքն՝ Հայաստանում ներդրվում է «ընտանեկան բիզնես կարգավիճակը» և տարեկան մինչև 18 մլն դրամ շրջանառություն ունեցողները ազատվում են հարկերից:

Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտներ չեն դիտարկվի ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների արտադրողներ և ներմուծողներ ձեռնարկատիրություններն ու նաև այն առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, եթե առևտրային կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատիրոջը պատկանում է այլ ռեզիդենտ համարվող առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալի 20 տոկոս և ավելի

⁸⁸ «Հարկերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին: Գլուխ 2: ՀՀՊՏ 2014.07.30/41(1054) Հոդ. 660: ՀՕ-134-Ն

բաժնեմասը:

Քանի որ շրջանառության հարկի դեպքում շրջանառության հարկ վճարողների կողմից կատարվող ձեռքբերումները չփաստաթղթավորելու գործընթացը նպաստում է ստվերային շրջանառությունների ավելացմանը, ուստի հարկային ոլորտը կարգավորող մարմինների տեսակետից, դա էլ սահմանափակում է շրջանառության հարկ վճարողներին ապրանքներ մատակարարող խոշոր տնտեսավարող սուբյեկտների լիարժեք հարկման հնարավորությունները: Իսկ դա նշանակում է, որ անհրաժեշտ է խտացնել փաստաթղթերով հիմնավորելու պարտադիր պահանջը խախտելու դեպքերում կիրառվող պատասխանատվության միջոցները՝ նպաստելով ՀՀ տնտեսությունում կատարվող գործարքների փաստաթղթավորմանը ու տնտեսավարող սուբյեկտների լիարժեք հարկմանը:

2015թ.-ից հարկային արտոնություններ են սահմանվել նաև ՀՀ արտահանող գործարարների համար, մասնավորապես, հաշվի առնելով ԵԱՏՄ երկրների հետ անդամակցության խնդիրը: Այսպես, ՀՀ արտահանողներին հնարավորություններ են տրվում ստանալ մեծ եկամտաբերություն ապրանքների արտահանման դեպքում դեպի ԵԱՏՄ երկրներ՝ վճարելով ավելի քիչ շահութահարկ: Քանի որ ՀՀ կառավարությունը հավանություն է տվել «Շահութահարկի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու նախագիծը⁸⁹, վերջինիս ընդունման դեպքում հարկային լրացուցիչ խթաններ կտրամադրվեն ՀՀ կառավարության հավանությանն արժանացած արտահանման ծրագրով ՀՀ տարածքից արտահանում իրականացնող ռեզիդենտ հարկ վճարողներին՝

- Հարկ վճարողների խմբում չկան մետաղական օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) վերամշակման, թանկարժեք քարերի մշակման և (կամ) իրացման, ոսկերչական իրերի արտադրության և (կամ) իրացման, թանկարժեք մետաղների արտադրության և (կամ) իրացման, ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների արտադրության և (կամ) իրացման ոլորտներից

⁸⁹ «Շահութահարկի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու նախագիծ:
http://www.mineconomy.am/uploads/glxavor_1_Razmavarutyun_ardyunaberutyun.pdf և
<http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=6428&Reading=0>

որևէ մեկու մ գործու նեռլ թյ ու ն իրակ անաց նող հարկ վճարողներ:

- Հարկ վճարողների խմբի կողմից հաշվետու տարվա ընթացքում ՀՀ տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանված և (կամ) Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ տեղափոխված՝ ՀՀ-ում արտադրված ապրանքների մաքսային արժեքի, ոչ ռեզիդենտ կազմակերպություններին ՀՀ տարածքից դուրս մատուցված ծառայությունների և (կամ) ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար ՀՀ տարածքից դուրս կատարված աշխատանքների արժեքի հանրագումարը կազմում է առնվազն 40 մլրդ. դրամ: Ընդ որում՝ արտահանման ծրագրի իրակ անացման տվյալ հաշվետու տարվա ընթացքում հարկ վճարողների խումբն ապահովում է ՀՀ տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանված և (կամ) ԵԱՏՄ անդամ պետություններ տեղափոխված՝ ՀՀ-ում արտադրված ապրանքների մաքսային արժեքի՝ ՀՀ կառավարության կողմից սահմանվող նվազագույն մեծությունը:

- Հարկ վճարողների խմբի մեջ մտնող հարկ վճարողների՝ ՀՀ ռեզիդենտ բանկերում բացված բանկային հաշիվներին արտահանման ծրագրին վերաբերող գործու նեռլ թյ ու նից հանրագումարային հաշվարկով մուտքագրվել է առնվազն 40 մլրդ. դրամին համարժեք արտարժույթ:

- Հարկ վճարողների խմբի մեջ մտնող հարկ վճարողները հաշվետու տարվա ընթացքում չունեն ՀՀ տարածքում ապրանքների մատակարարումից, աշխատանքների կատարումից կամ ծառայությունների մատուցումից ստացման ենթակա եկամուտներ:

- Նշված բոլոր պայմանները միաժամանակ բավարարող հարկ վճարողների խմբի մեջ մտնող հարկ վճարողի շահույթահարկի գումարը հարկվող շահույթի նկատմամբ հաշվարկվում է.

- **5% դրույքաչափով**, եթե հարկ վճարողների խմբի կողմից հաշվետու տարվա ընթացքում ՀՀ տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանված և ԵԱՏՄ անդամ պետություններ տեղափոխված՝ ՀՀ-ում արտադրված ապրանքների մաքսային արժեքի, ոչ ռեզիդենտ կազմակերպություններին ՀՀ տարածքից դուրս մատուցված ծառայությունների և (կամ) ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար ՀՀ տարածքից դուրս

կատարված աշխատանքների արժեքի հանրագումարը կազմում է առնվազն 40 մլրդ դրամ,

• **2% դրույքաչափով**, եթե հարկ վճարողների խմբի կողմից հաշվետու տարվա ընթացքում ՀՀ տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանված և (կամ) ԵԱՏՄ անդամ պետություններ տեղափոխված՝ ՀՀ-ում արտադրված ապրանքների մաքսային արժեքի, ոչ ռեզիդենտ կազմակերպություններին ՀՀ տարածքից դուրս մատուցված ծառայությունների և (կամ) ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար ՀՀ տարածքից դուրս կատարված աշխատանքների արժեքի հանրագումարը կազմում է առնվազն 50 մլրդ դրամ:

Նախատեսված՝ արտահանման ծրագրերի հավանության արժանացման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:


Այսինքն՝ այս նախաձեռնության արդյունքում շահութահարկի 20 տոկոս դրույքաչափը նվազեցվում է 10 անգամ, որի նպատակը տնտեսական աճի տեմպերի ավելացումն ու ներդրումների աճն է, ինչպես նաև ներդրումների աճը, նոր աշխատատեղերի ստեղծումն ու պետքյուլ շեղրացուցիչ եկամուտների ապահովումն է:

Ապրանք արտահանող տնտեսվարողների շահութահարկը առաջարկվում է նվազեցնել 10 անգամ՝ ներկայիս 20 տոկոսի փոխարեն՝ սահմանելով 2 տոկոս: Այս արտոնությունից, սակայն կարող են օգտվել միայն արտահանմամբ զբաղվող և տարեկան 40 մլրդ. դրամի արտահանում ունեցող տնտեսվարողներն ու արտահանող ընկերությունները:

Ստացվում է, որ ՀՀ-ում տարեկան 40 մլրդ դրամի արտահանում ունեցող տնտեսվարողները վճարում են շահութահարկի 2 տոկոս դրույքաչափի, իսկ մնացածը հարկվում են սովորական ռեժիմով: Հարց է առաջանում, թե ՀՀ տնտեսության որ ոլորտները կարող են ապահովել գերշահույթներ:

Կարծես, խնդիրը հանգուցալուծվում է հանքարդյունաբերության ոլորտով: Սակայն սույն օրենքում նշվում է, որ հարկային աննախադեպ արտոնությունից չեն կարողանա օգտվել հանքարդյունաբերության և լեռնահանքային արդյունաբերության ձեռնարկությունները: Պետք է նշել, որ 40-50

մլրդ դրամի արտահանում ունեցող տնտեսվարողներ ներկայումս գոյություն չունեն, իսկ նման ծավալի միակ արտահանողը պղնձամոլիբդենային ոլորտի ընկերություններն են, որոնք արտահանում են պղնձի խտանյութ: Սակայն տեսականորեն և հետագայում և նաև գործնականում մի քանի ընկերությունների միավորման արդյունքում արտոնյալ հարկով հարկվող արտահանողներ կառաջանան, իսկ դա նշանակում է, որ օրենքում նույնպես սահմանվել են սահմանափակումներ՝ կանխելու համար նման չարաչափումները: Իսկ դա նշանակում է, որ անհրաժեշտ է նաև բարեփոխումներ իրականացնել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի այն հոդվածներում⁹⁰, որոնք վերաբերում են հարկային մարմնի կողմից անուղղակի եղանակով հարկերի հաշվարկման հիմքերին և մեթոդներին, հարկվող օբյեկտների գնահատման և հարկային պարտավորությունների հաշվարկման մեխանիզմներին:



Գծապատկեր 2.1.2 ՀՀ արտահանման դինամիկան 2000-2015թթ.⁹¹

Օրինակ, գծապատկեր 2.1.2-ի տվյալներից կարելի է եզրակացնել, որ 2000-2015թթ. ՀՀ արտահանման ծավալների միջին աճը կազմել է 859.02 մլն ԱՄՆ դոլար, իսկ աճի տեմպը՝ 115.6%: Եվ եթե միայն դիտարկենք 2014թ. արտահանումը, որը կազմել է 1547.3 մլն ԱՄՆ դոլար,

⁹⁰ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի Գլուխներ 3-4: ՀՀՊՏ 1997.05.20/11: ՀՕ-107:

⁹¹ <http://armstat.am/am/?nid=126&id=10003>

ապա 1000 խոշոր արտահանողների համար վերջինս կազմել է 1.55 մլն ԱՄՆ դոլար, որը չի բավարարում շահութահարկի արտոնութայնության օգտվելու պահանջը: Գործարար միջավայրի գործունային վերլուծության ժամանակ անհրաժեշտ է հիմնավորել արտահանման ապրանքային բևեռացման մակարդակի ազդեցությունը և դրա հետ կապված գործունեների ազդեցությունը գործարար ակտիվության բարձրացման, տնտեսության զարգացման և գործարար միջավայրի բարելավման համար: Քանի որ արտահանման ապրանքային բևեռացման մակարդակը հանդիսանում է նաև կարևոր մակրոտնտեսական գործոն, պետք է նշել, որ այն բավականին բարձր է մնացած հետխորհրդային երկրների համեմատ, բացառությամբ Ադրբեջանի, Ռուսաստանի Դաշնության (արտահանման կառուցվածքում հիմնականում գերակշռում է վառելիքի արտահանումը) և որոշ չափով Ուկրաինայի (գերակշռում է քարածուխը և երկաթը):


Մասնավորապես, 2006-2014թթ. նշված ապրանքային բաժինների միջև, արձանագրվել են կառուցվածքային փոփոխություններ. Օրինակ ադամանդագործությունն իր տեղը (շուրջ 50% տեսակարար կշռից իջել է 16.3%)⁹² զիջել է ոչ թանկարժեք մետաղներին ու պատրաստի սննդի արտադրանքին (**Ցալելված 1**): Չնայած վերջին տարիներին որոշակի աճի միտում է արձանագրվել մանածագործական արտադրանքի ու մեքենաների ու սարքավորումների արտահանման ծավալային ու արժեքային ցուցանիշների համար:

Ինչպես ցույց են տալիս **գծապատկեր 2.1.3**-ի տվյալները, 2000-2015թթ. ապրանքների արտահանում/ՐՆԱ և ապրանքների ներմուծում/ՐՆԱ հարաբերակցությունները ունեցել են ինչպես աճի, այնպես էլ՝ նվազման միտում: Օրինակ՝ ապրանքների ներմուծում/ՐՆԱ հարաբերակցությունը հատկապես աճել է 2000 թվականին՝ կազմելով 46,28%, 2003 թվականին՝ 45,58%, 2010-2014թթ՝ միջինը 41,36%, 2015թվականին այն նվազել է շուրջ 9,73%-ային կետով՝ կազմելով 30,90%:

2000-2015թթ, ապրանքների արտահանում/ՐՆԱ հարաբերակցությունը միջինը կազմել է 15,23% և նույն

⁹²Նման նվազման միտումը հիմնականում պայմանավորված է ադամանդի միջազգային շուկայում դեռևս 2011թ. սկսված կառուցվածքային որոշ փոփոխություններով, իսկ պղնձի ու մոլիբդենի գծով՝ մինչև 2014թ կեսերը միջազգային շուկայում դրանց գների աճով:

Ժամանակահատվածի նկատմամբ ներմուծում/ՅՆԱ հարաբերակցությանը զիջում է շուրջ 2,6 անգամ⁹³: Հատկապես, արտահանում/ՅՆԱ հարաբերակցությունը աճել է 2003 թվականին, որը կազմել է 24,42%, 2008-2009թթ. այն կտրուկ նվազել է, որը համընկել է Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետ՝ միջինը կազմելով 8,64%, իսկ սկսած 2010-2015թթ. այն սկսել է աճել՝ միջինը կազմելով 13,46%:



Գծապատկեր 2.1.3 2000-2015թթ. ՀՀ-ում ապրանքների ներմուծման և արտահանման տեսակարար կշիռները ՅՆԱ-ում⁹⁴


Ինչպես ցույց են տալիս **գծապատկեր 2.1.4**-ի տվյալները, 2000-2015թթ. ՀՀ արտահանման և ներմուծման աճը նախորդ տարվա նկատմամբ նույնպես ունեցել են տարբեր դինամիկաներ: Օրինակ, կառուցվածքում կայուն աճի միտում է ունեցել հումքային ապրանքների արտահանումը, մասնավորապես՝ մետաղներ և հանքաքար, ինչպես նաև ստանդարտ ապրանքները, ինչպիսիք են՝ կոնյակ, գինի և բանջարեղենային ու մրգային պահածոներ:

Ընդհանուր առմամբ, սա նշանակում է, որ չնայած երկրի ՅՆԱ-ն ունենալով դրական աճ, արտահանումը վերջին տարիներին ձեռք է բերել նվազման միտում, որը այլ հավասար պայմաններում ինչ-որ

⁹³ Բևեռացման գործակից:

⁹⁴ ՀՀ ԱՎԾ հրապարակումներ, “ՀՀ Արտաքին առևտուրը” տարեկան ժողովածուներ, “ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը” ամսական հրապարակումներ” սեփական հաշվարկներ:

չ ափով պայ մանավորված է վերջին տարիներին ազգային դրամի արժևորման հետ: Այդ երևույթը, վերջին հաշվով (տրամաբանորեն) հանգեցնում է այն հետևությունը, որ արտահանումը երկրի տնտեսության վրանշանակալի ազդեցությունն դեռևս չի ունենում:



Գծապատկեր 2.1.4 2000-2015թթ. ՀՀ-ում արտանքների արտահանման և ներմուծման աճը նախորդ տարվանկատմամբ⁹⁵

Հայաստանի արտահանման հիմնական գործընկեր երկիրն է Ռուսաստանի Դաշնությունը, և 2010-2014թթ. արտահանման ծավալը դեպի Ռուսաստանի շուկա գրեթե եռապատկվել է՝ կազմելով 216.3 մլն. դոլար (**Սղյուակ 2.1.3**): Գործընկեր երկրների շարքում նշանակալի է Եվրոմիության երկրների տեսակարար կշիռը, ուր արտահանվում է Հայաստանյան արտանքների կեսից ավելին, մասնավորապես Գերմանիա (հիմնականում արտահանվում է մոլիբդեն), Նիդեռլանդներ (հիմնականում արտահանվում է երկաթամիահածուլվածք, մոլիբդենի հանքաքար), Բուլղարիա (հիմնականում պղնձի հանքաքար և ալյումինի փայլաթիթեղ), Բելգիա (հիմնականում ադամանդ): Մնացած երկրների շարքում թերևս կարելի է առանձնացնել ԱՄՆ-ը (ոսկի և ոսկերչական իրեր, ալյումինի փայլաթիթեղ, ոգելից խմիչքներ) Կանադան (ոսկերչական իրեր) և Իրանը (մետաղի ջարդոն):

⁹⁵ <http://minfin.am/index.php?cat=41&lang=1>

2010-2014թթ. ՀՀ սարանքների արտահանման դիմախկան՝ ըստ հիմնական գործընկեր երկրների (մլն. դոլար)⁹⁶

	2010	2011	2012	2013	2014
Ընդամենը	722.9	973.9	985.1	1152.3	1069.1
որից՝					
ԱՊՐ երկրներ	125.1	187.9	212.5	355.3	339.7
որից՝					
Ռուսաստան	77.9	119.0	121.2	201.5	216.3
Ուկրաինա	10.5	13.7	22.6	46.3	22.2
Վրաստան	29.1	46.8	54.6	87.9	82.1
Թուրքմենստան	0.6	1.0	1.8	2.5	4.5
Ղազախստան	1.7	2.6	4.0	7.2	2.9
Բելառուս	2.0	2.5	3.8	2.5	2.8
ԱՊՀ այլ երկրներ	3.3	2.1	4.5	7.4	9.0
Ոչ ԱՊՐ երկրներ	597.8	786.1	772.6	797.0	729.5
որից՝					
ԵՄ երկրներ	260.1	454.3	473.5	562.8	576.2
որից՝					
Գերմանիա	83.2	152.1	148.0	169.7	183.7
Նիդերլանդներ	26.3	133.1	126.9	156.0	130.9
Բելգիա	107.9	124.6	108.8	100.2	91.1
Իտալիա	28.4	25.6	28.9	30.0	27.6
Բուլղարիա	4.7	0.8	1.3	46.9	61.2
Իսպանիա	0.8	3.0	26.8	15.5	11.2
Ֆրանսիա	1.8	2.0	4.1	9.4	10.6
ԵՄ այլ երկրներ	7.0	13.0	28.5	35.0	59.8
Այլ երկրներ	337.7	331.8	299.1	234.1	153.3
որից՝					
Իսրայել	98.4	112.2	87.4	26.4	5.0
ԱՄՆ	70.6	62.2	65.1	51.4	52.8
Շվեյցարիա	45.4	34.7	72.1	49.3	12.1
Իրան	30.6	28.5	29.6	38.5	25.2
Չինաստան	21.7	9.2	0.5	7.9	1.8
Կանադա	8.2	11.5	11.1	5.9	15.9
Միացյալ Արաբական Էմիրություններ	8.9	10.4	5.6	6.8	10.4
Մնացած երկրներ	53.9	63.1	27.7	48.0	30.1

Պետք է նշել, որ ԱՊՀ Գործարար միջավայրի գործունային վերլուծության ժամանակ անհրաժեշտ է հիմնավորել տնտեսության այն ոլորտները, որոնք վճռորոշ դեր են խաղում գործարար ակտիվության բարձրացման և տնտեսության զարգացման համար:

⁹⁶ ՀՀ ԱՎԾ հրապարակումներ՝ “ՀՀ Արտաքին առևտուրը 2-նիշ դասակարգմամբ”, ինչպես նաև <http://www.customs.am/Content.aspx?itn=csCIFForeignTradeByCountries>


Քանի որ SS ոլորտը հասել է զարգացվածության այնպիսի աստիճանի, որ անհրաժեշտ են որակական նոր փոփոխություններ, որպեսզի SS ոլորտի միջազգային քարտեզում Հայաստանը գրավի իր հատուկ տեղը: Իսկ դրա համար անհրաժեշտ է սահմանել հարկային արտոնություններ: Մասնավորապես՝ SS ոլորտում հավաստագրված նոր, սկսնակ ստեղծվող, 30-ից ավելի աշխատակից չունեցող ընկերությունները (Startup-ները) երեք տարի ժամկետով պետական աջակցության շրջանակներում ազատվում են շահույթահարկից⁹⁷: Նշենք, որ օրինագիծը նախատեսված է գործածել մինչև 2020 թ-ը, իսկ արտոնությունը սահմանվում է ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից տրված հավաստագրի հիման վրա: Այս օրենքը ՀՀ կառավարությունը հեղինակել է դեռ 2000 թվականից Հայաստանի տնտեսության զարգացման գերակա ճյուղ համարվող տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին ավելի գործունե աջակցություն ցուցաբերելու նպատակով:

SS ոլորտում հարկային արտոնության տրամադրումը հետագայում կնպաստի տվյալ ոլորտում սկսնակ ընկերությունների ձևավորմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, տարածաշրջանում Հայաստանի SS ոլորտի մրցունակության և երկրի վարկանիշի բարձրացմանը: Նշված արտոնությունների տրամադրումը կարևոր խթան կհանդիսանան սովորում գործող SS ոլորտի սուբյեկտների գրանցման և իրավական դաշտում գործելու համար:

Այսպիսով, ակտիվ նպատակային միջոցառումները, մասնավորապես՝ հարկային արտոնությունները արտերկրում և ՀՀ-ում հետապնդում են հետևյալ նպատակները՝ տնտեսության զարգացում, նոր աշխատատեղերի ստեղծում, գործարար ակտիվության բարձրացում:

Գործարար միջավայրի բարելավումը պայմանավորված է նաև տնտեսական իրավիճակի բարելավմամբ՝ մասնավորապես տնտեսական աճի կայունությամբ: Այդ առումով, անհրաժեշտ է վերլուծել և հարկային համակարգի ազդեցությունը տնտեսական աճի վրա:

⁹⁷ «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենք



Գծապատկեր 2.1.5. ՀՀ տնտեսության հիմնական ու որտևների դինամիկան 2000-2015թթ.

2001-2015թթ. հարկային եկամուտների և անվանական ՀՆԱ-ի վերլուծությունը ներկայացնում է նշելով⁹⁸, պետք է նշել, որ առաջացել է բավականին մեծ տարբերություն 2 ցուցանիշների աճի հետևանքով, այսինքն՝ հարկային եկամուտների աճը ավելի դանդաղ է ընթացել, քան անվանական ՀՆԱ-ի աճը, իսկ առաջացած տարբերությունը կարելի է բացատրել նաև ստվերային տնտեսության ծավալների ավելացմամբ: Ընդ որում, եթե ՀՆԱ-ի հաշվարկման մեջ ընկած են նաև սպառման ծախսերը, ապա վերջիններիս վրա ազդում են նաև բնակչության եկամուտներն ու հարկերը, մասնավորապես եկամտային հարկը, ԱԱՀ-ը:

Պետք է նշել, որ տնտեսության զարգացման տեսանկյունից գյուղատնտեսության աճը շարունակաբար գերազանցել է այլ ոլորտների նկատմամբ: Օրինակ՝ 2003-2014թթ. գյուղատնտեսության արտադրանքի ծավալը կազմել է միջինը 993369.5 մլն. դրամ, հանքարդյունաբերությունը՝ 102687 մլն. դրամ, մշակող արդյունաբերությունը՝ 433760 մլն. դրամ, շինարարությունը՝ 530 737,73 մլն. դրամ, առևտուրը՝ 540691 մլն. դրամ, տեղեկատվությունն ու կապը՝ 150997 մլն. դրամ **(Զավել վաճ 2):**

Ինչպես ցույց է տրված գծապատկեր 2.1.5-ում ամենամեծ տեսակարար կշիռը պատկանում է գյուղատնտեսության ոլորտին,

⁹⁸<http://www.taxservi.ce.am/Content.aspx?itn=TITaxStatArchive>

որը սկսած 2000թ.-ից մինչև 2004թ. շարունակաբար աճել է և ՀՆԱ-ում կազմել 23.2 տոկոս, սակայն սկսած 2005 թվականից այն սկսել է նվազել և 2014 թվականին կազմել է 19.7 տոկոս : 2004-2014թթ. գյուղատնտեսության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում նվազել է, հատկապես 2008-2010թթ. ժամանակահատվածում, որը համընկել է Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետ, 2011թ. այն կրկին աճել է, սակայն դրանից հետո աճը դանդաղել է՝ 2014թ. հասնելով 19.7 տոկոսի: Պետք է նշել, որ այս ոլորտում գործում է շահույթահարկի արտոնություն, մասնավորապես գյուղատնտեսական արտադրանքի արտադրությանը զբաղված հարկատուները՝ գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի, ինչպես նաև հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացումից ստացված և այլ եկամուտների մասով, եթե վերջիններիս տեսակարար կշիռը համախառն եկամտի մեջ չի գերազանցում տասը տոկոսը:⁹⁹ Թեպետ գործող հարկային արտոնությունը չի բերում այս ոլորտի զարգացմանը՝ ենթակառուցվածքային բազմաթիվ խնդիրների և ռիսկերի առկայության պայմաններում:

Նույն տատանման միտումներ են նկատվել ՀՆԱ-ի մեջ մշակող արդյունաբերության մոտ, որը 2000թ.-ից 16.8 տոկոսից դարձել է 2014թ.-ին 10.1 տոկոս, վերջինս հատկապես նվազել է 2006 թվականից սկսած, ինչը շարունակվել է 2010թ.-ը: Մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում պայմանավորված է, հատկապես, տարածաշրջանային երկրներում այդ ապրանքների արտահանման ծավալների նվազմամբ, ինչին ազդել է նաև տարադրամի փոխարժեքային տատանումները:

Հանքագործական արդյունաբերության մասով կարելի է փաստել, որ վերջինիս տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2000թ. 0.8 տոկոսից ավելացել է և 2014թ. հասել է 2.2 տոկոսի, հատկապես՝ վերջինս աճը նկատվել է 2004-2005թթ. ինչը պայմանավորված է այդ ոլորտում արտահանման ծավալների աճով:

Ծինարարության կշիռը ՀՆԱ-ում սկսել է աճել 2003 թվականից սկսած, որի այսպես ասած «գերտաքացումը» տեղի է ունեցել մինչև 2008թ.: 2009-2014թթ. այս ոլորտում տեղի ունեցան փոփոխություններ,

⁹⁹ «Շահույթահարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 36: ՀՀ ՊՏ 1997.12.03/27


մասնավորապես շինարարության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում սկսեց նվազել, որը նույնպես պայմանավորված է եղել ֆինանսական ճգնաժամով: Ինչ վերաբերում է այս ոլորտի կտրուկ աճին կամ «գերտաքացման» երևույթին, դրանք կարելի է պայմանավորել նաև նրանով, որ այդ ժամանակաշրջանում շինարարության ոլորտում նկատվում էր պահանջարկի և շինարարական աշխատանքների աճ, իսկ ոլորտի զարգացման վրա ազդել են միջազգային հեղինակավոր ընկերությունների մասնակցությունը կատարվող աշխատանքներին:

Առևտրի ոլորտում, հակառակը նկատվում է աճ, եթե 2000թ. առևտրի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմել է 9.9 տոկոս, ապա 2001-2014թթ. այն զգալիորեն աճել է և արդեն 2014 թվականին կազմել է 12.3 տոկոս:

ՀՀ տնտեսության հիմնական ոլորտների վերլուծությունից հետո հարկ ենք համարում ավելացնել այն, որ դրանց զարգացման վրա ազդում են տարբեր գործոններ (**Չափելի ված 3**), սակայն էլ նեղված ատենախոսության թեմայի բովանդակությունից, առանձնացնենք հարկային գործոնները, որոնք, կարելի ասել, վճռորոշ դեր են խաղում ոչ միայն նշված ոլորտների զարգացման, այլ նաև՝ գործարար միջավայրի զարգացման վրա: Իրականացնելով համեմատական վերլուծություն ՀԲ-ի «Գործարարությանը զբաղվելու» զեկույցի արդյունքներով պարզվել է (**Չափելի ված 4**), որ 2008-2015թթ. ՀՀ-ում հարկային բեռն ունեցել է տատանման միտում, մասնավորապես՝ 2008 թվականին այն 51,2 տոկոսից 2009 թվականին կտրուկ նվազել է և 12,6 տոկոսով 38,6 տոկոս, որը պահպանվել է 38,6 տոկոսի սահմանում մինչև 2011 թվականը: Այնուհետև, 2012 թվականին հարկային բեռն ավելացել է նախորդ տարվա նկատմամբ 0,2 տոկոսային կետով, իսկ սկսած 2014 թվականից հարկային բեռը նվազել է և 2015 թվականին հասել է 20,9 տոկոս: Դրական փոփոխություններ են նկատվել նաև Վրաստանում, մասնավորապես՝ 2008 թվականին հարկային բեռը 38,6 տոկոսից նվազել է 22,2 տոկոսով և 2015 թվականին գնահատվել շուրջ 16,4 տոկոս (Գծապատկեր 2. 1. 7):

Ստացվում է, որ քան ցածր է հարկային բեռի մակարդակը, այնքան բարձր է ներդրումային ակտիվության մակարդակը: Սակայն այս առումով, պետությունը հավաքագրում է ավելի քիչ հարկեր, որոնց արդյունքում նվազում է սոցիալական քաղաքականության

արդյունավետությունը:



Գծապատկեր 2.1.7 Հարկային բեռը ԵԱՏՄ անդամ և տարածաշրջանային երկրներում 2008-2015թթ., %

Յետևաբար, հարկային բեռի ավելացումը խաթարում է տնտեսության բնական ընթացքը և ներկայացված ոլորտներում նկատվում են ստվերային տնտեսության առաջացման նախադրյալներ: Այդ առումով ՀՀ տնտեսության զարգացման համար, առաջարկում ենք վերանայել ՀՀ տնտեսության զարգացման ռազմավարությունը՝ հարկային արտոնություններ տալով այն ընկերություններին, որոնք ռազմավարական նշանակություն ունեն տալով հարկային արտոնություններ հատկապես այն ոլորտների զարգացմանը, որոնք ունեն տնտեսության զարգացման, արտահանման ավելացման համար: Արդյունքում՝ հանրապետությունում կարող են ձևավորվել տնտեսության զարգացման, տնտեսական կայուն զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման նախապայմաններ: Որպես այդպիսին կարող են հանդիսանալ մշակող և հանքագործական արդյունաբերությունը, գյուղատնտեսության զարգացումը, հատկապես՝ սննդի արտադրության ոլորտում: Վերջինս հետագայում երաշխաբեր կտա փոխարինել այն ապրանքների ներմուծումը, որոնք կարող են արտադրվել Հայաստանում, օրինակ՝ գյուղատնտեսական նշանակության ապրանքները:

Յետևաբար՝ Հայաստանի Հանրապետությունը, լինելով ԵԱՏՄ անդամ երկիրը, պետք է ընդունի ինտեգրացիոն միության, այսպես

ասած, «տնտեսական խաղի կանոնները»՝ ներդաշնակեցնելով հարկային, մաքսային, աշխատանքային և այլ օրենսդրությունները: Այդ գործընթացը հնարավորություն կտա հետագայում հավասար պայմաններ ստեղծելու եւս՝ անդամ երկրներում կապիտալի, մարդկային ռեսուրսների և բիզնեսի ազատ տեղաշարժմանը: Այսինքն, տնտեսական և իրավական օրենքների ներդաշնակեցումը պետք է համահունչ լինեն ներկա տնտեսական զարգացումներին՝ նպատակաուղղված լինելով գործող ընթացակարգերի պարզեցմանը և բիզնեսի համար այլ ընտրանքային ծախսերի կրճատմանը:

2.2 Մակրոտնտեսական և հարկային ցուցանիշների ազդեցությունը գործարար միջավայրի վրա

Յուրաքանչյուր երկրի կարևորագույն խնդիրը տնտեսական համակարգի ձևավորումն է, որը պետք է համահունչ լինի հասարակական քաղաքականության արդի պահանջներին: Ընդ որում, տնտեսական համակարգի կարևորագույն օղակներից է մակրոտնտեսական քաղաքականությունը, որի արդյունավետության բարձրացմամբ էլ պայմանավորված է տվյալ երկրի գործարար միջավայրի վարկանիշը:


Մակրոտնտեսական քաղաքականության և գործարար միջավայրի վարկանիշային գնահատման հիմքում ընկած են՝

1. հարկաբյուջե տային քաղաքականությունը,
2. դրամավարկային քաղաքականությունը,
3. արտաքին առևտրի քաղաքականությունը,
4. տնտեսության մրցունակությունը,
5. փոխարժեքային կուրսերը,
6. զբաղվածների թիվն՝ ըստ տնտեսության ոլորտների,
7. արտաքին պարտքերի և պետական բյուջեի պակասորդը
8. գնաճը և դրակամավարման ռազմավարությունը:

Բացի այդ, կարևոր խնդիր է երկրի ռիսկի գնահատումը, ինչը բավականին բարդ և աշխատատար գործընթաց է՝ պայմանավորված գործադիր, օրենսդիր և մասնավոր մարմինների միջև

հարաբերություններով և տնտեսական շահերի համակարգով **(Գծապատկեր 2.2.1):**

Նրանց միջև համագործակցության արդյունքում առաջանում են տարբեր տեսակի ռիսկեր, որոնք ազդում են երկրի սուվերենության և գործարար միջավայրի վարկանիշի վրա, ինչպես նաև հասարակության բարեկեցության վրա: Այսինքն՝



Տնտեսական գործունեության արդյունքում առևտրային կազմակերպությունները չեն կարող զերծ մնալ ռիսկերից, որոնք պայմանավորված են անվճարունակության և տրանսֆերտային գնազոյացման հետ:

Պետական մարմինները օրենսդրափորձական դաշտի ձևավորման արդյունքում տարբեր օրենքների ընդունման և դրանք գործնականում կիրառման ժամանակ չեն կարող զերծ չմնալ քաղաքական ռիսկերից, որոնք առաջացնում են ազգային անվտանգության, պետության և մասնավոր հատվածի շահերի բևեռացման խնդիրներ՝ խախտելով մակրո և միկրո միջավայրերի կայունությունը:

Հետևաբար, քաղաքական ռիսկի առաջացման ժամանակ խարխվում են սուվերեն ինքնիշխանության հիմքերը՝ բերելով երկրի անվճարունակություն, արտաքին պարտք, պետական բյուջեի պակասուրդ, արտահանման ծավալների կրճատում:

Առևտրային ռիսկի ժամանակ տնտեսական քաղաքականության

¹⁰⁰ Charles R. Kennedy, Political Risk Management, 1987, p.7.

արդյունավետությունը նվազում է, մասնավոր հատվածում առաջանում է տրանսֆերտային ռիսկեր, որոնք սահմանափակում են ուղղակի ներդրումները տնտեսության տարբեր ոլորտներում:

Աղյուսակ 2.2.1


Քաղաքական ռիսկի կառուցվածքն ու դրակապ մակրոտնտեսական քաղաքականության հետ¹⁰¹

Քաղաքական ռիսկի տեսակներ	Օրինականության հետկապված ռիսկեր	Կառավարման հետկապված ռիսկեր
Մակրոռիսկ	Հեղաշրջում և բարեփոխումներ	Ներդրումային գործունեության մասին օրենքի փոփոխություն. Օտարերկրյան ներդրումների մասին օրենքի փոփոխություն և այս ոլորտին վերաբերող իրավական ակտերի փոփոխություն
Միկրոռիսկ	Ահաբեկչություն	Արտաքին առևտրի հետկապված պետական կարգավորում

Բավականին բարդ է գնահատել քաղաքական ռիսկերը, որոնք առաջանում են մակրո և միկրոմիջավայրերում (**Աղյուսակ 2.2.1**): Օրինակ, մակրոռիսկը քաղաքական իրավիճակի փոփոխության հավանականությունն է, որն ազդում է օտարերկրյան ներդրումների, միջազգային ներդրումային դիրքի վրա: Միկրոռիսկի առաջացման դեպքում տնտեսության տվյալ ոլորտը կորցնում է իր գրավչությունը ներդրումների իրականացման տեսանկյունից, որի արդյունքում նվազում է նաև այդ ոլորտի շահույթաբերությունը:

ՀՀ-ում երկրի ռիսկի և մակրոտնտեսական քաղաքականության փոխազդեցության հիմքում էլ ձևավորվում է գործարար միջավայրը: Ընդ որում, եթե այդ փոխազդեցությունը չի առաջացնում տնտեսական, իրավական և պետական շահերի բախումներ, ուստի, գործարար միջավայրը բարենպաստ է, իսկ ներդրումային գործունեությունը՝ գրավիչ:

¹⁰¹ http://www.cfin.ru/finanalysis/polit_risk.shtml



Գծապատկեր 2.2.2. 1998-2015թթ. զուտ միջազգային ներդրումային դիրքը ԶՅ-ում, մլն ԱՄՆ դոլար¹⁰²

Միջազգային ներդրումային դիրքը ներկայացնում է տնտեսության կապը արտաքին աշխարհի հետ, ինչը ցույց է տալիս երկրի արտաքին ֆինանսական ակտիվների և պարտավորությունների մակարդակը:

ԶՅ տնտեսության զուտ միջազգային ներդրումային դիրքը մշտապես եղել է բացասական ինչը նշանակում է, որ երկիրը հանդիսանում է պարտապան՝ արտաքին հատվածին: ԶՅ տնտեսության զուտ միջազգային դիրքը 1998-2006թթ միջինը կազմել է 1,513,97 մլն. ԱՄՆ դոլար, ճգնաժամի տարիներին՝ 2007-2009թթ. այն կազմել է միջինը 2,118,77 մլն ԱՄՆ դոլար, 2010-2012թթ.՝ միջին աճը կազմել է 3,087.62 մլն. ԱՄՆ դոլար, 2013-2015թթ.՝ միջին աճը կազմել է 3,830.02 մլն. ԱՄՆ դոլար: Այսինքն՝ վերջին 2013-2015թթ. ժամանակահատվածում 2010-2012թթ. ժամանակահատվածի համեմատ զուտ միջազգային ներդրումային դիրքն ավելացել է շուրջ 742,3 մլն. ԱՄՆ դոլարով:

Իհարկե, ներդրումներն ունեն մեծ նշանակություններ կրի

¹⁰² <http://armstat.am/am/?nid=443>

համար և կատարում են միջարթ գործառույթներ, առանց որոնց ոչ մի տնտեսություն չի կարժեք չի կարող լինել, և ներդրումային պարտավորությունների նվազումը բացասական է ազդում երկրի տնտեսության զարգացման վրա (**Չափելի ված 5**):

Այսպիսով, ամփոփելով երկրի ռիսկի առաջացման և մակրոտնտեսական քաղաքականության վրա ազդող գործոնները, կարող ենք եզրակացնել, որ գործարար միջավայրի վարկանիշային գնահատման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ մակրոտնտեսական քաղաքականությունը չի կարող զերծ մնալ ռիսկերից, որոնց առաջացումը պայմանավորված է բազմաթիվ գործոններով:

Այդ գործոնները, ընդհանուր առմամբ, կարելի է դասակարգել 2 խոշոր խմբերում, ինչպիսիք են տնտեսական և քաղաքական գործոնները (**Չափելի ված 6**):

Դրանք նույնպես դասակարգում են տարբեր խմբերում, ինչպիսիք են՝ ներքին և արտաքին, որոնք առաջացնում են բազմաթիվ ռիսկեր գործարար միջավայրի զարգացման համար:

Աղյուսակ 2.2.2

Գործարար միջավայրի վրա ազդող ռիսկերը¹⁰³

	Պետական կառավարման մարմինների կողմից իրականացվող միջոցառումները, որոնք ազդում են գործարար միջավայրի վրա	Պետական կառավարման մարմինների իրականացվող միջոցառումները և դրանց արդյունքները գործարար միջավայրի բարելավման վրա
Չնախատեսված իրավիճակներ		
Մասնավոր հատվածում վերահսկողության բացթողում	<ul style="list-style-type: none"> - ամբողջական կամ մասնակի բռնազրավում - կառավարման իրավունքից բռնի գրկելը 	<ul style="list-style-type: none"> - պատերազմ - հեղաշրջում - անարեկչություն - գործադուլներ
Սպասվող շահույթի	- միջսահմանային առևտրի հետ կապված «ազգային ռեժիմի»	նտեսվարող

¹⁰³ J. de la Torre, D. H. Neckar, Forecasting political risks for international operations, pp. 223.

<p>նվազում</p>	<p>խտացում</p> <ul style="list-style-type: none"> - \$ինանսական, աշխատանքային և հոլմքային ռեսուրսների շուկաների մուտքի սահմանափակում - գների վերահսկողություն - փոխարժեքային սահմանափակումներ - դրամական միջոցների փոխանցումների սահմանափակում դեպի արտերկիր - արտահանման գործարքների նկատմամբ պահանջների խտացում 	<p>սուբյեկտների ազգային մտածելակերպ և տեղական արտադրանքի խրախուսման վարքագիծ</p> <p>անցավոր տնտեսական միությունների կողմից սպասվող վտանգներ</p> <p>\$ինանսական «սահմանափակումներ» արտահանման, ապրանքների արտարժույթի վերածման և արտահանման հետ</p> <p>երմուծման սահմանափակումներ</p>
----------------	--	--

Դրանք կարող են առաջանալ պետական միջոցառումների իրականացման ժամանակ՝ դրական կամ բացասական ազդեցություններ ներդրելով գործարար միջավայրի վրա: Իր հերթին, գործարար միջավայրի զարգացմանը խոչընդոտող գործոններից կարող են լինել մասնավոր հատվածում վերահսկողության բացթողումներն ու թերացումները, ինչպես նաև՝ սպասվող շահույթի վրա ազդող գործոնները (**Աղյուսակ 2.2.2**):

Ամփոփելով հավելված 5-ի և աղյուսակ 2.2.2-ում բերված տվյալներն ու վերլուծության արդյունքները, կարելի է եզրակացնել, որ երկրի և գործարար միջավայրի վրա ազդում են տարբեր ռիսկեր և դրանց գնահատումը բավականին բարդ գործընթաց է, ինչը պահանջում է պետական կառավարման մարմինների և մասնավոր հատվածի, միջազգային կազմակերպությունների ակտիվ մասնակցությունն ու համատեղ աշխատանք: Ի վերջո, դրանք ազդում են տվյալ երկրի մակրոտնտեսական քաղաքականության վրա, ինչն էլ բազմապատկիչ արդյունքով կամ զարգացնում է տնտեսությունն ու գործարար միջավայր, կամ՝ հակառակը:

Առանձնացնենք մակրոտնտեսական քաղաքականությունից

հարկային քաղաքականությունը և հիմնավորենք, թե հարկային համակարգն ինչպես է ազդում տնտեսության զարգացման և գործարար միջավայրի բարելավման վրա:

Ժամանակակից աշխարհում լայն տարածում են ստացել հարկային համակարգի և գործարար միջավայրի փոխառնչության հիմնախնդիրները: Դրանց վերաբերյալ բազմաթիվ հեղինակներ տարբեր ուսումնասիրություններ են կատարել՝ պարզելու այն գործիքների կիրառությունը, որոնք առավել օպտիմալ են տվյալ երկրում գործարար միջավայրը զարգացնելու համար¹⁰⁴:

Պետք է նշել, որ բավականին արդիական է Ա.Լաֆֆերի կորը, ինչն ունի խիստ տեսական ուղղվածություն: Վերջինս բացատրում է հարկային բեռի և տնտեսության զարգացման փոխառնչությունը, իսկ ինչ վերաբերում է Լաֆֆերի կորի գործնական կիրառությանը, այն ունի որոշ թերություններ: Դրանց վերաբերյալ բազմաթիվ աշխատություններ են նվիրված բազմաթիվ հեղինակների կողմից՝ Ջ.Բուչանան, Յ.Մոնիսենը, Ե.Բալացկին, Ա.Կուլիկովան, հայ հեղինակներից՝ Վ.Բոստանջյանը, Յ.Սարգսյանը, Վ.Յարոնյանը, Ե.Օրդյանը, Մ. Մելքումյանը և այլոք:

Յետևաբար, գործարար միջավայրի վրա հարկային համակարգի ազդեցությունն, առաջին հերթին վերլուծվել և գնահատել են Ա.Լաֆֆերի կորի միջոցով, սակայն այն, ըստ էության, այդ կապը գնահատել է միայն տեսական առումով: Այդ առումով, անհրաժեշտ է ունենալ որոշ մակրոտնտեսական ցուցանիշներ և ենթակառուցվածքային գործոններ, և դրանց ռեգրեսիոն վերլուծության արդյունքում պարզել, թե Լաֆֆերի կորի վրա գտնվող որ կետերն են համարվում օպտիմալ տվյալ երկրում գործարար միջավայրը զարգացնելու համար:

Որպես այդպիսին է ծառայում արտադրական ֆունկցիան՝ ըստ Կոբ-Դոլգլասի¹⁰⁵, որին ավելացնելով ենթակառուցվածքային կամ ինստիտուցիոնալ գործոնը, օրինակ, հարկային բեռը, հնարավոր է գնահատել տնտեսության և գործարար միջավայրի կախվածությունը:

¹⁰⁴ Какаулина М.О., Кульбака Н.С. “Особенности применения методик оценки инвестиционной привлекательности регионов” // Молодежь XXI века: шаг в будущее: материалы XI регион. науч.-практ. конф., посвященной 65 годовщине Победы в Великой Отечественной Войне: в 4-х ч. –Благовещенск: Изд-во АмГУ, 2010. Ч. 2. С. 295–296.

¹⁰⁵ http://economics.about.com/cs/economicsglossary/g/cobb_douglas.htm

Այդ առումով, լայն տարածում է ստացել Ե.Վ.Բալացկու մեթոդով հաշվարկված արտադրական-ենթակառուցվածքային ֆուկցիան¹⁰⁶

$$GDP = \frac{T_b H}{\sqrt{A^{aTs}(1+Ts)}} L^{bTs} T_s^{cTs} \quad (2.2.1)$$

որտեղ՝

GDP՝ անվանական ՀՆԱ-ի մեծությունն է, մլն. դրամ,

L-ն՝ զբաղվածների թիվն է, մլն մարդ,

A-ն՝ արտադրական գործոնների տրենդային գործակիցն է, որը հաշվարկվում է բազմագործոնային ռեգրեսիոն հավասարման միջոցով,

t-ն՝ տարի,

a, b, c-ն՝ անկախ փոփոխականների գործակիցներն են, որոնք անհրաժեշտ է գնահատել պանելային շարքերի միջոցով,

T_b -ն՝ հարկային բեռն է, որը հաշվարկվում է հարկեր/ՀՆԱ հարաբերակցությամբ, %

T_s-ն՝ հարկային համակարգի կայունության գործակիցն է, որը կոչվում է նաև հարկային

համակարգի կայունության կամ արդյունավետության գործակից և հաշվարկվում է հետևյալ բանաձևի միջոցով՝

$$T_s = |T_b(t) - T_b(t-1)| \quad (2.2.2)^{107}$$

Այդ ուսակ 2.2.3

2001-2015թթ. որոշ մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկան ՀՀ-ում¹⁰⁸

Տարիներ	Անվանական ՀՆԱ (մլն. դրամ)	Հարկային եկամուտներ (մլն. դրամ)	Հարկային բեռի գործակից	Չբաղվածություն (մլն. մարդ)	Հարկային համակարգի արդյունավետության գործակից
2001	1177234.8	154913.6	0.13	1.26	0.08
2002	1357280.3	185437.5	0.14	1.11	0.005
2003	1618577	212232.8	0.13	1.11	0.006
2004	1893436.2	250119.1	0.13	1.08	0.001
2005	2228027.5	304257.1	0.14	1.1	0.004
2006	2665036.6	359715	0.13	1.09	0.002
2007	3139353.9	483676.6	0.15	1.1	0.019

¹⁰⁶ Балацкий Е.В. «Анализ влияния налоговой нагрузки на экономический рост с помощью производственно-институциональных функций». С.89-90

¹⁰⁷ Балацкий Е.В. «Анализ влияния налоговой нагрузки на экономический рост с помощью производственно-институциональных функций». 2010, С.89-90

¹⁰⁸ www.mfe.am/index.php?fl=78&lang=1

2008	3650049.8	598797.5	0.16	1.18	0.01
2009	3165538.1	503328.8	0.16	1.15	0.005
2010	3509624.8	574066.8	0.16	1.19	0.005
2011	3777945.6	631595.4	0.17	1.18	0.004
2012	4000722	878381.5	0.22	1.17	0.052
2013	4555638.2	1000931.4	0.22	1.16	0
2014	4843152	1064118.4	0.22	1.17	0
2015	5032089	1065644.2	0.211	1.07	0.008
Միջինը	3107580	551147.7	0.164	1.14	0.0123

(2.2.1) բանաձևում անկախ փոփոխականներն են զբաղվածների թիվը (L) ու հարկային համակարգի կայունության գործակիցը (Ts), իսկ կախյալ փոփոխականը անվանական ՅՆԱ-ն է: Այսպես, աղյուսակ 2.2.3-ում ներկայացվել են բանաձև 2.2.1-ի ցուցանիշները, ինչպիսիք են՝ անվանական ՅՆԱ-ն և զբաղվածների թիվը, իսկ ենթակառուցվածքային գործոններից՝ հարկային եկամուտներն ու հարկային բեռը: Համաձայն վերջինիս, 2001-2015թթ. ՀՀ-ում անվանական ՅՆԱ-ն կազմել է միջինը 3107580 մլն դրամ, հարկային եկամուտները՝ 55114,7 մլն դրամ, հարկային բեռը՝ 16,4 տոկոս, զբաղվածների թիվը՝ 1,14 մլն. մարդ, իսկ հարկային համակարգի արդյունավետության գործակիցը՝ 0.01 (Աղյուսակ 2.2.3):

Աղյուսակ 2.2.4

2001-2015թթ. մակրոտնտեսական ցուցանիշների լոգարիթմական արժեքները¹⁰⁹

<i>Տարիներ</i>	Անվանական ՅՆԱ	Հարկային եկամուտներ	Հարկային բեռի գործակից	Զբաղվածություն (մլն. մարդ)	Հարկային համակարգի արդյունավետության գործակից
2001	13.98	11.95	-2.04	0.23	-2.53
2002	14.12	12.13	-1.97	0.10	-5.30
2003	14.30	12.27	-2.04	0.10	-5.12
2004	14.45	12.43	-2.04	0.08	-6.91
2005	14.62	12.63	-1.97	0.10	-5.52
2006	14.80	12.79	-2.04	0.09	-6.21
2007	14.96	13.09	-1.90	0.10	-3.96
2008	15.11	13.30	-1.83	0.17	-4.61
2009	14.97	13.13	-1.83	0.14	-5.30
2010	15.07	13.26	-1.83	0.17	-5.30
2011	15.14	13.36	-1.77	0.17	-5.52
2012	15.20	13.69	-1.51	0.16	-2.96

¹⁰⁹ Հաշվարկվել է հեղինակի կողմից հիմք ունենալով www.mfe.am/index.php?fl=78&lang=1 կայքի տվյալները:

2013	15.33	13.82	-1.51	0.15	-6.91
2014	15.39	13.88	-1.51	0.16	-6.21
2015	15.43	13.88	-1.56	0.07	-4.83
Միջինը	14.95	13.22	-1.81	0.13	-4.40

Բալացկոն մեթոդով արտադրական-ենթակառուցվածքային ֆունկցիայի հաշվարկման համար աղյուսակ 2.2.3-ում բերված վիճակագրական տվյալները լոգարիթմենք՝ ցույց տալով յուրաքանչյուր գործոնի 1 տոկոսային կետի փոփոխությունն ինչպես է ազդում կախյալ փոփոխականի վրա (Աղյուսակ 2.2.4): Յետևաբար՝ խնդիր է դրվում որոշել անկախ փոփոխականների ազդեցությունը կախյալ փոփոխականի վրա, այսինքն՝ գնահատել նրանց էլաստիկության գործակիցները՝ (a, b, c): Դաիրականացնելու համար (1) բանաձևը ներկայացնենք հետևյալ կերպ՝

$$T_b^{0.01} \text{ LN GDP} = a(T_s + T_s^2) + b T_s \text{ LN L} + c \text{ LN } T_s \quad (2.2.3)^{110}$$

(2.2.3) բանաձևի միջոցով նպատակ է դրվում գնահատել, թե յուրաքանչյուր անկախ փոփոխականի 1 տոկոսային կետի փոփոխության դեպքում որքան է փոխվում կախյալ փոփոխականը, այսինքն՝ զբաղվածների թվի և հարկային համակարգի կայունության փոփոխությունը 1 տոկոսային կետով որքան է փոխում ՅՆԱ-ն: Այլ խոսքերով, հաշվարկվում են ընտրված փոփոխականների էլաստիկության գործակիցները, ինչպիսիք են a, b, c, որոնք բերվել են լոգարիթմական արժեքներով (հավելված):

(2.2.3) բանաձևը կոչվում է նաև արտադրական-ենթակառուցվածքային ֆունկցիա՝ վերջինիս գործում հանդես գալով հարկային համակարգի կայունության գործակիցը¹¹¹:

Այսպիսով՝ մակրոտնտեսական գործոնների դինամիկ շարքերի միջոցով հիմնավորել են վերջիններիս կապն ու դրանց ազդեցությունը տնտեսության զարգացման, գործարար միջավայրի բարելավման վրա՝ հիմք ընդունելով Ե.Վ.Բալացկոն «Յարկային բեռի և տնտեսական աճի փոխազդեցության գնահատումը»

¹¹⁰ Նույն տեղում:

¹¹¹ Балацкий Е.В. «Анализ влияния налоговой нагрузки на экономический рост с помощью производственно-институциональных функций». С.89-96

վերլուծությունը¹¹²: Վերջինս գնահատվել է նաև ՀՀ տնտեսության օրինակով, և տնտեսաչափական մոդելի արժեքները տեղադրելով (2.2.3) բանաձևում ստացվել են հետևյալ արդյունքները՝

$$T_b^{0.01} \text{ LN GDP} = 791.1942467 + 1.795933595 \times (T_s + T_s^2) + 23.21331455 T_s \times \text{LN L} + 3.004048369 \times \text{L LN } T_s \quad (2.2.4)$$

Պետք է նշել, որ $T_b^{0.01}$ փոփոխականը ներկայացվել է 0.01 աստիճանի տեսքով՝ նպատակ ունենալով ցույց տալ հարկային բեռի 1 տոկոսային կետի կախվածությունը ՀՆԱ-ից, ինչը ներկայացվել է լոգարիթմական արժեքով (հավելված 10):

Աղյուսակ 2.2.5

Արտադրական ինստիտուցիոնալ ֆունկցիայի գնահատականը ՀՀ-ում, 2001-2015թթ.¹¹³

Մոդելի փոփոխականներ	Գործակիցներ	F-վիճակագիր - 5%	Ստանդարտ շեղում
C	791.1942	0.0004	153.6714
$(T_s + T_s^2)$	1.795934	0.0007	0.374000
$T_s \text{ LN L}$	23.21331	0.0145	14.58074
$\text{L LN } T_s$	3.004048	0.0017	0.707236

(2.2.4)-ում ներկայացված արժեքները հաշվարկվել են ըստ աղյուսակ 2.2.5-ի տվյալների, համաձայն որի հարկային համակարգի կայունությունը, զբաղվածների թիվն ունեն էական և նշանակալի ազդեցություն հարկային բեռի և ՀՆԱ-ի վրա, քանի որ դրանց վիճակագիրները փոքր են 5%-ից, հետևաբար մոդելը ճշգրիտ է: Այսինքն՝ հարկային համակարգն ու դրա քառակուսին բերում են հարկային բեռի ու ՀՆԱ-ի 1.79 տոկոսային կետի փոփոխության, հարկային համակարգի կայունության և զբաղվածների թվի լոգարիթմական արժեքի արտադրյալի 1 տոկոսային կետի փոփոխությունը ավելացնում են հարկային բեռն ու ՀՆԱ-ն 23.2 տոկոսային կետով, իսկ զբաղվածների թվի արտադրյալը հարկային համակարգի կայունության լոգարիթմական արժեքի հետ բերում են կախյալ փոփոխականների 3 տոկոսային կետի փոփոխության: ՀՀ-ում

¹¹² Е.В. Балацкий, «Анализ влияния налоговой нагрузки на экономический рост с помощью производственно-институциональных функций», С.89-92, <http://www.ecfor.ru/pdf.php?id=2003/2/08>

¹¹³ Աղյուսակ 2.3.5-ը հաշվարկվել է հեղինակի կողմից:


Յետևաբար՝ աղյուսակ 2.3.5-ի տվյալներից կարող ենք եզրակացնել, որ $T_s LNL$ -արտադրյալն առաջացնում է ամենամեծ փոփոխությունը հարկային բեռի և անվանական ՅՆԱ-ի վրա՝ ավելացնելով վերջիններից արտադրյալը շուրջ 23.2 տոկոսով, ինչն ունի իր տնտեսական հիմնավորվածությունը: Համաձայն վերջինիս, զբաղվածների հարկային բեռը եկամտային հարկն է, որը Հայաստանում գանձվում է վարձու աշխատողների աշխատավարձիս 24.4 և 26 տոկոս հարկային դրույթաչափերով: Որքան եկամտային հարկի դրույթաչափը բարձրանում է աշխատողների մոտկորում է աշխատելու ցանկությունը և նրանք գերադասում են ունենալ ավելի ցածր աշխատավարձ՝ հարկային բարձր դրույթաչափի պատճառով: Սակայն եկամտային հարկի դրույթաչափի բարձրացման հետևանքով առաջանում է հետևյալ իրավիճակը. գործատուները, օգտվելով տնտեսական իրավիճակից, գրանցում են աշխատողներին առավել ցածր աշխատավարձով՝ երկու դեպքերում էլ բավարարելով և իրենց և աշխատողների պահանջմունքները: Արդյունքում, տուժողի դերում է հադես գալիս պետությունը, որը չի կարողանում ապահովել համապատասխան հարկային մուտքեր՝ եկամտային հարկի մասով: Նման իրավիճակից խուսափելու համար (2.2.4) բանաձևում ընտրվել է հարկային կայունության գործակիցը, ինչը $T_s LNL$ -արտադրյալի համար նշանակում է, որ որքան շատ են զբաղվածների թիվը հարկային կայունության գործակցի դեպքում, այնքան ավելանում է ՅՆԱ-ն : Իսկ $T_b^{0.01} LNL GDP$ արտադրյալը ընտրվել է այն նպատակով, որպեսզի հնարավոր լինի ցույց տալ հարկային բեռի և ՅՆԱ-ի կախվածությունը 1 տոկոսային կետի փոփոխության դեպքում

(Յավելված 10):

Ուստի, եթե հարկային համակարգը կայուն է (գործակիցը մոտ է 1-ի), ապա արտադրական և ենթակառուցվածքային \$ուսկցիաների և դրանում ընտրված գործոնների աճը բերում են տնտեսության զարգացման և գործարար միջավայրի բարելավման: Իսկ դա նշանակում է, որ տնտեսության զարգացման համար անհրաժեշտ է ստեղծել նոր աշխատատեղեր, որոնք առավել արտադրողական կլինեն, քանի որ միայն այդ դեպքում, աշխատողները ստեղծում են բարձր արժեք, ստանում՝ բարձր աշխատավարձ, որից շահում է նաև


պետությունը՝ գանձելով ավելի շատ եկամտային հարկ՝ հարկային վարչարարության արդյունավետությունը բարձրացնելու դեպքում:

Աշխատանքում վերլուծվել են նաև բյուջետային ցուցանիշներից հարկաբյուջետային ազդակի դինամիկան 2008-2016թթ.: Ինչպես ցույց են տալիս գծապատկեր 2.2.3-ի տվյալները հարկաբյուջետային քաղաքականության մոտեցումը եղել է բազմակողմ և միաժամանակ հավասարակշռված:



Գծապատկեր 2.2.3 Հարկաբյուջետային ազդակ 2008-2016թթ.

Միաժամանակ, ՀՀ հարկային համակարգի բարելավման գործում անհրաժեշտ է որոշել ՀՀ տնտեսության կամ գործարար միջավայրի վրա ընկնող հարկային բեռի մակարդակը: Հետևաբար, անհրաժեշտ է հաշվարկել առանձին հարկատեսակների ազդեցությունը հարկային համակարգի վրա, մասնավորապես, առանձնացնել պետական բյուջե հավաքագրվող ուղղակի հարկերն (շահութահարկ և եկամտային հարկ) և անուղղակի հարկերը (ակցիզային հարկ և ԱԱՀ): Կարելի է եզրակացնել, որ դեռևս հարկային բեռը ընկած է սպառողական հարկերի վրա:



Գծապատկեր 2.2.4 Ուղղակի և անուղղակի հարկերի, ՀՆԱ-ի դինամիկան, մլն դրամ¹¹⁴


Հարկային համակարգի արդյունավետության բարձրացումը նպաստում են ՀՀ ներդրումային հոսքերի ավելացմանը, գործարար միջավայրի բարելավմանը, տնտեսական քաղաքականության արդյունավետիության ամրապնդմանը:

Հետևաբար, քանի դեռ հանրապետությունում չեն վերլուծվել տնտեսության զարգացման գերակայությունները, պետական կառավարման մարմինների կողմից չեն իրականացվել արտոնյալ հաշվառում՝ հարկային և վարկային արտոնությունների տրամադրում, արտադրական ռեսուրսները մշտապես կհոսեն հանրապետությունից դուրս՝ ենթակառուցվածքային գործոնի՝ հարկային բեռի բարձր մակարդակի պատճառով:

Մակրոտնտեսական ցուցանիշներից են հանդիսանում նաև ներդրումները: Իսկ ներդրումային հոսքերի և հարկային եկամուտների միջև գոյություն ունի կապ, այսինքն՝ հարկային եկամուտներն ուղղակի ազդեցություն են ունենում ներդրումային հոսքերի ավելացման վրա: Օրինակ, **գծապատկեր 2.2.5-ի** տվյալներից կարելի է եզրակացնել, որ գրեթե նույն տեմպերով

¹¹⁴ http://www.armstat.am/file/article/finansner_2015_1.pdf

ավելացել և ակնկալվում է ավելացնել ներդրումների և հարկային եկամուտների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում: Օրինակ, ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը 2011 թվականին կազմել է 27.9 տոկոս, հարկային բեռը՝ 21.10 տոկոս, 2012 թվականից սկսած ավելացել են հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը, իսկ ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը գնալով կրճատվել է: Հարկային եկամուտների ավելացումը ՀՆԱ-ում խոսում է հարկային վարչարարության խստացմամբ, և հարկերի ֆիսկալ գործառույթի վրա ուշադրության կենտրոնացման մասին, մինչդեռ հակառակը, հարկային մարմինները պետք է նաև կիրառեն հարկերի խթանող և սոցիալական գործառույթները՝ գործարար միջավայրի զարգացման և ներդրումային հոսքերի ներգրավման համար:



Գծապատկեր 2.2.5 ՀՀ ներդրումների ու հարկային եկամուտների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, %

Ինչ վերաբերում է ներդրումային հոսքերին, հավելված 7-ի տվյալներից կարող ենք եզրակացնել, որ ներդրումային հոսքերն առավելապես աճել են հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղերում՝ 2007-2014թթ. կազմելով 42672,9 հազ. ԱՄՆ դոլար, բուսաբուծություն և անասնաբուծություն, որսորդություն և հարակից ծառայությունների համար՝ 1386006 հազ. ԱՄՆ դոլար, խմիչքների արտադրությունում՝ 28203.9 հազ. ԱՄՆ դոլար:

Հետևաբար, ելնելով վերոգրյալից, առաջարկում ենք հանրապետությանը նույն իրականացնել հարկման բազայի առավելագույն ընդլայնում կամ միջոցառումներ՝ ուղղված տնտեսության տարբեր ոլորտների միջև հարկային բեռի անհամասնության ներքին չեզոքացման, նոր հարկվող օբյեկտների սահմանման, ինչպես նաև առկա հարկման բազան առավել արդյունավետ ու լիարժեք ձևով հարկման ենթարկելու համար: Նոր հարկային արտոնության ներքին միայն բացառիկ դեպքերում տրամադրումն առանձին հարկ վճարողներին պետք է սահմանել միայն բացառիկ դեպքերում՝ ելնելով նախապես սահմանված երկրի ռազմավարական զարգացման նպատակներից և ծրագրերից: Օրինակ, ըստ Հարկային օրենսգրքի հոդված 127-ի մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը, ներառյալ՝ շահույթահարկի վճարումից ազատվում են գյուղատնտեսական արտադրանքի արտադրությանը գրավված շահույթահարկ վճարողները՝ իրենց կողմից գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամտի, ինչպես նաև այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների մասով, եթե այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների տեսակարար կշիռը հարկային տարվա համախառն եկամտի մեջ չի գերազանցում 10 տոկոսը:

Գործարար միջավայրի բարելավման գործում հարկային օրենսդրության վերանայումները պետք է ուղղված լինեն նաև Հայաստանի Հանրապետությանը նույն գործարար միջավայրի հետագա բարելավմանը՝ որպես վերջին տարիներին այս ուղղությամբ իրականացվող աշխատանքների տրամաբանական շարունակության: Քաղաքականության այս ուղղության հիմնական նպատակադրումը պետք է լինի առնվազն տարածաշրջանում մեր հարկային համակարգի մրցունակության ու գրավչության ապահովումը: Այս առումով, շատ կարևոր է, որպեսզի հարկային օրենսդրության առաջիկա փոփոխությունները միտված լինեն հարկ վճարողների համար անհարկի և տնտեսագիտական հիմնավորումներ չունեցող սահմանափակումների վրա:

ԳԼՈՒԽ 3.


ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԲԱՐԵԼ ԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

3.1 Հարկային համակարգի բարելավման հիմնական նւղիները

ՀՀ հարկային համակարգի բարելավման գործում անհրաժեշտ է հաշվի առնել, այն գործոնները, որոնք ազդում են տնտեսության զարգացման վրա, մասնավորապես հարկային բարեփոխումները, տնտեսության ինստիտուցիոնալ կառուցվածքը: Օրինակ, հարկային օրենսդրության բարեփոխումների հիմքը Հայաստանի Հանրապետության գործարար միջավայրի բարելավումն ու պետական բյուջեյում հարկային եկամուտների ապահովումն է: Հարկային համակարգում բարեփոխումների գերակայությունները պետք է բխեն առնվազն ՀՀ հարկային համակարգի մրցունակության և գործարար միջավայրի գրավչության բարձրացման անհրաժեշտությունից: Հետևաբար, գտնում ենք, հարկային օրենսդրության առաջիկա փոփոխությունները միտված են լինելու հարկ վճարողների համար անհարկի և տնտեսագիտական հիմնավորումներ չունեցող սահմանափակումների վերացմամբ:

Ինչպես ցույց է տալիս գծապատկեր 3.1.1-ը, գոյություն ունի փոխադարձ կապ հարկային համակարգի և գործարար միջավայրի միջև: Եթե հարկային համակարգում տեղի ունեցող փոփոխություններն ուղղված են գործարար միջավայրի բարելավմանը, ուստի, հարկային քաղաքականության տարրերը, ինչպիսիք են՝ հարկային եկամուտների հավաքագրում և կառավարում, հարկման արդյունավետության բարձրացում, հարկային վարչարարության բարելավում, հարկային բեռի օպտիմալացում ըստ տնտեսվարող սուբյեկտների, հարկային գործիքակազմի կիրարկումը բերում են ՀՀ-ում գործարար ակտիվության բարձրացմանը: Հետևաբար, եթե խաթարվում է

հարկային քաղաքականությունը, առաջացնում են հարկային քաղաքական, տնտեսական և հասարակական ճնշումներ, որոնք՝



Քաղաք 3.1.1 Հարկային համակարգի և գործարար

միջավայրի փոխադարձ կապը¹¹⁵

- բացասաբար է ազդում գործարար միջավայրի վրա,
- պետական ֆինանսավորում ունեցող տնտեսության կարևոր և առաջնային ոլորտներ, որոնք պահանջում մեծ ծախսեր, աստիճանաբար դուրս են մնում ներդրումային ծրագրերից, ինչն էլ հետագայում կարող է հանգեցնել տնտեսության հետաճին,
- չգսավող հարկային ճնշումն առաջացնում է «նոր, աղավաղված մշակույթ», ինչպիսիք են՝ հարկային վճարումներից խուսափելու սովորությունը, սովերային տնտեսությունը, մրցակցության անհավասար պայմաններն ու մենաշնորհների ձևավորումը,

Հետևաբար, այս պայմաններում ակտիվանում է հարկային համակարգի արդյունավետության բարձրացման խնդիրը, և թե այն ինչպես է ազդում գործարար միջավայրի վրա: Դրա լուծումը ենթադրում է տարբեր մոտեցումներ, որոնց մեջ, մասնավորապես, կարելի է նշել խնդրի լուծման «որակյալ» մեթոդը: Այն կայանում է ամբողջ հարկային օրենսդրության կառավարման և

¹¹⁵ Մշակվել է հեղինակի կողմից:

կատարել ագործման մեջ: Կարելի գնահատել \$իսկալ քաղաքականության արդյունավետությանը տարբեր տեսանկյուններից, հատկապես տնտեսավարող սուբյեկտի և պետության տեսանկյուններից: Պետության հարկային քաղաքականության արդյունավետության գնահատումը \$իզիկական և իրավաբանական տեսանկյունից գիտական հետաքրքրությունն չի ներկայացնում, քանի որ այստեղ գործում են ուղիղ և պարզ տրամաբանությունն՝ որքան շատ հարկային հավաքագրում, այնքան վատ: Պետության տեսանկյունից հարկային քաղաքականության գնահատման ժամանակ հնարավոր են վերլուծության երկու ասպեկտներ: Առաջին, հարկային քաղաքականության արդյունավետության գնահատում, որն ազդում է տնտեսական համակարգի, տնտեսության ակտիվության, երկրորդ՝ հարկային քաղաքականության արդյունավետության գնահատում, որն ազդում է պետական բյուջեի եկամտային մասի ավելացման վրա: Որպես կանոն, այդ երկու գնահատականները հակադիր են, և ըստ առաջին չափորոշիչի արդյունավետ հարկային քաղաքականությանը, կարող է լինել ընդհանրապես ոչ արդյունավետ՝ ըստ երկրորդ չափորոշիչի: Բացի այդ, նույնիսկ միևնույն չափորոշիչի շրջանակում հարկային քաղաքականությանը չի կարող ունենալ միանշանակ արդյունք, այսինքն՝ ուսումնասիրվող գործընթացների զարգացման ընթացքում գոյություն ունեն բեկման կետեր: Յետևաբար, գտնում ենք, որ հարկային համակարգի բարելավման գործում անհրաժեշտ է վերանայել հարկերի այն գործառնությունները, որոնք առավել մեծ կիրառություն են ունեցել հարկային եկամուտների հավաքագրման և տնտեսական ակտիվության բարձրացման համար: Իհարկե, այս դեպքում, առաջին հերթին անհրաժեշտ է բացահայտել և հիմնավորել հարկային համակարգում գոյություն ունեցող թերություններն ու բացթողումները, որոնք կաշկանդում են վերջինիս զարգացմանը, մասնավորապես՝

- հարկային քաղաքականության անկայունությունը կամ հարկային օրենքներում հաճախակի փոփոխությունները,
- հարկային բեռի բարձր մակարդակն ու դրա անհավասարաչափ բաշխումը, հատկապես սոցիալական անապահով խավի վրա,

- տնտեսավարող սուբյեկտների կողմից հարկերից խուսափելու վարքագիծը և սովորային տնտեսության մասշտաբները,
- տնտեսության իրական հատվածում տնտեսական խթանների ոչ բավարար մակարդակը,
- գնաճի մակարդակը, որն առավել է բարձրացնում հարկային բեռի մակարդակը,
- ոչ ֆորմալ զբաղվածությունը և եկամուտների թերհայ տարարագրման «ազգային մենթալ իտե տը»:
- ՀՀ հարկային համակարգում գոյություն ունեցող թերություններից և բացթողումներից բացի, պետք է նշել, նաև տարածաշրջանային երկրներում տեղի ունեցող փոփոխությունները, հատկապես ներկայիս ԵԱՏՄ-ի ինտեգրման և հարկային ներդաշնակեցման մարտահրավերները:

Այստեղ ՀՀ հարկային համակարգի վրանաև մեծ ազդեցություն է ունենում ՌԴ հարկային համակարգում, մասնավորապես¹¹⁶ ՌԴ-ում գործնականում լայն կիրառություն ունի եկամուտներից ռեգրեսիվ հարկման սկզբունքը, իսկ ՀՀ-ում հակառակը՝ հարկման պրոգրեսիվ սկզբունքը, հարկային բեռի բաշխումը տնտեսության իրական հատվածի վրա, ուղղակի հարկերի տեսակարար կշռի բարձրացումը հարկային եկամուտներում: ՀՀ տնտեսության զարգացման և գործարար միջավայրի բարելավման համար անհրաժեշտ է վերանայել հարկային բեռը և իրականացնել հարկային բարեփոխումներ: Հետևաբար, անհրաժեշտ է հաշվարկել հարկային համակարգի վրա ազդող գործոնները, ինչպես նաև հիմնավորել հարկային բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը: Հարկային համակարգերի ձևավորման ու զարգացման միջազգային փորձի ուսումնասիրությամբ հիմնավորվում է, որ հատկապես զարգացող երկրներում ազգային տնտեսության մրցունակությունն ու ներդրումային գրավչությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է հիմնական շեշտադրումը կատարել սպառման հարկման վրա, իսկ տնտեսավարող սուբյեկտների և ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համար սահմանել հնարավորին չափ ցածր հարկային բեռ: Բաղաբականության այս ուղղության և այս սկզբունքի ներքո՝

¹¹⁶ Чиченов М.В. (К.э.н) – «О Российской налоговой системе» // «Все о налогах», 2007, №1.

հարկային օրենսգրքի մշակման աշխատանքների շրջանակներում, կարևոր ու շարժող շնորհիվ է հատկացվել այնպիսի հարկային խթանների ներդրման վրա, որոնք թեև կարճաժամկետ հեռանկարում կհանգեցնեն հարկային եկամուտների որոշակի կորստի, այդուհանդերձ երկարաժամկետ հեռանկարում կարևոր ներդրում կլինեն հետևյալ ուղղությամբ, ինչպիսիք են՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավում, ազգային տնտեսության արդիականացում և վերազինում, արտահանման խթանում, առևձազն տարածաշրջանում և Եվրասիական տնտեսական միությանում ազգային տնտեսության մրցունակության բարձրացում, երկարաժամկետ և կայուն տնտեսական աճի ապահովում: Այս իմաստով, հարկային օրենսգրքը մշակվել է՝ հաշվի առնելով այն կարևոր հանգամանքը, որ հարկային քաղաքականության փոփոխությունները ոչ միայն չպետք է հակադրվեն երկրի գործարար միջավայրի բարելավման ու ազգային տնտեսության ներդրումային գրավչության բարձրացման, տարածաշրջանում հայաստանյան հարկային համակարգի մրցունակության ամրապնդման և երկրում երկարաժամկետ ու կայուն տնտեսական աճ ապահովելու հիմնական նպատակադրումներին, այլ նաև պետք է ուղղակիորեն կողմնորոշված լինեն այդ նպատակադրումների իրագործմանը: Ներկայիս ԵԱՏՄ ինտեգրման պայմաններում առաջին հերթին անհրաժեշտ է վերանայել 33-ում գործող հարկային օրենսդրությունը, դրանում փոփոխություններ կատարելով հատկապես եկամտային և ակցիզային հարկերի մասով: Վերջիններս կարելի է հիմնավորել այն դրույթով, որ հատկապես, այս հարկատեսակների մասով անհրաժեշտ է 33 հարկային օրենսդրությունը և առանձին հարկերի մասին օրենքները վերանայել՝ ԵԱՏՄ անդամ երկրներում հարկային ներդաշնակեցման նպատակով: Այլ խոսքով՝ հարկային բեռի բաշխման հիմնախնդիրների կարգավորման գործում անհրաժեշտ է վերանայել հանրապետությունում իրականացվող հարկային քաղաքականությունը, քանի որ այն կաշկանդում է գործարար միջավայրի զարգացմանն ու մրցունակ տնտեսության ձևավորմանը: 3 այսուհանդերձ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելուց հետո անհրաժեշտություն է առաջանում գնահատել դրա

մասնակիցների շահերը և այլ դաշինքների հետ ինտեգրման հեռանկարները: ԱՊՀ երկրների միջև տնտեսական ինտեգրացիան արտահայտվեց 2011թ. ազատ առևտրի գոտու ստեղծման մասին համաձայնագրի ստորագրմամբ, այնինչ արդեն ձևավորվել էր Մաքսային միությունը: Վերջինիս գույքը նախ, 2010թ. Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի կողմից առանց մաքսատուրքերի առևտրին գումարվեց միասնական մաքսային տարածքի առևտրային քաղաքականության՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողով, վերագրային մակարդակի տեղափոխում և երրորդ երկրների նկատմամբ համաձայնեցված առևտրային քաղաքականության վարում, որը դեռևս արտահայտվում է հիմնականում միասնական մաքսային տարիքի առկայությամբ, մի բան, որ կիրառվում է ԱՊՀ ազատ առևտրի գոտու մեջ չմտնող երկրներից ներկրվող ապրանքների նկատմամբ: Երրորդ երկրների հետ հնարավոր ինտեգրման քննարկումներն աշխուժացան դեռևս 2011-2012թթ. Նոր Զելանդիայի. Վիետնամի և այլ երկրների հետ ազատ առևտրի գոտիների ստեղծման վերաբերյալ համաձայնագրերի կնքման հետ: Ավելի ուշ սկիզբ առան Ազատ առևտրի Եվրոպական ասոցիացիայի (Նորվեգիա, Շվեյցարիա, Իսլանդիա, Լիխտենշտեյն) հետ առևտրային համաձայնագրի կնքման բանակցությունները, իսկ 2014թ. նաև Իսրայելի հետ: Հնդկաստանի և ԱՄՆ-ի հետ ազատ առևտրի գոտու ստեղծման վերաբերյալ քննարկումները, իսկ Եվրոպական միության հետ առևտրատնտեսական ինտեգրումն օրակարգի հարց էր դեռևս 2005 թ. գագաթնաժողովից ի վեր: Այնուամենայնիվ վերոնշյալ համաձայնագրերից ոչ մեկը չի ստորագրվել, իսկ որոշ նախաձեռնություններ (Նորվեգիայի, Շվեյցարիայի, Իսլանդիայի, Նոր Զելանդիայի, ԱՄՆ, ԵՄ) կամ կասեցվել են, կամ նույնիսկ չեն սկսվել քաղաքական դրդապատճառներով: Նշենք, որ 2015 թվականի հունվարից Հայաստանը միացավ Եվրասիական տնտեսական միությանը: Հայաստանին թույլատրվել է ներմուծվող մոտ 800 անուն ապրանքները ժամանակավորապես ազատել ԵԱՏՄ-ով սահմանված ավելի բարձր մաքսային տուրքերից; այս ապրանքները կազմում են Հայաստանի ներմուծումների առյուծի մասնաբաժինը: Վերջին հաշվով, մինչ 2022 թ.-ին սպասվող ԵԱՏՄ սակագներին

անցումը, Հայաստանի անդամակցությունը, ամենայն հավանականությամբ, կհանգեցնի ԵԱՏՄ-ի կողմից հետապնդվող ավելի պաշտպանողական առևտրային քաղաքականությունների ներդրմանը: Կարճաժամկետ և միջնաժամկետ կտրվածքներում Հայաստան, ամենայն հավանականությամբ, կօգտվի ներմուծվող էներգիայի ավելի ցածր գներից, մաքսային ավելի մեծ եկամուտներից (Հայաստանը կստանա ԵԱՏՄ ներմուծված ապրանքներից ստացված մաքսային տուրքերի գումարի մոտ 1 տոկոսը) և, հավանաբար, Ռուսաստանից ներդրումների աճից: Տնտեսության և առևտրի կառուցվածքի, ԱՀԿ-ի շրջանակներում ստանձնած հանձնառությունների, օտարերկրյա ներդրումների և բարեփոխումների թափի վրա երկարաժամկետ ազդեցությունները դեռևս հստակ չեն: ԵԱՏՄ երկրների միջև գործընկերների հետ առևտրային համաձայնագրերի վերլուծությունը ցույց է տալիս, որ բացի բարեկեցության վրա ունեցած ընդհանուր դրական ներգործությունից, որն առաջանում է այս կամ այն սահմանափակող գործոնների վերացման հաշվին, պետք է նկատի ունենալ նաև ճյուղային ազդեցությունները, որոնք առանձնանում են իրենց կարճաժամկետ (2-3 տարի) և երկարաժամկետ (4-6 տարի) ազդեցություններով: Հստակության համար կարող ենք անդրադարձալ ներմուծման մաքսերի նվազեցման մասին, սակայն ներկայացված տրամաբանությունը կիրառելի է ցանկացած այլ տեսակի առևտրային սահմանափակումների համար, ինչպիսիք են՝ վերջին ժամանակներում առավել կարևորություն ստացած ոչ տարիֆային խոչընդոտները: Կարճաժամկետ հեռանկարում ներմուծման մաքսատուրքերի նվազեցումը ազատ առևտրի գոտու շրջանակներում առաջացնում է չորս հիմնական հետևանքներ.

- Տնտեսության իրական եկամուտների աճ՝ հայրենական արտադրության կողմից արտադրության մեջ օգտագործվող ինչպես վերջնական օգտագործման, այնպես էլ ներդրումային և միջանկյալ ապրանքների գների նվազման հաշվին:
- Եվրասիական միության երկրներում արտահանվող ապրանքների փոխարինումն ազատ առևտրի գոտու գործընկերների ապրանքներով:

➤ Ազատ առևտրի գոտու գործընկեր երկրներից ներկրումների աճ և հայրենական արտադրության դուրս մղում, ինչն իր հերթին պայմանավորում է աշխատուժի և կապիտալի վերաբաշխում ավելի քիչ արդյունավետության ունեցող ճյուղերից ավելի արդյունավետ ճյուղեր:

➤ Եկամտի աճի հաշվին հայրենական արտադրանքի պահանջարկի անկման մասնակի փոխհատուցում: Երկարաժամկետ հեռանկարում հնարավոր հետևանքների թվին կարելի է դասել խոչընդոտների նվազեցումը, որի արդյունքում բարձրանում են եկամուտները և բարեկեցությունը, դրանք խթանում են խնայողություններն ու ներդրումները: Այդ ամենը նպաստում են արտադրանքի հետագա աճին տնտեսության այնպիսի հատվածներում, որոնք կարող են փոխհատուցել և ծածկել ներմուծման աճից ծագած անկումը: Բացի այդ, մրցակցության աճը խթանում է աշխատանքի արտադրողականությանը:

Եվրասիական միության հիմնադիր երեք մասնակիցներից յուրաքանչյուրի տնտեսությունների և տարբեր ոլորտների համար այս կամ այն ազատ առևտրի գոտիների ստեղծումից որոշակի քանակական ազդեցությունները կախված կլինեն զրոյացվող մաքսատուրքերի ընթացիկ նշանակություններից, Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի միջև ճյուղային համակարգից ազատ առևտրի գոտու գործընկերների հետ առևտրից, ինչպես նաև արտադրության ճյուղային կառուցվածքից և վերոնշյալ երկրներից յուրաքանչյուրում սպառումից: Միայն բոլոր այս հանգամանքները հաշվի առնելով հնարավոր կլինի պատասխանել այն հարցին, թե ինչպիսին կլինի այս կամ այն առևտրային համաձայնագրի ընդհանուր և ճյուղային ազդեցությունը:

Կարևոր է նշել նաև այն իրողությունը, որ համատեղ առևտրային քաղաքականության հարցերի տեղափոխումը վերազգային մակարդակ, նշանակում է. առևտրային համաձայնագիրը կարող է ստորագրվել միայն, ընդհանուր առմամբ եվրասիական միության երկրների միջև, իսկ նրա պայմանները պետք է հավասար չափով տարածվեն եվրասիական միության

յ ու ր ա ք ա ն չ յ ու ր անդամի վրա: Դա կարող է բերել նրան, որ որոշակի պայմաններում, չնայած գործընկերների համար դրական արդյունքներին, առանձին դեպքերում հնարավոր են նման ինտեգրման բացասական հետևանքներ: Դա կապված է նրա հետ, որ Եվրասիական միության ներսում առևտրային հոսքերը որոշ անդամների համար կարող են զգալիորեն վերաուղղորդվել դեպի առևտրային համաձայնագրի գործընկեր երկրների առևտրային հոսքեր:

Առանձին վերցրած յ ու ր ա ք ա ն չ յ ու ր երկրի համար դա խնդիր չէ, քանի որ ինքնիշխան պետության հիմնական հատկանիշներից մեկը հանդիսանում է միասնական բյուջետային համակարգը, քանի որ ցանկացած երկրում միջտգոյություն ունեն դոնոր-շրջաններ և ստացող շրջաններ, իսկ այդ շրջանների կորուստները կարող են փոխհատուցվել ներքին բյուջետային փոխանցումների հաշվին: Եվրասիական միությունում վերազգային մակարդակ մասամբ տեղափոխվում է առևտրային քաղաքականությունը, սակայն միանշանակ ոչ բյուջետային:

Այսպիսով, Չայաստանի՝ ԵՄ հետ ինտեգրման գործընթացները ոչ միայն չեն հակասում Եվրասիական միության շահերին, այլ լրացուցիչ հնարավորություն են տալիս օգտագործելու մրցակցային առավելությունները արտաքին շուկաներում, ԵԱՏՄ անդամակցելու հարցում պետք է նկատի ունենա, որ Չայաստանը գտնվում է այնպիսի տարածաշրջանում, որը թույլ չի տալիս տարանջատել անվտանգության և տնտեսական կայունության հիմնախնդիրները: Եվ քանի որ այստեղ առանցքային դերակատարումը վերապահված է Ռուսաստանին, ապա վերջինս տարածաշրջանում ուժերի հավասարակշռության իրական երաշխավոր լինելուց բացի, միակ երկիրն է, որ կարող է լավագույնս նպաստել ՉՉ տնտեսության առողջացմանը:

Անկասկած լիակատար տնտեսական համագործակցության կայացման համար կարևոր նախապայման է անցումը միասնական արժույթի: Այս խնդիրը լուծելու ճանապարհին անհրաժեշտ է հաղթահարել միջարք խոչընդոտներ, որոնք կապված են գնաճի, արտաքին փոխարժեքների ու գնաճերի համաձայնեցված սինխրոն

տատանու մեների, փողայնացման մակարդակների և վերաֆինանսավորման մոտավոր հավասար մակարդակների ապահովման հետ: Մյուս կողմից էլ, Ռուսաստանը Հայաստանի թիվ մեկ տնտեսական գործընկերն է, քանի որ ընդհանուր գյուղատնտեսության արտահանման քառորդ մասից ավելին, գլխավորապես՝ սննդամթերք ու գյուղմթերքներ բաժին են ընկնում այդ երկրին: Ուստի, Ռուսական շուկայում ներկայումս առաջացող ազատ դաշտերը, թեև լրացուցիչ հնարավորություն են տալիս գյուղատնտեսական արտադրանքի գյուղատնտեսության արտահանման ծավալների ավելացման համար, սակայն տնտեսության վեկտորի այդ ուղղությամբ չի կարող բարեփոխիչ նշանակություն ունենալ: Գյուղատնտեսության արտահանման կառուցվածքի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս գնահատել ՀՀ ինտեգրացման հեռանկարներն ու ռիսկերը: Այստեղ պարզորոշ ուրվագծվում է գյուղատնտեսության արտահանման դիվերսիֆիկացիայի շատ ցածր մակարդակը և որոշակի կոնկրետ թվով ապրանքատեսակների գյուղատնտեսության արտահանման բարձր մակարդակը: Միևնույն ժամանակ տնտեսության մեջ առկա է մասնագիտացման շատ բարձր մակարդակ այս ճյուղերի նկատմամբ, ինչը նշանակում է, որ ներկայումս տնտեսության զարգացման ուղղությամբ շեղվում է մրցունակությունն ապահովող ճյուղերից:

Գյուղատնտեսության արտահանման կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տնտեսության մրցունակությունն ապահովող հիմնական ճյուղերն առավել կենտրոնացած են դեպի երրորդ երկրներն և Մաքսային միությունն անդամագրումը դեռևս դրական նախապայման չէ: Մյուս կողմից հնարավոր են նոր առևտրային հարաբերությունների ձևավորում տնտեսական միության շրջանակներում: Ավելին, այդպիսի կապերի ձևավորումը մեծապես կախված է տնտեսության մրցունակության մակարդակից, որը ՀՀ-ում մյուս երկրների համեմատությամբ դեռևս ոչ բարենպաստ դիրքերում է: ԵԱՏՄ անդամակցությունը առաջացնում է նաև մաքսային սահմանի վրա ԱԱՀ-ի գանձման

փոփոխություններ, մասնավորապես՝ սահմանային կետերում ԱԱՀ-ի գանձման վերացում:

Յետևաբար՝ հարկային օրենսդրության վերանայման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ տնտեսության զարգացման տեսանկյունից անհրաժեշտ է իրականացնել հարկային բարեփոխումներ՝ ուղղված հարկային օրենսդրության, պարզեցման, հարկային օրենքների տարընթերցումների վերացման, հարկային բեռի բարելավման, հարկային գործիքների կիրառման: Ի վերջո, հարկային բարեփոխումների նպատակը գործարար միջավայրի վարկանիշի բարձրացումն ու ներդրումային ակտիվության բարձրացումն է, նոր աշխատատեղերի ստեղծումն է, պետական բյուջեում հարկային եկամուտների ավելացումն է: Յարկային բարեփոխումների գործիքներից են հանդիսանում հարկային արտոնությունները, որոնք կոչվում են նաև ակտիվ հարկային միջոցառումներ: Դրանց սահմանումն ու գործնականում կիրառությունը ուղղված է հարկման հորիզոնական արդարության սկզբունքի ամրապնդմանը: Ընդհանուր առմամբ, գործող օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնությունները կարելի է խմբավորել հետևյալ հիմնական խմբերում¹¹⁷.

- 1) սոցիալական ուղղվածություն ունեցող հարկային արտոնություններ,
- 2) ոլորտային հարկային արտոնություններ,
- 3) գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ու ակտիվության բարձրացմանն ուղղված հարկային արտոնություններ:

Սոցիալական ուղղվածություն ունեցող հարկային արտոնությունների կիրառության հիմնական նպատակը առողջապահական, կրթական ու գիտական նշանակության որոշ ծառայությունների մատուցումն ու ապրանքների մատակարարումը ավելացված արժեքի հարկից ազատելն է, ինչը, այլ հավասար պայմաններում հնարավորություն է ընձեռում նշյալ ապրանքներն

¹¹⁷ “Յարկային և մաքսային օրենսդրության վերանայման ռազմավարական սկզբունքների ուղեցույցին և սկզբունքներից բխող միջոցառումների իրականացման ժամանակցույցին հավանության տալու մասին” ՀՀ կառավարություն 25.07.2013 N 29: Արձանագրային որոշում:

ու ծառայ ու թյ ու ն ն եր ը ձ եռ ք բ եր ել համեմատաբար ցածր գն եր ով: Սոցիալ ական ու ղ ղ վ ած ու թյ ու ն ու ն եց ող հարկայ ի ն արտո ն ու թյ ու ն ն եր ի կիրառ ու թյ ան մյ ու ս հիմնական նպատակը \$ի գիկական անձանց կողմից սոցիալ ական պաշտպան ու թյ ան նպատակ ն եր ով ստաց վ ող որ ոչ եկամ ու տ ն եր եկամ տայ ի ն հարկ ով հարկ ու մի ց ազատել ն է:

Ոլ որ տայ ի ն հարկայ ի ն արտո ն ու թյ ու ն ն եր ի կիրառ ու թյ ու ն ն ը պայ ման ավ որ վ ած է նրան ով, որ ՀՀ տնտես ու թյ ան երկար աժամ կ ետ ն կայ ու ն զարգաց ման տեսան կյ ու ն ի ց տնտես ու թյ ան որ ոչ ոլ որ տ ն եր ի զարգաց ու մ ը գերակա խնդիր ն եր ե ն, ի ն չ պի ս ի ք ե ն՝ ոսկ եր չ ու թյ ու ն ը, զբոսա շ ը թյ ու ն ը, գորգ ա գործ ու թյ ու ն ը և այ լ ն: Այ ս առ ու մ ով, Կառավար ու թյ ու ն ը տարբեր գործ ի ք ն եր ով, այ դ թ վ ու մ՝ հարկայ ի ն արտո ն ու թյ ու ն ն եր ի կիրառ ու թյ ամբ, օժանդակ ու մ է այ դ ոլ որ տ ն եր ու մ գործ ող տնտես ավար ող սուբյ եկ տ ն եր ի ն: Այ ս խմբ ի ոլ որ տայ ի ն արտո ն ու թյ ու ն ն եր ի կիրառ ու թյ ան նպատակ ա հար մար ու թյ ու ն ը հիմն ավ որ վ ու մ է նաև դրան ց արդյ ու ն ավ ետ ու թյ ամբ և ն եղ շ ը ջ ան ակ ով, հե տ ն աբար ն շ յ ավ արտո ն ու թյ ու ն ն եր ի շար ու ն ակ ակ ան կիրառ ու թյ ու ն ը կարև որ վ ու մ է նաև տնտես ու թյ ան զարգաց ման ն եր կ ա փ ու լ լ ու մ:

Մյ ու ս խնդիր ը պայ ման ավ որ վ ած է նրան ով, որ ՀՀ տնտես ու թյ ու ն ու մ կան այ ն պի ս ի ոլ որ տ ն եր, որ տեղ արդյ ու ն ավ ետ հարկայ ի ն վար չ արար ու թյ ան իրակ ան աց ու մ ը մշ տապե ս դ ժ վար լ ու ծ ել ի խնդիր է եղել հարկայ ի ն մարմ ի ն ն եր ի համար: Խոս ք ը գլ խ ավ որ ապե ս վ եր աբ եր ու մ է տնտես ու թյ ան գյ ու ղ ա տ ն տես ակ ան ու \$ի ն ան ս ակ ան ոլ որ տ ն եր ի ն: Մաս ն ավ որ ապե ս, այ ս տեղ խոս ք ը գ ն ու մ է գյ ու ղ ա տ ն տես ակ ան արտադր ան ք ի իրաց ու մի ց ստաց վ ող եկամ ու տ ն եր ի՝ շ ա հ ու թ ա հ ար կ ով կամ եկամ տայ ի ն հարկ ով հարկ ու մի ց ազատ ման արտո ն ու թյ ան մաս ի ն¹¹⁸: Պե տք է ն շ ել, որ այ ս արտո ն ու թյ ան համար բավակ ան ի ն բարդ է որ ոչ ել, գյ ու ղ ա տ ն տես ակ ան արտադր ան ք ի ապր ան ք այ ի ն արտադր ու թյ ան մաս ի (իրաց ման համար նախատես վ ած մաս ի) առան ձ ն աց ու մ ը սե փակ ան կար ի ք ն եր ի համար արտադր վ ող գյ ու ղ ա տ ն տես ակ ան արտադր ան ք ի ց:

Հարկայ ի ն օրենսդր ու թյ ան համաձ այ ն, գյ ու ղ ա տ ն տես ակ ան

¹¹⁸ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 8: ՀՀՊՏ 2010.12.30/69(803).1

գործունեությամբ զբաղվելու համար ֆիզիկական անձանցից պետական հաշվառում չի պահանջվում, ինչը նշանակում է, որ գյուղատնտեսական գործունեության ոլորտում գործող ֆիզիկական անձինք ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար համապատասխան կարգավիճակ չունեն։ Այդ կապակցությամբ, նախքան գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամուտների հարկման համակարգի ներդրումը անհրաժեշտ է միջոցառումներ ձեռնարկել գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող անձանց հաշվառման ու ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար որոշակի կարգավիճակի տրամադրման ուղղությամբ:

Կարևոր է նշել նաև հարկային օրենսդրության փոփոխությունները, որոնք վերաբերում են գրեթե բոլոր հարկատեսակներին: Հատկապես, խոսքը վերաբերում է ՓՄՁ-երի հարկմանը: Օրինակ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության ու նրա շրջանառության հարկի հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերությունները: Այն սահմանված կարգով, չափերով ու ժամկետներում առևտրային կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից իրականացվող գործունեության համար պետական բյուջե վճարվող՝ ավելացված արժեքի հարկին (ԱԱՀ) և շահութահարկին փոխարինող ուղղակի հարկ է¹¹⁹:

Իրականում, այս հարկատեսակը կարող է ՓՄՁ-ի զարգացման համար լուրջ խթան հանդիսանալ, քանի որ սույն օրենքով կարգավորվող հարաբերությունների մասով շրջանառության հարկ վճարողներն ազատվում են «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ կետի մասով հարկային գործակալի համար սահմանված պարտավորությունների կատարումից¹²⁰: Այսինքն՝ ՓՄՁ բեռի լուրջ թեթևացում կարելի է համարել առանց հիմնավորող փաստաթղթերի ձեռքբերման գործարքների նկատմամբ սահմանված պարտավորությունների կատարումից ազատումը:

¹¹⁹ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 6: ՀՀՊՏ 2012.12.28/66(940)

¹²⁰ Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ կետ: ՀՀՊՏ 2010.12.30/69(803).1

Ի տարբերություն ԱՄՆ վճարող համարվելու կարգավիճակի, այստեղ վերացել է մեկ մատակարարից եկամուտների ու ծախսերի 80% և ավելի կողմնորոշման պատճառով ԱՄՆ վճարող դառնալու խնդիրը, ինչը ՓՄՁ որոշ ոլորտներում և ուրջ խնդիր է դարձել, իսկ օրենքը իրականում չէր ծառայում իր նպատակին:

Անհրաժեշտ է նշել նաև, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի վերջին փոփոխությունն տեղի է ունեցել 2012թ. դեկտեմբեր ամսին, որը հարկման տեսանկյունից հստակեցրել է համատեղ գործունեության իրավական ձևակերպումը: Կարելի է դրական համարել 4-րդ հավելվածի չկիրառումը ՓՄՁ սուբյեկտների վրա, և մի շարք չկարգավորված հարցերի հստակեցում, հատկապես մաքսատնից առաքումների իրականացնելու հետ կապված:

Ինչպես տեսնում ենք, սկզբունքորեն, փոփոխությունը կատարվել է միայն ՓՄՁ-ի դաշտում՝ առաջարկվել է նոր տնտեսավարման սկզբունք փոքր և միջին բիզնեսի համար, որը պետք է հանդիսանա խթան վերջինիս զարգացման համար: Օրենքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին փոփոխությունների արդյունքում առաջադրվող 3.5-5.0% հարկի վճարումն իրացման շրջանառությունից նախատեսում է նաև այս հարկատեսակի գծով շահույթաբերության նորմա, որի հիման վրա ակնկալվում է, որ հարկատուն պետք է ունենա 17.5-25.0% շահույթաբերություն, ինչը փոքր և միջին բիզնեսի բնագավառում թե՛ առևտրի, թե՛ արտադրության բնագավառում հնարավոր չէ: Օրենքով նաև նախատեսվում է, որ հարկային հաշվառման պարագայում տրված է արտոնություն չհաշվառել ծախսերը և համաձայն «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի, շրջանառության հարկ վճարողներն ազատվում են «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասով հարկային գործակալի համար սահմանված պարտավորությունների կատարումից:

Ստացվում է, որ շրջանառության հարկով աշխատող հարկատուն չի վճարում 11% եկամտային հարկ և հաշվետու չէ ձեռքբերումների ծախսերի մասով, ինչպես նաև համաձայն նույն օրենքի 12-րդ հոդվածի՝ «շրջանառության հարկ վճարողներն իրենց կողմից

առաքվող, տրամադրվող, վաճառվող ապրանքների և մատուցվող ծառայությունների գծով գնորդներին (ծառայություններից օգտվողներին) դուրս են գրում հաշվարկային փաստաթղթեր՝ օրենսդրությամբ սահմանված կարգով»:

Այսինքն՝ այս օրենքի մի քանի դրույթների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ՝

- ընդհանուր հարկման դաշտի արդյունավետությունը այս օրենքից վերջի բարձրանա,
- շրջանառության հարկով աշխատողին հաշվարկային փաստաթղթերի դուրս գրելու թույլ տվողությունը հնարավորություն է տալիս վերջինին ներազդել ընդհանուր դաշտի հարկման արդյունավետության վրա,
- շրջանառության հարկը առևտրի ոլորտի համար ունի շատ սահմանափակ մակարդակ: Այս շեմը տվյալ ոլորտի համար պետք է ունենա առնվազն կրկնակի մակարդակ և տվյալ դեպքում ու համապատասխան դրույթաչափերով պահպանվում է դառնում, որ կպահպանվի ստվերը, և շատ հնարավոր է, որ այն կուենա աճի միտում,
- շրջանառության հարկի նմանատիպ եղանակով կիրառումը նպաստում է հարկային բեռի ավելացմանը բարեխիղճ հարկատուների մոտ,
- շրջանառության հարկի այսպիսի կիրառումը նպաստում է այս օրենքում սողանքների օգտագործմանը անբարեխիղճ հարկատուների կողմից և ավելացնում է ռիսկայնության աստիճանը հարկային հարաբերությունների ձևավորման պարագայում:

Այսինքն՝ վերը նշվածից պարզ է դառնում, որ այս օրենքը կոչված է հարկային հարաբերությունների զարգացմանը, և ինչն ավելի կարևոր է, չի նպաստելու տնտեսության զարգացմանը, հարկման բազայի ավելացմանը և շրջանառության ծավալների աճին: Եվ ավելի ևս հանդիսանում է խոչընդոտ ընդհանուր հարկման դաշտի արդյունավետության բարձրացման համար:

ՓՄՁ-ի դաշտում վերլուծությունների արդյունքում տրամաբանական է և անհրաժեշտ նախապայման, որ պետությունը ՓՄՁ-ի

համար սահմանի միայլ շեմ, որի պարագայում տրամադրվի դրանց համար հարկերից ազատման արտոնույթյուն, ինչը հնարավորություն կտա ֆիզիկական անձանց ակտիվ ներգրավել բիզնեսի բնագավառ, դրանով իսկ խթանելով ձեռներեցության զարգացումը, ինչպես նաև մակրոմակարդակում կապահովի սպառումը, որը հնարավորություն կտա անուղղակի հարկերի միջոցով հավաքագրել հարկային մուտքեր, և անհրաժեշտ կուտակումներով, ապահովել ՓՄՁ-ների հետագա զարգացումը:

Միայն հարկային արտոնույթյունների կտրվածքով է հնարավոր ապահովել ՓՄՁ-ի քանակական աճը, քանի որ վարկավորման գործընթացն իր բավականին բարձր տոկոսների հաշվին չի կարող աջակցել ՓՄՁ-ի տարածմանը և զարգացմանը: Մեկ ուրիշ կարևոր խնդիր է հանդիսանում նաև ՓՄՁ-ի համար 115 մլն դրամի շեմը, որտեղ ևս անհրաժեշտ է կիրառել ոլորտային մոտեցում: Այսինքն՝ մանրածախ առևտրի ոլորտի համար այս շեմը կիրառելի չէ՝ հաշվի առնելով վերադիր ծախսերի բարձր մակարդակը: Ուստի՝ այս ոլորտում շեմը հարկավոր է ավելացնել՝ կիրառելով շրջանառության հարկ և ավելի խիստ տուգանքներ՝ ՀԴՄ-ի կանոնների վարման խախտումների համար:

ՓՄՁ-ի գործունեությունը ներկայացնելիս պետք է հիշենք, որ այն տնտեսությունում հանդիսանում է փոխկապակցված կողմ և ներքին շուկայում՝ խոշոր կազմակերպությունների հետ միասին ապահովում է արտադրություն - սպառում փուլը:

Այսպիսով, կապված ՓՄՁ-ների գործունեության ոլորտում հարկային քաղաքականության բարելավման և օրենսդրական փոփոխությունների հետ, այսօր կան բազում քանակության արտադրական կազմակերպություններ, որոնց շրջանառությունը գերազանցում է ԱԱՀ-ի շեմը, սակայն նրանք օգտվում են այս օրենսդրական սողանքից և, թաքցնելով շրջանառությունները՝ օգտվում են արտոնույթյուններից և չեն վարում նաև հարկային հաշվառում՝ գուճահեռ հաշվապահական հաշվառմանը:

Մեր կարծիքով, այս օրենքի բացը պետք է վերանա, քանի որ այն ձեռնտու է միայն անբարեխիղճ հարկատուներին, իսկ վերջնական

արդյունքում՝ փոքր և
տուժվում է¹²¹:

միջին բիզնեսը, մինչև անգամ,

Պետք է նշել, որ ՀՀ-ում հարկ վճարողի ռիսկայնության գնահատման համար կիրառվում է 30 ռիսկային չափանիշներ, որոնք ըստիրենց կարևորության դասակարգվում են 3 խմբերի՝

1. բարձր ռիսկային,

2. միջին ռիսկային,

3. ցածր կարևորության ռիսկային չափանիշները:

Ընդ որում, ռիսկային չափանիշների յուրաքանչյուր խմբում ընդգրկված են 10 ռիսկային չափանիշներ, որոնցից յուրաքանչյուրն ունի ռիսկային չափանիշի կարևորություն (կշիռն) արտահայտող գնահատական (բալային միավոր): 1-ին խմբում ընդգրկված յուրաքանչյուր ռիսկային չափանիշն ունի 3, 2-րդ խմբինը՝ 2, իսկ 3-րդ խմբինը՝ 1 բալային միավոր: Բոլոր ռիսկային չափանիշների բալային միավորների հանրագումարը 60 միավոր (բալ) է:

Ըստ ռիսկայնության աստիճանի հարկ վճարողները դասակարգվում են 3 խմբերի՝ բարձր ռիսկային, միջին ռիսկային և ցածր ռիսկային: Հարկ վճարողների ռիսկայնության յուրաքանչյուր խմբին համապատասխան գնահատականները (բալային միավորները) և խախտումների հայտնաբերման հավանականությունները ներկայացվել են հավելված 8-ում:

ՀՀ-ում հարկ վճարողների ռիսկայնության աստիճանի համակարգի ներդրման և դրա կիրարկման անհրաժեշտությունը պայմանավորված է իրականացրած և իրականացվող տեսչական բարեփոխումներով: Մասնավորապես, ստուգում իրականացնող բոլոր մարմինները ներդրել են ռիսկի վրահիմնված ստուգման համակարգ և ստուգումը ծրագրվել է՝ ելնելով տնտեսվարող սուբյեկտի ռիսկայնությունից:

ՀՀ հարկային օրենսգրքի միջոցով կարգավորվելու է ՀՀ-ում կիրառվող հարկերի և օրենսգրքով նախատեսված վճարների հետ կապված հարաբերությունները, սահմանելու են հարկային

¹²¹ Ковалёв В. В., Финансовый анализ: Управление капиталом., Выбор инвестиций., Анализ отчетности., 2-е издание., преаб. и допол., М., Финансы и статистика., 1997., с. 121-130

համակարգի սկզբունքները, հարկի և վճարի հասկացությունները, տեսակները, վճարողների շրջանակը, դրույքաչափերը, հաշվարկման, վճարման, իսկ օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ հարկային պարտավորությունների գանձման կարգն ու ժամկետները, ինչպես նաև հարկային արտոնությունները: Բացի այդ, այն ուղղված է նրան, որ համարելով և համակարգելով հարկերի հաշվարկման հաշվառման վճարման փորձը, պետք է միասնականացվեն բազմաթիվ սկզբունքներ տարբեր հարկատեսակների մասով: Կարելի է ասել, որ հարկային օրենսդրությունը հիմնված է այն տնտեսագիտական սկզբունքի վրա, որ պետք է կրճատել առանձին հարկատեսակների գծով արտոնությունները և դրանց փոխարեն պետք է չեղցի իրականացնել առավել հասցեական սուբսիդավորում: Նման մոտեցումը արդյունավետ կլինի, եթե, իհարկե, արտոնություններից հրաժարումն իսկապես հնարավոր լինի փոխարինել դրանց կարիքն ունեցող սուբյեկտների հասցեական սուբսիդավորմամբ:

Հայաստանում հարկային հարաբերությունները կարգավորվել են մի քանի տարբեր օրենքներով՝ «Հարկերի մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին», «Եկամտային հարկի մասին», «Շահույթահարկի մասին», «Ակցիզային հարկի մասին» և մի քանի այլ առանձին օրենքներով:

«Հարկային օրենսգրքի» գաղափարն այն է, որ սրամեջ պետք է միավորվեն վերը նշված բոլոր առանձին օրենքները, հարկային օրենսդրությունը պարզեցվի, տարընթերցումների և հարկային մարմինների կողմից կամայականությունների կիրառման հնարավորությունները բացառվեն և այլն:

Հարկային օրենսգրքում կան մի քանի \$ուլնդամենտալ փոփոխություններ, ինչպես ԱԱՀ վճարող համարվելու շեմը, գյուղատնտեսության հարկումը, հարկերի կամ հարկվող շահույթի հաշվառման նոր մեխանիզմները և այլն:

ԱԱՀ-ի շեմը սահմանվում է վերադառնալ 115 մլն դրամից 58,35 մլն դրամը, որն ուժի մեջ է մտնելու 2018թ. հունվարի 1-ից, իսկ ԱԱՀ-մասով կատարվող փոփոխությունները ուժի մեջ են մտնելու 2019թ. հունվարի 1-ից: Այս բացառությունը, երևի թե, արված է ընդամենը վերջերս շրջանառության հարկի օրենքի փոփոխությունների հետ

կապված, երբ կառավարությունը որոշ հարցերում ընդառաջ գնաց բողոքի և իքթարձրացրած բիզնեսի պահանջներին:

Մեր կարծիքով, ԱԱՀ-ի շեմն ինքն իրենից վտանգ չի ներկայացնում, եթե երկրի տնտեսության ներսում մենք խնդիր չենք ունենում պարտադիր փաստաթղթավորման հետ: Այսինքն, բիզնեսը գնորդ-մատակարար շղթայում չի կորցնում իրեն հասանելիք ԱԱՀ-ի հաշվանցման իրավունքը, եթե այդ շղթայում բոլորը գնում կամ մատակարարում են իրենց ապրանքները փաստաթղթավորված: Բայց եթե գնահատենք այսօրվա իրավիճակը, մենք խնդիր ունենք հենց փաստաթղթավորման հետ, և այստեղ ամենաթույլ օղակը ՓՄՁ-ներն են: Հիմա նրանք այլ ընտրանք չունեն այլ մատակարարից գնում կատարելու, որը կտա փաստաթուղթ, կամ չեն կարող հստակ հաշիվ ապրանքագրերով ներմուծում կատարել և ունենալ սահմանին առաջացող ԱԱՀ-ի դեբետ՝ հաշվանցման իրավունք:

Խնդիր է նաև այն, որ ԱԱՀ-ի հաշվանցման կամ պակասեցման համար միայն հիմք է հանդիսանում հարկային հաշիվը կամ մաքսային բեռնագիրը, այսինքն ՀԴՄ կտրոնով առանձնացված ԱԱՀ-ն այլ ևս հիմք չենք ընդունում:

Նույն խնդիրը վերաբերում է շահույթահարկին, մասնավորապես ծախս համարվող փաստաթղթերից հանված է ՀԴՄ կտրոնը, քանի որ օրենսգրքի 55 հոդվածով սահմանվում է հաշվարկային փաստաթղթի նոր մոտեցումներ՝ ծախսի համար մի կերպ, եկամտի համար՝ մի կերպ: Այստեղ գործում է հաշվեկշռի սկզբունքը, համաձայն որի եթե մեկի մոտ եկամուտ է, ապա մյուսի մոտ դա ծախս է: Հետևաբար, հարկային նման փոփոխությունների հիմքում ընկած է քաղաքական կամքը, քանի որ այն միահյուսված է տնտեսական որոշման հետ, ինչը պետք է համապարտադիր լինի ՀՀ-ում գործող բոլոր տնտեսվարող սուբյեկտների համար:

21-րդ դարի գործարարը շատ ռեսուրս չպետք է ծախսի հարկային հաշվարկների վրա: Ժամանակը շատ թանկ է: Նա պետք է զբաղված լինի արդյունք ստեղծելով, նորարարություն անելով, այլ ոչ թե ամեն քայլին մտածի այս հարկային առումով սա ծախս է, թե չէ, սա ճիշտ ձևակերպվեց, թե ոչ: Մանավանդ երբ ձեռնարկատիրական

գործունեության ժամանակ յուրաքանչյուր փուլում կիրառվում են արդիական էլեկտրոնային համակարգեր, ՅԴՄ-ներ, առցանց տեսանելի է դառնում բիզնեսի շրջանառությունը: Յետևաբար՝ առաջարկվում է գնալ պարզ ճանապարհով. շրջանառություն՝ անգամ հարկային տոկոսադրույք, ինչն ավելի կանխատեսելի է թե պետության, թե գործարարի կողմից:

Հարկային օրենսդրության բարեփոխումներից անմաս չի մնացել ԱԱՀ-ը, մասնավորապես «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքի արտոնություններ բաժնից հանվել է.

Հոդված 30. Անմիջական արտադրողի կողմից ՀՀ-ում արտադրված ձեռագործ գորգերի իրացումը,

Հոդված 32. Դիզելային վառելիքի ներմուծումը և օտարումը,

Հոդված 35. Ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման ջրի մատակարարման գործարքները,

Հոդված 37. Թանկարժեք մետաղների և թանկարժեք մետաղներից պատրաստված ոսկերչական նշանակության կիսաֆաբրիկատները:

Այս փոփոխությունները մեր կարծիքով առանձնակի ազդեցություններ չի ունենաՓՄՁ ոլորտի վրա:

Ավելացված է հետևյալ հոդվածը.

Օտարերկրյա զբոսաշրջիկին զբոսաշրջային ծառայությունների մատուցումը, ինչպես նաև զբոսաշրջային գործակալությունների կողմից գործակալական ծառայությունների մատուցումը, եթե այդ ծառայությունների շրջանակներում ուղևորությունները, ճանապարհորդությունները, էքսկուրսիաներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության տարածքում, որը մեծ ազդեցություն կունենա Հայաստանում զբոսաշրջության զարգացման վրա:

Կարելի է հիմնավորել հարկային բարեփոխումների արդյունքում գործարար միջավայրի ինստիտուցիոնալ փոփոխությունները, ինչպիսիք են մրցակցային միջավայրի, գնաճային հնարավոր ճնշումների, պետական բյուջեի հարկային եկամուտների մեծության, ինչպես նաև հարկային վարչարարության ազդեցությունները: Ակնկալվում է, որ հարկային բարեփոխումներն իրականացվելու են 3-5 տարիների ընթացքում,

որպեսզի հնարավոր լինի հարկային համակարգում ապահովել կայունություն և սահունություն: Իսկ դա նշանակում է, որ հարկային համակարգի բարելավման ուղիներն ապահովելու են հարկային եկամուտների աճ, իսկ գործարար միջավայրի ինստիտուցիոնալ զարգացման տեսանկյունից այն նպաստելու է տնտեսության մրցունակությանը, ներդրումային գրավչության բարձրացմանը՝ ուղղված սպառման հարկմանը:

Հարկային օրենսդրությունում տեղի են ունեցել փոփոխություններ, որոնք վերաբերում են պետական բյուջեի նկատմամբ հարկ վճարողների հարկային պարտավորությունների հաշվառման արմատապես նոր համակարգին՝ ներկայում այդ նպատակով կիրառվող մի քանի տասնյակ գանձապետական հաշիվների փոխարեն կիրառելով ընդամենը մեկ՝ միասնական գանձապետական հաշիվ: Հիմնական սկզբունքը կայանում է նրանում, որ հարկ վճարողների կողմից միասնական գանձապետական հաշիվն վճարված գումարները դեռևս չեն համարվում պետական բյուջեի հարկային եկամուտներ, քանի դեռ հարկ վճարողը չի ներկայացրել հարկային պարտավորություն արտացոլող հարկային հաշվարկ: Հետևաբար, հարկ վճարողը մինչև հարկային հաշվարկների ներկայացումը կարող է փաստացի տնօրինել իր կողմից միասնական գանձապետական հաշիվն վճարված գումարները, այդ թվում՝ հետստանալ:

Կարելի է ասել, որ 2018-ին օրենսգրքի կիրառմամբ հարկային համակարգը կնպաստի գործարար ակտիվությանը, տնտեսական հարաբերությունների զարգացմանը:

Այսպիսով՝ հարկային համակարգի բարելավման գործում անհրաժեշտ է որոշել ՀՀ տնտեսության կամ գործարար միջավայրի վրա ընկնող հարկային բեռի մակարդակը: Ուստի, ելնելով այդ խնդրի լուծման անհրաժեշտությունից, առաջարկում ենք ՀՀ հարկային համակարգի բարելավման գործում հաշվարկել հարկային համակարգի կայունության գործակիցները ԼաՖֆերի կորի միջոցով:


Հիմք ընդունելով ենթահարց 2.3-ում բերված արտադրական և ենթակառուցվածքային ֆունկցիաների **(2.3.3) բանաձևը**, հաշվարկենք հարկային համակարգի կայունության գործակիցները՝ 2-րդ կարգի հավասարման վերածելու միջոցով՝

$$Ts^* = \frac{-(a+b LN L) + \sqrt{(a+bTs LN [L])^2 - 8acL}}{4a} \quad (3.1.1)$$

$$Ts^* = \frac{-(a+b LN L) - \sqrt{(a+bTs LN [L])^2 - 8acL}}{4a} \quad (3.1.2)$$

(3.2.1-3.2.2) բանաձևերը ցույց են տալիս հարկային համակարգի սահմանային արդյունավետությունը, որը հաշվարկվել է գծապատկեր 3.2.2-ի և աղյուսակ 3.2.1-ի միջոցով:

Հարկային համակարգի կայունության արդյունավետության բարձրացումը նշանակում է, որ տեղի են ունեցել հարկային բարեփոխումներ, մասնավորապես՝ աղյուսակ 3.2.1-ի 4-րդ սյունակում 2007 թվականից սկսած հարկային կայունության գործակիցներն աճել են, ինչը համընկել է ֆինանսատնտեսական ճգնաժամի առաջացման հետ: Այդ առումով, 2007 թվականից մինչ օրս հանրապետությունում տեղի են ունեցել հարկային բարեփոխումներ, որոնք համընկնում են ՀՀ հարկային համակարգի զարգացման 2-րդ փուլի հետ՝ ուղղված տարբեր հարկատեսակների գծով հարկային վարչարարության արդյունավետության բարձրացմանը:



Գծապատկեր

3.1.2. 2001-2014թթ. ՀՀ հարկային համակարգի կայունության սահմանային արդյունավետությունն՝ ըստ արտադրական-ենթակառուցվածքային ֆունկցիաների

Հարկային համակարգի կայունության արդյունավետության բարձրացումը, ի վերջո նպաստում է ՀՀ ներդրումային հոսքերի

ավելացման, գործարար միջավայրի բարելավման, տնտեսական քաղաքականության արդյունավետ իրականացման:

Յետևաբար, քանի դեռ հանրապետությունում չեն վերլուծվել տնտեսության զարգացման գերակայությունները, պետական կառավարման մարմինների կողմից չեն իրականացվել արտոնյալ հաշվառում՝ հարկային և վարկային արտոնությունների տրամադրում, արտադրական ռեսուրսները մշտապես կհոսեն հանրապետությունից դուրս՝ ենթակառուցվածքային գործոնի՝ հարկային բեռի բարձր մակարդակի պատճառով:

Այդ առումով, առաջարկում ենք հաշվարկել ՀՀ-ում ներդրումային հոսքերի և հարկային եկամուտների կոռելյացիոն կապը՝

$$r = \frac{n\Sigma XY / \Sigma X \Sigma Y}{\sqrt{\Sigma X^2 - (\Sigma X)^2} * \sqrt{N \Sigma Y^2 - (\Sigma Y)^2}} \quad (3.1.3)$$

r-ն՝ կոռելյացիայի գործակիցն է հարկերի և ներդրումների փոփոխականների միջև,

X-ն՝ հարկային եկամուտներն են,

Y-ն՝ ներդրումային հոսքերն են:

N-ն՝ փոփոխականների թիվն է,

Փաստացի և Լաֆֆերի կորի միջոցով հաշվարկված հարկային համակարգի կայ ու նու թյ ան սահմանային արդյ ու նալետու թյ ան գործակիցներ՝ ըստարտարական և ենթակառուցվածքային ֆու նկցիաների¹²²

	Ts- փաստացի հարկային բեռ	TS*- հարկային համակարգի կայ ու նու թյ ան գործակից ըստ Լաֆֆերի կորի	TS**- հարկային համակարգի կայ ու նու թյ ան գործակից ըստ Լաֆֆերի կորի	Ts - փաստացի հարկային համակարգի կայ ու նու թյ ան մոդուլային արժեք	TS**- հարկային համակարգի կայ ու նու թյ ան մոդուլային արժեք՝ ըստ Լաֆֆերի կորի	TS*- հարկային համակարգի կայ ու նու թյ ան մոդուլային արժեք՝ ըստ Լաֆֆերի կորի
	1	2	3	4	5	6
2001	13,56	-5,80	-41,52	0,41	3,21	12,1
2002	13,95	-0,39	-2,80	0,39	5,41	38,72
2003	13,44	-0,26	-1,89	0,51	0,13	0,91
2004	13,50	0,72	5,13	0,06	0,98	7,02
2005	13,92	-0,12	-0,83	0,43	0,83	5,96
2006	14,14	-0,03	-0,22	0,21	0,09	0,61
2007	15,70	-0,89	-6,40	1,56	0,86	6,18
2008	17,11	-4,97	-35,59	1,41	4,08	29,19
2009	16,51	-3,27	-23,38	0,60	1,71	12,21
2010	17,05	-4,92	-35,23	0,54	1,65	11,84
2011	17,15	8,90	-45,20	0,10	13,82	9,97
2012	18,56	-8,11	-58,05	1,41	17,01	12,85
2013	22,38	-6,80	-48,69	3,82	1,31	9,36
2014	23,50	-7,78	-55,72	1,12	0,98	7,03

Ընդ որում r -կոռելյացիայի գործակցի արժեքն է՝ $-1 \leq r \leq 1$

Եթե $r=0$, նշանակում է, որ ընտրված փոփոխականների միջև որևէ կապ գոյություն չունի:

Բանաձև 3.2.2-ի միջոցով 2007-2014թթ. ներդրումային հոսքերի և հարկային եկամուտների միջև գոյություն ունի խիստ կոռելյացիոն կապ, որը կազմում է 1, այսինքն՝ հարկային եկամուտներն ուղղակի ազդեցություն են ունենում ներդրումային հոսքերի ավելացման վրա: Մասնավորապես, հավելված 7- տվյալներից կարող ենք եզրակացնել, որ ներդրումային հոսքերն առավելապես աճել են հանքագործական

¹²² Հաշվարկվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով հավելված 5-ը:

արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղերում՝ 2007-2014թթ. կազմելով 42672,9 հազ. ԱՄՆ դոլար, բուսաբուծության և անասնաբուծության և, որսորդության և հարակից ծառայությունների համար՝ 1386006 հազ. ԱՄՆ դոլար, խմիչքների արտադրությունում՝ 28203.9 հազ. ԱՄՆ դոլար:

Աղյուսակ 3.1.2

ՀՀ ներդրումներն ու հարկային եկամուտները 2007-2014թթ.

	Ընդամենը ներդրումներ, մլն. դրամ	Հարկային եկամուտներ, մլն. դրամ
2007	363512,239	494 420,80
2008	530725,388	610 422,30
2009	420968,385	518 544,10
2010	288091,256	589 900,90
2011	350997,218	647 807,60
2012	316509,863	741 795,40
2013	256871,293	956012,3
Ընդամենը	2527675,64	4558903,4

Յետևաբար, ելնելով վերոգրյալից, առաջարկում ենք հանրապետությանը իրականացնել հարկման բազայի առավելագույն ընդլայնում կամ միջոցառումներ՝ ուղղված տնտեսության տարբեր ոլորտների միջև հարկային բեռի անհամասնության ներքին չեզոքացման, նոր հարկվող օբյեկտների սահմանման, ինչպես նաև առկա հարկման բազան առավել արդյունավետ ու լիարժեք ձևով հարկման ենթարկելու համար: Նոր հարկային արտոնությունների՝ միայն բացառիկ դեպքերում տրամադրումը. առանձին հարկ վճարողներին կամ հարկ վճարողների առանձին խմբերին նոր հարկային արտոնություններ պետք է տրամադրվեն բացառիկ դեպքերում՝ ելնելով երկրի ռազմավարական զարգացման նախապես սահմանված նպատակներից և ծրագրերից:

Հարկային արտոնությունների ժամանակային սահմանափակվածությունը. բացի այն, որ նոր հարկային արտոնություններ կարող են տրամադրվել միայն բացառիկ դեպքերում, հատկանշական է նաև այն, որ այդ արտոնությունները չպետք է լինեն անժամկետ: Այս առումով, նոր տրամադրվող հարկային արտոնությունները ժամանակավոր բնույթ են կրելու և ունենալու են կիրառության հստակ վերջնաժամկետներ:

Գործարար միջավայրի բարելավման գործում հարկային օրենսդրության վերանայումները պետք է ուղղված լինեն նաև Հայաստանի Հանրապետության ունում գործարար միջավայրի հետագա բարելավմանը՝ որպես վերջին տարիներին այս ուղղությամբ իրականացվող աշխատանքների տրամաբանական շարունակություն: Քաղաքականության այս ուղղության հիմնական նպատակադրումը պետք է լինի առնվազն տարածաշրջանում մեր հարկային համակարգի մրցունակության ու գրավչության ապահովումը: Այս առումով, շատ կարևոր է, որպեսզի հարկային օրենսդրության առաջիկա փոփոխությունները միտված լինեն հարկ վճարողների համար անհարկի և տնտեսագիտական հիմնավորումներ չունեցող սահմանափակումների վերացմանը:

3.2 Հարկային բեռի կառավարման հիմնախնդիրները

Պետության կարևորագույն խնդիրներից են հանդիսանում մի կողմից ավելացնել պետական բյուջեում հարկային եկամուտները, մյուս կողմից, թեթևացնել հարկային բեռը: Հետևաբար, հարց է առաջանում, ինչպես բարձրացնել հարկման արդյունավետությունը մի կողմից չվնասելով պետական բյուջեի շահերը, մյուս կողմից հարկային գործիքներով և լծակներով խթանել գործարար միջավայրի զարգացմանը: Իհարկե, այս դեպքում, չպետք է անտեսել նաև ՀՀ-ում հարկային վարչարարության արդյունավետության ցածր մակարդակը, քանի որ ոչ \$որմալ զբաղվածության և տնտեսվարող սուբյեկտների կողմից համախառն եկամուտների թեհայ տարարագրման պայմաններում չի կրճատվում ստվերային տնտեսությունը: Հետևաբար, հարկային հարաբերությունների կարգավորման հարցում հարկերի ֆիսկալ գործառույթին զուգահեռ չպետք է անտեսել հարկերի կարգավորիչ և խթանող գործառույթները:

Հարկային համակարգի բարելավման գործում կարևոր հարցադրումներից են հարկային բեռի գնահատումը և դրա

օպտիմալ ացու մը: Պետք է նշել, որ հարկային բեռը գնահատվում է երկու մակարդակներում՝

- մակրոմակարդակ,
- միկրոմակարդակ:

Հարկային բեռի գնահատման մակրոմակարդակը ցույց է տալիս ամբողջ տնտեսության իրական հատվածի ոլորտներում առաջացած եկամուտներից հավաքագրված հարկերի մեծություները, իսկ միկրոմակարդակում հարկային բեռը ցույց է տալիս կազմակերպությունների և աշխատողների համախառն եկամուտից գանձվող հարկերի մեծություները:

Հետևաբար, կախված երկրի և տնտեսության զարգացվածության աստիճանից հարկային բեռի բաշխումն ըստ տարբեր մակարդակների խիստ տարբեր է լինում¹²³:

Այդ հիմնահարցերը քննարկվել են նաև աշխատանքի երկրորդ գլխում: Ընդ որում, պետք է նշել, որ կարևոր խնդիրներից է ոչ միայն հարկային բեռի գնահատումը, այլ նաև՝ դրա օպտիմալ ացումը: Վերջինիս գնահատման ընդհանուր մեթոդներից են¹²⁴՝

- հարկ վճարողի փոխարինման մեթոդը,
- հարկ վճարողի գործունեության փոփոխման մեթոդը,
- հարկային օրենսդրության փոփոխման մեթոդը,
- հարկային արտոնությունների սահմանման մեթոդը,
- հարկային պարտավորությունների հետաձգման մեթոդը,
- հարկային ժամանակացույցի հետաձգման մեթոդը:

Հարկային բեռի օպտիմալ ացումը գտնվում է հարկային բեռի թեթևացման և հարկերից խուսափելու միջակայքում: Հետևաբար, հարկային բեռի օպտիմալ ացումը բաժանվում է երկու հիմնական խմբերի՝ օրինակական և անօրինական:

Օրինականի դեպքում հարկային բեռի օպտիմալ ացման գործում կիրառվում են միայն օրենքներ և պաշտոնական ցուցումներ և մեթոդներ, որոնք համապատասխանում են բնականոն, անհատականության, արդյունք և ծախսեր հարաբերակցության, օրենսդրական անաչառության, գաղտնիության, վերահսկողության,

¹²³ Черник Д. Г., Алексеев М.Ю., Брусиловская Н.А. и др. Налоги: Учебное пособие для вузов / Под ред. Д.Г. Черника. - 4-е изд., перераб. и доп. - М.: Финансы и статистика, 2009. – С. 134.

¹²⁴ Лукаш Ю.А.. Оптимизация налогов. Методы и схемы. – М.: ГроссМедиа; РОСБУХ. - 2008. – С.134.

չ եզոքության և համակարգային մոտեցման սկզբունքներին:

Իսկ անօրինականի դեպքում հարկային բեռի օպտիմալացումը հիմնվում է հարկային օրենսդրությունում տարբեր հարկատեսակների մասին օրենքների տարընթերցումների և երկիմաստների առկայությամբ և հարկ վճարողների մոտ դրանցից օգտվելու և միտումնավոր հարկերից խուսափելու առումներով:

Հարկային բեռի օպտիմալացման մեթոդներից մեկը հարկային բեռի կրճատումն է, ինչը միկրոմակարդակում իրականացվում է հարկային պլանավորման միջոցով¹²⁵:

Հարց է առաջանում, թե ինչպես կարելի է գնահատել և վերլուծել հարկային բեռը: Իհարկե, տարբեր հեղինակներ տարբեր աշխատանքներում և վերլուծություններում անդրադարձել են այդ հարցին, սակայն մինչ օրս չի մշակվել միասնական մեթոդաբանություն և կամ չի տրվել լիարժեք և սպառիչ պատասխան հարկային բեռի օպտիմալ գնահատման հարցում¹²⁶:


Այս առումով, ՀՀ հարկային համակարգի բարելավման հիմնական ուղղություններից են հանդիսանում հարկային բեռի օպտիմալացումը, հարկային դրույքաչափերի վերանայումն ու արտոնությունների սահմանումը՝ հաշվի առնելով ԵԱՏՄ ինտեգրացիոն գործընթացների դերը ՀՀ հարկային համակարգի ներդաշնակեցման գործում:

Այդ առումով, անհրաժեշտ է հաշվարկել առանձին հարկատեսակների բեռի ազդեցությունը հարկային համակարգի կայունության վրա, մասնավորապես, առանձնացվել են պետական բյուջե հավաքագրվող ուղղակի հարկային բեռի (շահութահարկ/ՀՆԱ և եկամտային հարկ/ՀՆԱ) և անուղղակի հարկային բեռի (ակցիզային հարկ/ՀՆԱ և ԱԱՀ/ՀՆԱ) ցուցանիշները: Այսպես, 2001-2015թթ. հիմնական հարկատեսակների հարկային բեռը աճի և նվազման տարբեր դինամիկաներ, սակայն միջինը ուղղակի հարկերի բեռը՝ շահութահարկի և եկամտային հարկի մասով կազմել են համապատասխանաբար՝ 2,16% և 2,42% աճել է, իսկ անուղղակի հարկերի բեռը՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի մասով կազմել է

¹²⁵ Лукаш Ю.А.. Оптимизация налогов. Методы и схемы. – М.: ГроссМедиа; РОСБУХ, 2008. – С.138.

¹²⁶ Бабанин В.А. Организация налогового планирования в российских компаниях // Финансовый менеджмент. – 2009. - № 3. – С. 39.

համապատասխանաբար՝ 7,85% և 1,57% (**Գծապատկեր 3.2.1**):



Գծապատկեր 3.2.1

2001-2015թթ հիմնական հարկատեսակների հարկային բեռը, %.¹²⁷

Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 3.1.1-ի տվյալները, 2001-2015թթ. պետական բյուջեի հարկային եկամուտների կառուցվածքում ուղղակի և անուղղակի հարկերի մասով նույնպես նկատվել են աճի և նվազական տարբեր դինամիկաներ: Մասնավորապես, 2013 թվականից սկսած կտրուկ սկսել է նվազել շահութահարկի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում:

Այսպես, եթե 2013 թվականին այն կազմել է 12,81 տոկոս, ապա 2014 թվականին նվազելով 2,76 տոկոսային կետով 2015 թվականին շահութահարկի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում դարձել 10,03 տոկոս: Այդ հարկատեսակի մասով արձանագրված նվազեցումները պայմանավորված են շահութահարկի կանխավճարների և նվազագույն շահութահարկի դադարեցմամբ:

Ուղղակի հարկերից եկամտային հրակի մասով նույնպես նկատվել են աճի և նվազման տարբեր դինամիկաներ: Մասնավորապես, 2009 թվականից սկսած սկսել է աճել եկամտահարկի, այնուհետև 2013 թվականից՝ եկամտային հարկի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում: Այդ աճն ակնհայտ շոշափելի է դարձել 2013 թվականին, երբ եկամտահարկին փոխարինել է եկամտային հարկը: Եվ պետք է նշել, որ 2013-2015թթ. եկամտային հարկը կազմել է միջինը 27,88 տոկոս:

2007 թվականից սկսել են նվազել ակցիզային հարկի տեսակարար

¹²⁷ http://www.armstat.am/file/article/finansner_2015_1.pdf

կշիռը ընդհանուր հարկային եկամուտներում: Այն պայմանավորված է եղել Համաշխարհային ճգնաժամի առաջացման հետ, երբ կտրուկ սկսել են նվազել ակցիզային հարկով հարկվող ապրանքների ներմուծումը:

Անուղղակի հարկերից՝ ԱԱՀ-ի մասով նկատվել են աճի և նվազման տարբեր դինամիկաներ: Այդ առումով ամենաբարձր մակարդակն արձանագրվել է 2008 թվականին, որի ընթացքում ԱԱՀ/հարկային եկամուտներ հարաբերակցությունը կազմել է 52 տոկոս: Այս ցուցանիշը խոսում է հարկային վարչարարության ցածր մակարդակի մասին, երբ հարկային մարմինները ապահովում են հարկային մուտքեր բացառապես անուղղակի ճանապարհով՝ անհավասարաչափ բաշխելով փզնեսից և բնակչությունից գանձվող հարկային բեռը: Ըստ, էության, այն ցույց է տալիս ինչպես հարկային համակարգում առկա թերացումներն ու բացթողումները, այնպես էլ՝ տնտեսությունում ենթակառուցվածքների զարգացման ցածր աստիճանը:

2013 թվականից սկսած պետական բյուջե և հարկային եկամուտների կառուցվածքում կրճատվել են ԱԱՀ-ի մուտքերը: Թերևս, սա պայմանավորված է ԵԱՏՄ անդամակցության հետ, երբ աստիճանաբար շրջանառությունից դուրս եկավ ԵԱՏՄ անդամ պետություններից ներկրվող մաքսային սահմանի վրաներմուծվող ապրանքների ԱԱՀ-ով հարկումը: Դա բերեց ԱԱՀ-ի մուտքերի նվազմանը, և 2015 թվականին ԱԱՀ-ի հարաբերակցությունը հարկային եկամուտներում կազմել է 42,62 տոկոս (**Աղյուսակ 3.2.1**):

Այդ առումով, ՀՀ տնտեսության զարգացման համար, առաջարկում են քվերանայել ՀՀ տնտեսության զարգացման ոլորտներում մշակված ռազմավարությունը՝ տալով հարկային արտոնություններ հատկապես այն ոլորտների զարգացման համար, որոնք ունեն ռազմավարական նշանակություն և մրցունակ են ոչ միայն երկրի ներսում, այլ նաև կարող են լուրջ մարտահրավերներ ստեղծել տարածաշրջանային երկրներում շուկայի նոր խորշեր գրավելու համար:

**2001-2015թթ հիմնական հարկառեսսակների տեսակարար կշիռը
հարկային եկամուտներում, %.¹²⁸**

	Շահույթահարկ /Ջարկային եկամուտներ	Եկամտային հարկ/Ջարկային եկամուտներ	Այլ հարկային եկամուտներ	ԱՋՐ/Ջարկային եկամուտներ
2001	10.23	7.05	19.46	49.88
2002	9.17	6.57	18.59	50.00
2003	8.08	7.69	17.91	49.37
2004	12.43	7.93	15.79	45.78
2005	14.91	8.52	12.37	47.00
2006	17.40	9.44	10.61	44.18
2007	15.27	9.47	8.40	50.16
2008	14.12	8.81	7.52	52.15
2009	15.58	11.61	8.25	49.01
2010	13.19	12.53	8.16	51.15
2011	15.10	12.54	6.08	50.71
2012	16.00	12.36	6.65	49.83
2013	12.81	26.40	5.35	41.31
2014	10.05	28.06	3.01	38.47
2015	10.03	29.18	4.89	42.62

Որպես այդպիսին կարող են հանդիսանալ վերամշակող և հանքագործական արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, հատկապես՝ սննդի արտադրության ոլորտում: Վերջինս հետագայում երաշխաբան կարող է ստեղծել համանման ապրանքների ներմուծման փոխարինմանը ապրանքների ներմուծմանը, քանի որ դրանք կարող են արտադրվել Հայաստանում, օրինակ՝ գյուղատնտեսական նշանակություն ապրանքները:

Դեռևս 2008-2009 թվականների համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, իսկ ներկայումս էլ հիմնական առևտրային գործընկեր համարվող Ռուսաստանի Դաշնության տնտեսությունում դրսևորվող անկումային երևույթները անխուսափելիորեն իրենց բացասական ազդեցությունն են թողել նաև ՀՀ տնտեսության ընդհանուր հարկաբյուջետային կայունություն վրա: Ավելին, այս բացասական երևույթները

¹²⁸ http://www.armstat.am/file/article/finansner_2015_1.pdf

ներկայումս էլ շարունակվում են: Այս առումով, հարկային օրենսգրքը կարևորվում է մի կողմից համախառն առաջարկի խթանման ու այդ խթանները կայուն պահպանելու, մյուս կողմից՝ պետական բյուջեի համար լրացուցիչ հարկային եկամուտներ ապահովելու տեսանկյունից: Վերջինս պետք է իրականացվի հարկային եկամուտներ ապահովելու՝ երկրի ներքին ռեսուրսները համախմբելու ճանապարհով: Իսկ գլխավոր շարժիչ ուժը ԵԱՏՄ հարկային օրենսդրության և դրույթաչափերի ներդաշնակեցումն է՝ նպաստելով կապիտալի և աշխատուժի հոսունության կենտրոնացմանը:

1. Հատկանշական է նաև այն, որ մեր երկրում հարկային հարաբերությունները կարգավորվում են տարբեր մակարդակների իրավական ակտերով (ՀՀ օրենքներ, ՀՀ կառավարության որոշումներ, հարկային մարմնի հրամաններ և այլն): Արդյունքում, մի կողմից նկատելիորեն բարդացել է հարկային հարաբերություններ կարգավորող օրենսդրությունից օգտվելը, մյուս կողմից հարկային հարաբերություններ կարգավորող իրավական ակտերի այս տարանջատվածությունն ու բազմազանությունը ստեղծել են մի այնպիսի իրավիճակ, երբ միևնույն նշանակությունն ունեցող հասկացությունները տարբեր իրավական ակտերում կիրառվում են տարբեր եզրույթներով, երբ միատեսակ հարկային հարաբերությունները կարգավորվում են տարբեր սկզբունքներով ու կանոններով: Այս առումով, ՀՀ հարկային օրենսգրքի ընդունմամբ հնարավոր կլինի նկատելիորեն կենտրոնացնել և միօրինակ դարձնել հարկային հարաբերություններ կարգավորող բազմաթիվ իրավական ակտերը, ինչի արդյունքում հարկային օրենսդրությունը կդառնա առավել համակարգված, իսկ դրանից օգտվելը՝ դյուրին: Մասնավորապես, առաջարկվում է հարկային օրենսգրքի շրջանակներում կարգավորել ինչպես հարկ վճարողների հարկային հաշվառման, հարկերի հաշվարկման ու վճարման, հարկ վճարողների սպասարկման ու նրանց գործունեության նկատմամբ հսկողության իրականացման, հարկային պարտավորությունների ու գերավճարների հաշվառման, այնպես էլ հարկային օրենսգրքի պահանջների խախտման համար

պատասխանատվության միջոցների կիրառության, հարկային հարցերով վարչական վարույթի իրականացման, հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցների կիրառության ու հարկային ծառայողների գործողությունների և անգործության բողոքարկման հետկապված հարաբերությունները:

3.3 Գործարար միջավայրի բարեփոխման գերակայությունները

ՀՀ-ում առաջին սերնդի բարեփոխումներն ապահովեցին սոցիալ-տնտեսական զարգացման բավարար հիմքեր երկրորդ սերնդի բարեփոխումների փաթեթ ձևավորելու և կյանքի կոչելու համար: Առանցքում դրվեցին երկրի մրցունակության բարձրացումը, տնտեսության արդիականացումն ու զարգացած երկրների չափանիշներին հնարավորինս մերձեցումը, գիտելիքահենք տնտեսության ձևավորման համար անհրաժեշտ տարրերի ստեղծումը: Բարեփոխումների հետևողական իրագործումը բյուրեղանալու է այնպիսի ձեռքբերումներով, որոնցում երկարաժամկետ կայուն զարգացման հիմքերն ու համակարգային լուծումները գերակշռում են կարճաժամկետ և արագ արդյունքների նկատմամբ: ՀՀ կառավարությունը միշտ քոլորտներում նախաձեռնեց արմատական բարեփոխման ծրագրեր, որոնց նպատակը ներդրումային և գործարար բարենպաստ միջավայրի ապահովումն է: Ծրագրերի մի մասն արդեն իսկ հաջողությամբ ավարտին է հասցվել, իսկ մի մասն ընթացքի մեջ է և այժմ էլ ներառված է կառավարության ծրագրային գերակայությունների շարք: Մասնավորապես, ՀՀ-ում իրականացրած և իրականացվող գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումները ներառում են այն ոլորտները, որտեղ առավել ապես իշխում են կոռուպցիոն ռիսկերը, օրինակ՝ հարկային և մաքսային ոլորտը, բիզնեսի հիմնադրումն և գրանցումը արտաքին առևտուրը, քաղաքաշինական թույլ տվությունները, տեսչական բարեփոխումները, տնտեսական մրցակցության ոլորտը:

Կարելի է ասել, որ ներկայացված բարեփոխման գերակայությունները հրատապ են և արդիական, քանի որ րանք բխում են տնտեսության բացթողումներից, պետական կառավարման մարմինների կատարողականների թերություններից, բնակչության կենսամակարդակի ցածր աստիճանից, գործարարությանը բնորոշ ռիսկերից, ապրանքների արտաքին շուկա հանելու մուտքային արգելքներից, մենաշնորհային դիրքից, ենթակառուցվածքների արդյունավետության ցածր աստիճանից, կոռուպցիոն ռիսկերից և այլն: Բացի այդ, կառուցվածքային բարեփոխումները առաջընթաց են ապրել, չնայած որ առկա են մարտահրավերներ: Բիզնեսի և քաղաքական շահերի միջև կապերն ամուր են և կարող են ազդել հակակոռուպցիոն ջանքերի վրա: Հայաստանի անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը և ԵՄ-ի հետ ավելի պակաս ինտենսիվ ինստիտուցիոնալ հարաբերությունները Հայաստանից բարձր հաստատակամություն կպահանջեն բարեփոխումները ներդնելու և գործարար միջավայրը բարելավելու համար: Հայաստանը և ԵՄ-ն համաձայնել են գտնել նոր իրավական հենք համագործակցության ընդլայնման համար: Իսկ դա նշանակում է, որ հանրապետությունում գործարարության և քաղաքական շահերի միջև կապերն ամուր են և կարող են ազդել հակակոռուպցիոն ջանքերի վրա¹²⁹: Գտնում ենք, որ Հայաստանի անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը և ԵՄ-ի հետ ավելի պակաս ինտենսիվ ինստիտուցիոնալ հարաբերությունները Հայաստանից բարձր հաստատակամություն կպահանջեն բարեփոխումները ներդնելու և գործարար միջավայրը բարելավելու համար: Հայաստանը և ԵՄ-ն համաձայնել են գտնել նոր իրավական հենք համագործակցության ընդլայնման համար:

ՀՀ գործարար միջավայրի զարգացման գերակայությունները բացահայտելու համար անհրաժեշտ է հիմնավորել այն գործոնները, որոնք նպաստում են վերջինիս զարգացմանը, ինչպես նաև այդ գործընթացում առանձնել այն գործոնները, որոնք կաշկանդում են բարենպաստ գործարար միջավայրի ձևավորմանը: Այսինքն՝ «գործարար միջավայրի կաշկանդող» գործոնների վերլուծության

¹²⁹ <http://www.mineconomy.am/arm/30/gortsaruyt.html>

արդյունքում կարելի է հիմնավորել տնտեսական բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը:

Ընդհանուր առմամբ, ՀՀ գործարար միջավայրի զարգացման վրա ազդում են հետևյալ գործոնները՝

- մրցակցային միջավայրը,
- հարկային բեռի օպտիմալացումը,
- գիտելիքահենք տնտեսության ձևավորումը,
- նորամուծությունների խթանումը,
- ներդրումային միջավայրի բարելավումը:

Աշխատանքի երկրորդ գլխում ներկայացվել են մրցակցային միջավայրի վրա ազդող գործոնները, որոնցից անհրաժեշտ է առանձնացնել մակրոտնտեսական ցուցանիշները: Բացի այդ, ՀՀ գործարար միջավայրի զարգացման համար անհրաժեշտ է բացահայտել տնտեսության զարգացման գերակայությունները և փնտրել ուղիներ՝ արտաքին շուկաները գրավելու համար: Այդ առումով, անհրաժեշտ է իրականացնել տնտեսական բնույթի միջոցառումներ՝ ուղղված ՀՀ հարկային համակարգի արդյունավետության բարձրացման, հարկային օրենսդրության մեջ փոփոխություններ առանձին հարկատեսակների մասով՝ տնտեսության աշխուժացման և կոռուպցիոն ռիսկերը կրճատման համար: Յուրաքանչյուր հարկատեսակի հարկման բազայի, դրույքաչափերի, հաշվարկման ու վճարման կարգի, ինչպես նաև հարկային վարչարարության գործիքակազմի ուղղությունը միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ, ի վերջո այդ բոլոր գործընթացները բերում են տնտեսության զարգացմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, երկրում գործարար միջավայրի վարկանիշի բարձրացմանը:

Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 3.2.1-ի տվյալները, 2017-2025թթ. ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունն ակնկալվում է ավելացնել շուրջ 26.9%, իսկ ազգային խնայողությունները՝ 22%: Ինչ վերաբերում է համախմբված բյուջեի ցուցանիշներին, հարկ է նշել, որ օրինակ հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը կամ հարկային բեռը նույնպես

ակնկալվում է բարձրացնել և 2025 թվականին այն հասցնել ով 27.4 %:

Յեռնաբար՝ հարկային համակարգի կայունության բարձրացումը և դրանում կատարվող բոլոր փոփոխություններն էական ազդեցություն են ունեցել գործարար և մրցակցային միջավայրի, գնաճային հնարավոր ճնշումների, պետական բյուջեի հարկային եկամուտների մեծության, ինչպես նաև՝ հարկային վարչարարության վրա: 2007 թվականից մինչ օրս հարկային բարեփոխումները նպատակ են հետապնդում հարկային համակարգում ապահովել կայունություն և սահունություն, այսինքն՝ բարեփոխումները բոլոր փուլերում ապահովելու են հարկային եկամուտների աճ, իսկ տնտեսության մրցունակության և ներդրումային գրավչության բարձրացման համար հարկային համակարգում հիմնական կշիռը տրվում է սպառման հարկմանը:

Սղյուսակ 3.2.1

Մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկան 2011-2025թթ.¹³⁰

(%, ՀՆԱ նկատմամբ)

Ցուցանիշներ	2011	2012	2013	2014	2017*	2021*	2025*
Ներդրումներ և ինայ ողություն							
Ներդրումներ	27.9%	23.8%	20.8%	24.5%	26.7%	27.2%	26.9%
Համախմբված բյուջե	5.4%	4.0%	3.6%	3.5%	3.1%	4.0%	4.2%
Այլ	22.5%	19.8%	17.2%	21.0%	23.6%	23.2%	22.7%
Ազգային ինայ ողություններ	16.0%	12.2%	10.5%	16.1%	21.5%	21.3%	23.2%
Համախմբված բյուջե	1.2%	0.9%	0.6%	1.0%	1.3%	2.2%	2.9%
Այլ	14.8%	11.3%	9.9%	15.1%	20.2%	19.1%	20.3%
Հարկաբյուջեային հատված							
Համախմբված բյուջե							
Ընդամենը եկամուտներ և շնորհներ, որից՝	24.5%	24.8%	25.8%	24.9%	25.0%	26.5%	27.9%
Հարկային եկամուտներ	21.1%	22.5%	24.0%	23.8%	24.3%	25.9%	27.4%
Շնորհներ	1.6%	0.5%	0.3	0.4%	0.3%	0.2%	0.1%
Ընդամենը ծախսեր	27.3%	26.3%	27.4	27.4%	26.8%	28.2%	29.3%
Ընթացիկ ծախսեր	22.5%	22.8%	27.4%	27.4%	23.7%	24.2%	25.1%
Կապիտալ ծախսեր	4.8%	3.6%	24.2%	23.9%	3.1%	4.0%	4.2%

¹³⁰ ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր: ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442 Ն որոշման էջ 31-32:

Հաշվեկշիռ	-2.8%	-1.5%	-1.6%	-2.5%	-1.8%	-1.8%	-1.3%
-----------	-------	-------	-------	-------	-------	-------	-------

*** Կանխատեսում**

Իսկ հարկային համակարգում արմատական փոփոխությունները պայմանավորված են պետական բյուջեի նկատմամբ հարկվճարողների հարկային պարտավորությունների հաշվառման արմատապես նոր համակարգի ներդրմամբ:

ՀՀ գործարարության վարկանիշը 2011-2015թթ. բավականին բարելավվել է՝ ավելանալով շուրջ 15 կետով: Սակայն ՀՀ գործարարների համար կարևոր խնդիր է հանդիսանում հարկային համակարգում գոյություն ունեցող թերացումները, որոնք հնարավորություն են չեն տալիս տնտեսավարող սուբյեկտներին հանդես գալ որպես ներդրողներ ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներում, քանի որ այդ գործունեությունը, բավականին ռիսկային է¹³¹:

Գործարար միջավայրի բարեփոխման գերակայություններից է զբաղվածության մակարդակի բարձրացումը, այսինքն՝ բարեփոխման առաջնահերթություններից են զբաղվածության աճին ուղղված պետական շրջանակային քաղաքականության արդյունավետության բարձրացումը, որի նպատակը գործարարությանը զբաղվելու և ներդրումներ իրականացնելու դյուրինացնելն ու անհարկի պետական միջամտությունները էականորեն կրճատելն է: Օտարերկրյա ներդրումների ներգրավման տեսանկյունից կարևոր է նաև շարունակական բարեփոխումներ անել ներդրողների շահերի պաշտպանության մակարդակի բարձրացման առումով:

Գործարար և ներդրումային միջավայրի հետագա զարգացման գործում առանցքային դեր է կատարում մրցակցային միջավայրի բարելավումը: Չնայած ՀՀ-ում որոշակի առաջընթաց է արձանագրել ներքին շուկայի մրցակցության ինտենսիվության և հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետության ցուցանիշների գծով, այնուամենայնիվ դեռևս դրանց գույնգործող, գոյություն ունեն մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունեցող


¹³¹ <http://www.mineconomy.am/arm/95/text.html>

տնտեսավարող սուբյեկտներ, ինչպես նաև բավականին բարձր է տնտեսական համակենտրոնացման մակարդակը, ինչը, որպես կանոն, խոչընդոտում է մրցակցային միջավայրի ձևավորմանն ու դրա հետագա զարգացմանը: Հայաստանի Հանրապետության ունեցած ապրանքային շուկաներում բարձր կենտրոնացվածության աստիճանը պայմանավորված է օբյեկտիվ գործոններով, ինչպիսիք՝ Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքը, փակ սահմանները, փոքր տնտեսությունը, բարձր տրասնպորտային ծախսերը, իսկ նման պայմաններում առավել արդյունավետ է դառնում մոնոպոլ դիրք գրավող խոշոր հարկ վճարողների գործունեությունը: Միևնույն ժամանակ, գոյություն ունեն ինստիտուցիոնալ խնդիրներ, որոնք խոչընդոտում են ապրանքների և ծառայությունների շուկայի բնական գործելուն և պայմանավորված են սահմանափակող կարգավորումներով, աղճատող (մրցակցությունը սահմանափակող) պետական օժանդակություններ, մրցակցային կանոնների և պետական գնումների համակարգի ոչ լիարժեք ապահովմամբ:

Հայաստանի Հանրապետությունում տնտեսական զարգացման համար կարևորագույն նախապայմաններից է գործարար և ներդրումային միջավայրի բարելավումը, և դրան հասնելու համար ՀՀ կառավարությունը նպատակ ունի Հայաստանում ստեղծել ձեռնարկատիրական գործունեության պետական կարգավորումների, ծառայությունների և վարչարարական ընթացակարգերի պարզ, թափանցիկ և քիչ ծախսատար միջավայր, հավասար մրցակցային պայմաններ, գործարարությանն օժանդակող զարգացած շուկայական ենթակառուցվածքներ, ինչպես նաև իրականացնել հարկային և մաքսային հավասարակշռված քաղաքականություն: Այդ առումով, պետք է նշել, որ ՀՀ գործարար և ներդրումային միջավայրի բարելավման համար իրականացվել է հետազոտություններ դրումային միջավայրի վերաբերյալ, որում առանձնացվել են գործոններ, որոնք ունեն էական և նշանակալի ազդեցություն վերջինիս զարգացման վրա: Քանի որ ներդրումային և գործարար միջավայրերը ունեն շատ ընդհանրություններ, կարող ենք ասել, որ այդ գործոնները ևս բնորոշում են գործարար միջավայրի արդի վիճակը: Այսպես, ներդրումային միջավայրի վրա ազդող

գործոններ դիտարկվել են արտադրանքի նկատմամբ առկա պահանջարկը, առևտրային վարկերի տոկոսադրույքը, ներդրումային ծրագրերի իրականացման համար բանկային վարկերի ստացման գործող մեխանիզմը, ներդրումային ռիսկերը, երկրում տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ներդրումային գործընթացները կարգավորող գործող իրավական նորմատիվային դաշտը, հաղորդակցման առկա ցանցերը և այլն: Այդ գործոնները գործարար միջավայրի վրա ներգործում են երկակի դրանք կարող են նպաստել վերջինիս գործունեությանը, միաժամանակ կարող են այն սահմանափակել ¹³²:

Ըստ հետազոտության արդյունքներով ստացված պատասխանների (հետազոտված 1963 կազմակերպություններից առաջադրված հարցերի գծով ստացվել է 11185 պատասխան), արտադրանքի նկատմամբ առկա պահանջարկը, որպես գործոն հիմնականում նպաստում է ներդրումային գործընթացներին, իսկ վերը թվարկված մնացած գործոնները՝ վարկավորման պայմանները, վարկային տոկոսադրույքը, օրենսդրա-նորմատիվային դաշտը, երկրի տնտեսական և քաղաքական իրավիճակը և այլն, ըստ պատասխանների արդյունքների, ավելի շուտ սահմանափակում են, քան նպաստում դրանց (**Գծապատկեր 3.3.1**):



¹³² <http://www.armstat.am/file/article/nerdrum-het-02-iii.5.6.pdf>

Գծապատկեր 3.3.1 Ներդրումային միջավայրի վրա ազդող գործոնների կառուցվածքն՝ ըստ ենթակառուցվածքների¹³³

Ինչպես ցույց են տալիս **գծապատկեր 3.3.1**-ի տվյալները, պատասխանների թվով, վարկավորման պայմանները, վարկային տոկոսադրույքը, որպես ներդրումային գործընթացներին սահմանափակող գործոններ, եղել են ամենաշատը՝ սահմանափակող պատասխանների ընդհանուր թվաքանակի 34.4%-ը: Բացի այդ, գոյություն ունեցող հիմնախնդիրներին կարելի է վերագրել նաև այն, որ դեռևս հանրապետությանում չեն մշակվել հայրենական պայմաններին համապատասխան ներդրումային նախագծեր, որոնք հետագայում կարող են ավելացնել հայրենական արտադրության ծավալներն ու ապահովել արտահանման կայուն աճ: Դրական փոփոխություններ են նկատվել հարկերի վճարման ընթացակարգերում: Բացի այդ, տնտեսական բարեփոխումներ իրականացնելու նպատակով ՀՀ կառավարության կողմից ընդունվել է գործարար միջավայրի բարելավման միջոցառումների 7 ծրագիր¹³⁴:

Պետք է նշել, որ իրականացվել են մի շարք բարեփոխումները, որոնք էականորեն բարելավվել են հարկային համակարգի ազդեցությունը գործարար միջավայրի վրա: Դրանք դասակարգվում են հետևյալ ուղղություններով¹³⁵:


1. Ներդրվել են հարկ վճարողների հարցումներով պաշտոնական և ընթացիկ պարզաբանումների տրամադրման հստակ ընթացակարգեր, մասնավորապես սահմանվել են պարզաբանումների տրամադրման կանոնները, ժամկետները և հրապարակումը:
2. Ներդրվել է վճարումների պետական էլեկտրոնային համակարգը, որը հնարավորություն է տալիս Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական տուրքի, տեղական տուրքի, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների համար

¹³³ <http://www.armstat.am/file/article/nerdrum-het-02-iii-5.6.pdf>
¹³⁴ ՀՀ կառավարության 2008թ. թիվ 775, 2010թ. թիվ 97-Ն, 2010թ. թիվ 1768, 2011թ. թիվ 1930-Ն, 2013թ. թիվ 240-Ա, 2014թ. թիվ 258-Ա, 2015թ. թիվ 265-Ն որոշումները
¹³⁵ <http://www.mineconomy.am/arm/95/text.html>

գանձվող վճարը կամ վարչական տուգանքները կատարել էլեկտրոնային եղանակով:

Արդյունավետ է նաև գործարար միջավայրի ինդեքսի կիրառելիությունը ՀՀ-ում, որը հաշվարկվում է ռիսկերի և ընդհանուր տնտեսական վիճակի փոփոխությունների վերաբերյալ կազմակերպությունների գնահատականների միջինացման միջոցով, ինչպես նաև տնտեսական ակտիվության ինդեքսը՝ թողարկման ծավալների, արտադրանքի կամ ծառայությունների նկատմամբ պահանջարկի և պաշարների վերաբերյալ կազմակերպությունների սպասումների միջինացման միջոցով: Գործարար միջավայրի ցուցանիշի հաշվարկման համար ՀՀ կենտրոնական բանկը մշակում է հարցեր, որոնց պատասխանների տարբերակների (նվազում, աճ, կայունություն) ամփոփման միջոցով տրվում են արժեքներ: Վերջիններս տատանվում են 0-100 միջակայքում¹³⁶: Օրինակ, եթե ստացվում է 0 արժեք, դա նշանակում է բոլոր հարցվողները նշել են նվազում, իսկ եթե տրվում է 100 արժեքը՝ աճ, 50 արժեքը՝ կայուն վիճակ: Կարելի է ասել, որ գործարար միջավայրի ցուցանիշի կայունության ապահովման համար բավական է ունենալ 45-50 արժեքները: Ըստ այդմ, գործարար միջավայրի ցուցանիշը կտրուկ նվազել է 2009 թվականի 1-ին եռամսյակում, որը պայմանավորված է ՀՀ տնտեսության հիմնական ոլորտների անկմամբ և ֆինանսական ճգնաժամով: 2009թ. 2-րդ եռամսյակից սկսած նկատվել է աճ և արդեն 2015թ. 4-րդ եռամսյակում նախորդի համեմատ գործարար միջավայրի ցուցանիշն ավելացել է 0.2 կետով՝ կազմելով 50.5՝ շարունակական ապահովելով կայունության մակարդակը (**Գծապատկեր 3.2.2**):

¹³⁶ <https://www.cba.am/am/SitePages/statsseabci.aspx>




Գծապատկեր 3.2.2 Գործարար միջավայրի ցուցանիշի դինամիկան 2006-2015թթ.¹³⁷

ՀՀ տնտեսության ոլորտային տեսանկյունից արդյունաբերության և շինարարության ոլորտի ցուցանիշները նվազել են, միաժամանակ առևտրի և ծառայությունների ոլորտների ցուցանիշների բարելավումը պահպանել է գործարար միջավայրի ցուցանիշը բարձր մակարդակի վրա (**Գծապատկեր 3.2.3**) :

Բացի այդ, հիմնավորվել է, որ ՀՀ տնտեսության զարգացման համար անհրաժեշտ է վերանայել տնտեսության իրական հատվածում մշակված ռազմավարությունը՝ ուղղված հարկային արտոնությունների սահմանմանը, հատկապես ռազմավարական և մրցունակ ոլորտներում, ինչպիսիք են՝ վերամշակող և հանքագործական արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, հատկապես՝ սննդի արտադրությունը, որոնք ապահովում են ծախսեր-օգուտներ արդյունքը: Դրանք հետագայում երաշխիքներ են ստեղծելու փոխարինել այն ապրանքների ներմուծումը, որոնք կարող են արտադրվել Հայաստանում:

¹³⁷ <https://www.cba.am/am/SitePages/statsseabci.aspx>



Գծապատկեր 3.3.3 ՀՀ-ում գործարար միջավայրն ըստ տնտեսության ոլորտների 2012-2015թթ. (միջինացված ցուցանիշներ)¹³⁸

Գործարար միջավայրի բարելավման տեսանկյունից անհրաժեշտ է կիրառել հարկման այնպիսի դրույքաչափերի կիրառությունը, որոնք մի կողմից չեզոք ազդեցություն կունենան հարկային միջավայրի վրա, մյուս կողմից հնարավորություն կընձեռեն տնտեսության տարբեր ոլորտների, տարբեր չափերի, ինչպես նաև հարկման տարբեր համակարգերում գտնվող հարկվճարողների համար սահմանել հավասարակշռված և տնտեսապես հիմնավորված հարկային բեռ: Մյուս կողմից, հարկման դրույքաչափերի որոշման տեսանկյունից կարևոր դերակատարություն է ունեցել նաև Եվրասիական տնտեսական միությունում իրականացվող՝ ծխախոտի արտադրանքի և ալկոհոլային խմիչքների մասով ակցիզային հարկի դրույքաչափերի աստիճանական ներդաշնակեցման քաղաքականությունը: Բացի այդ առաջարկվում է վերանայել հարկման բազաների որոշման սկզբունքներն ու կանոնները: Վերջինս հնարավորություն կընձեռի մի կողմից ամրապնդել հարկման արդարության սկզբունքները, ինչը կդրսևորվի հարկման բազաների որոշման սկզբունքների միասնականացմամբ, մյուս կողմից՝ սահմանել առավել հիմնավորված հարկման բազաներ, ինչը կդրսևորվի հարկման բազան արհեստականորեն մեծացնող և տնտեսագիտական որևէ հիմնավորում չունեցող

¹³⁸ <https://www.cba.am/am/SitePages/statsseabci.aspx>

սահմանափակումների վերացմամբ: Արդյունքում հիմնական հարկատեսակների գծով հարկման բազաները կճշգրտվեն՝ դրանով իսկ ամրապնդելով հարկման արդարացիության սկզբունքը:

ՀՀ գործարար միջավայրի վարկանիշային գնահատականների հարցում անհրաժեշտ է վերլուծել հարկային բեռի ազդեցությունը տնտեսական ակտիվության վրա: Այդ առումով, մշակվել են տնտեսաչափական մոդելներ (3.3.1-3.3.6), որոնց միջոցով գնահատվել են տնտեսության հիմնական ոլորտները, ինչպիսիք են՝ գյուղատնտեսությունը, հանքագործական արդյունաբերությունը, մշակող արդյունաբերությունը, շինարարությունը, առևտուրը, տեղեկատվությունը և կապը: Դրանք դիտարկվել են ՀՆԱ-ի եկամուտների ձևավորման գործում (հավելված 2).

$$AGRV = a_0 + a_1 * X_1 + a_2 * X_2 + a_3 * X_3 \quad (3.3.1)$$

$$MININGPROF = b_0 + b_1 * M_1 + b_2 * M_2 + b_3 * M_3 \quad (3.3.2)$$

$$MANUFV = c_0 + c_1 * Y_1 + c_2 * Y_2 + c_3 * Y_3 \quad (3.3.3)$$

$$CONSV = d_0 + d_1 * Z_1 + d_2 * Z_2 + d_3 * Z_3 \quad (3.3.4)$$

$$TRADEV = g_0 + g_1 * T_1 + g_2 * T_2 + g_3 * T_3 \quad (3.3.5)$$

$$ICV = f_0 + f_1 * I_1 + f_2 * I_2 + f_3 * I_3 \quad (3.3.6)$$

որտեղ՝

AGRV-ն՝ գյուղատնտեսությունում ավելացված արժեքն է, մլն. դրամ
 X_1 -ն՝ գյուղատնտեսությունում զբաղվածների աշխատավարձն է, մլն. դրամ

X_2 -ն՝ գյուղատնտեսությունում հիմնական կապիտալի սպառումն է. մլն. դրամ

X_3 -ն՝ գյուղատնտեսությունում հասույթի գումարն է, մլն. դրամ,
 a_0, a_1, a_2, a_3 -ն՝ գյուղատնտեսությունում անկախ փոփոխականների կոմբլյացիոն գործակիցներն են, որոնք ազդում են կախյալ փոփոխականի՝ AGRV-ի վրա,

MANUFV-ն՝ մշակող արդյունաբերությունում ավելացված արժեքն է, մլն. դրամ

Y_1 -ն՝ մշակող արդյունաբերությունում զբաղվածների աշխատավարձն է, մլն. դրամ

Y_2 -ն՝ մշակող արդյունաբերությունում հասույթի գումարն է, մլն. դրամ,

Y_3 -ն՝ մշակող արդյունաբերությունում հիմնական կապիտալի սպառումն է. մլն. դրամ
 b_0, b_1, b_2, b_3 -ն՝ ոլորտում անկախ փոփոխականների կոռելյացիոն գործակիցներն են, որոնք ազդում են կախյալ փոփոխականի՝ MANUFV-ի վրա,
 CONSV-ն՝ շինարարությունում ավելացված արժեքն է, մլն. դրամ
 Z_1 ն՝ շինարարությունում զբաղվածների աշխատավարձն է, մլն. դրամ
 Z_2 -ն՝ շինարարությունում հիմնական կապիտալի սպառումն է. մլն. դրամ
 Z_3 -ն՝ հասույթի գումարն է, մլն. դրամ,
 d_0, d_2, d_2 ն՝ անկախ փոփոխականների կոռելյացիոն գործակիցներն են, որոնք ազդում են կախյալ փոփոխականի՝ MANUFV-ի վրա,
 TRADEV-ն՝ ավելացված արժեքն է, մլն. դրամ
 T_1 -ն՝ առևտրում զբաղվածների աշխատավարձն է, մլն. դրամ
 T_2 -ն՝ առևտրում հիմնական կապիտալի սպառումն է. մլն. դրամ
 T_3 -ն՝ առևտրում հասույթի գումարն է, մլն. դրամ,
 g_0, g_1, g_2, g_3 -ն՝ անկախ փոփոխականների կոռելյացիոն գործակիցներն են, որոնք ազդում են կախյալ փոփոխականի՝ TRADEV -ի վրա,
 ICV-ն՝ տեղեկատվության և կապի ավելացված արժեքն է, մլն. դրամ
 I_1 -ն՝ տեղեկատվության և կապի զբաղվածների աշխատավարձն է, մլն. դրամ
 I_2 . ն՝ տեղեկատվության և կապի ոլորտում հիմնական կապիտալի սպառումն է. մլն. դրամ
 I_3 . ն՝ տեղեկատվության և կապի ոլորտում հասույթի գումարն է, մլն. դրամ,
 f_0, f_1, f_2, f_3 - ն՝ անկախ փոփոխականների կոռելյացիոն գործակիցներն են, որոնք ազդում են կախյալ փոփոխականի՝ ICV -ի վրա:
 Յավելված 1-ի միջոցով ՅՅ տնտեսության ներկայացված ոլորտների ավելացված արժեքների և դրանց վրա ազդող գործոնների համար կիրառվել է պանելային շարքերի մեթոդը, ինչպես նաև ստուգվել են այդ շարքերի ստացիոնարության խնդիրները: Արդյունքում՝ կատարվել են տնտեսաչափական գնահատումներ՝ ըստ պանելային շարքերի մեթոդի: Վերջինիս համաձայն ստուգվել են R^2 -ը և F-վիճակագիրը՝ ներկայացված

մոդելների ճշտությամբ ունը հիմնավորելու համար (հավելված 5):

Ելնելով առաջարկված (3.1.1-3.1.6) մոդելներից, 2003-2014թթ. պանելային շարքերի միջոցով հաշվարկվել են ՀՀ տնտեսության ներկայացված ոլորտներում ավելացված արժեքի վրա ազդեցություն ունեցող գործոնները՝

$$\text{AGRV} = 123.4649678 + 3.417767682 * X_1 + 4.347954678 * X_2 - 0.6070917085 * X_3$$

(3.3.7)

$$\text{MININGVPROF} = 78.47995987 - 0.839835788 * M_1 + 2.275806703 * M_2 + 1.121246 * M_3$$

(3.1.8)

$$\text{MANUFV} = -161.9250832 + 3.023421401 * Y_1 + 0.00017792553 * Y_2 + 0.26829244 * Y_3$$

(3.31.9)

$$\text{CONSV} = -29.13565815 + 1.762402241 * Z_1 - 1.012555459 * Z_2 + 0.6163085284 * Z_3$$

(3.3.10)

$$\text{TRADEV} = 1.356038422 + 1.064388242 * T_1 - 0.3110750865 * T_2 + 1.025307853 * T_3$$

(3.311)

$$\text{ICV} = -2.785153478 + 0.9953741466 * I_1 - 1.595123974e-10 * I_2 + 1.108941978 * I_3$$

(3.3.12)

(3.3.7-3.3.12) բանաձևերի միջոցով ստուգվել են յուրաքանչյուր անկախ փոփոխականի ազդեցությունը տվյալ ոլորտի ավելացված արժեքի վրա՝ հիմք ընդունելով F-վիճակագիրը: Ավելին՝ **հավելված 5**-ում հիմնավորվել է, որ ներկայացված բոլոր ոլորտներում ավելացված արժեքի ձևավորման գործում վիճակագրորեն նշանակալի ազդեցություն են ունեցել զբաղվածների աշխատավարձը, քանի որ F-վիճակագիրը փոքր կամ հավասար է եղել 5 տոկոսից:

Այսպես, գյուղատնտեսությունում զբաղվածների աշխատավարձի 1 տոկոսի փոփոխությունն առաջացրել է տվյալ ոլորտում ավելացված արժեքի 3.41 տոկոսի դրական փոփոխության: Պետք է նշել, որ գյուղատնտեսությունն այն միակն ոլորտն է հանդիսացել, որտեղ ներկայացված բոլոր փոփոխականներն ունեցել են վիճակագրորեն նշանակալի ազդեցություն ավելացված արժեքի

ձևավորման գործում (**բանաձև 3.3.7**):

Մշակող արդյունաբերությունում միայն զբաղվածների աշխատավարձն է ունեցել վիճակագրորեն նշանակալի ազդեցություն՝ ավելացված արժեքի ձևավորման վրա: Այսինքն՝ դիտարկված փոփոխականի 1 տոկոսային կետի փոփոխությունն առաջացրել է մշակող արդյունաբերությունում ավելացված արժեքի 3.02 տոկոսի փոփոխություն (**բանաձև 3.3.9**):

Ծինարարության ոլորտում վիճակագրորեն նշանակալի ազդեցություններ են ունեցել զբաղվածների աշխատավարձն ու հասույթի գումարը՝ համապատասխանաբար դրանց 1 տոկոսային կետերի փոփոխությունները առաջացրել 1.76 և 0.61 տոկոսային կետերի դրական փոփոխություններ (**բանաձև 3.3.10**):

Առևտրի ոլորտում, նույնպես, զբաղվածների աշխատավարձն ու հասույթի գումարներն ունեցել են վիճակագրորեն նշանակալի ազդեցություն՝ այդ ոլորտի ավելացված արժեքի ձևավորման գործում: Ընդ որում, T_1 փոփոխականի 1 տոկոսային կետով փոփոխումը դրական է ազդել կախյալ փոփոխականի՝ TRADEV-ի վրա՝ շուրջ 1.06 տոկոսային կետի չափով, ինչպես նաև դրական է ազդել T_3 -ի փոփոխությունը՝ առաջացնելով 1.108941978 տոկոսային կետի փոփոխություն (**բանաձև 3.3.11**):

Տեղեկատվության և կապի ոլորտում վիճակագրորեն նշանակալի ազդեցություններ են ունեցել զբաղվածների աշխատավարձն ու հասույթի գումարը, ընդ որում, այդ 2 փոփոխականները դրական են ազդել ոլորտում ավելացված արժեքի բարձրացման վրա՝ 0.99 և 1.118 տոկոսի չափով: (**բանաձև 3.3.12**):

Յետևաբար, կատարված վերլուծության արդյունքում հարկ ենք համարում նշել, որ ՀՀ տնտեսության զարգացումը պայմանավորված է առանձին ոլորտներում ավելացված արժեքի բարձրացման հետ: Ընդ որում, 2003-2014թթ. ներկայացված ոլորտներում էական ազդեցություն են ունեցել զբաղվածների աշխատավարձը և հասույթի գումարները: Դրանց հիման վրա կարելի է զարգացնել ներկայացված ոլորտներում ՀՀ-ում՝ բարեփոխելով այդ ոլորտներում եկամտային հարկի հաշվառման մեխանիզմը:

Ինչպես ցույց են տվել ատենախոսության Գլուխ 2-ում

կատարված արդյունքները, հանրապետության նույն դեռևս գոյության ունի հարկային բեռի արդյունավետության բարձրացման խնդիր, ինչը կաշկանդում է ոչ միայն տնտեսության զարգացմանը և գործարար վարկանիշի գնահատականների բարձրացմանը, այլև՝ առաջացնում է ստվերային տնտեսության՝ հատկապես ֆորմալ զբաղվածության դաշտում: Ներկայիս գործազրկության մակարդակի պայմաններում, ցանկացած դեպքերում աշխատողները գերադասում են ունենալ աշխատանք՝ նույնիսկ համաձայնվելով վճարվող աշխատավարձի ցածր գրանցելու գործատուների պահանջներին: Արդյունքում, եկամտային հարկը թերի է հավաքագրվում պետական բյուջե, իսկ հարկման արդյունավետությունը նվազում է: Բացի այդ, հարկային վարչարարության ցածր մակարդակի պատճառով գործատուները հաճախ դիմում են կոռուպցիոն ռիսկերի հարկային այս կամ այն ընթացակարգը շրջանցելու համար: Այդ բոլոր դեպքերը բացասական են ազդում պետական բյուջե հավաքագրվող հարկային եկամուտների վրա:

Ուստի, ելնելով առաջացած խնդիրների լուծման հրատապությունից, ՀՀ տնտեսության զարգացման համար առաջարկում ենք հանրապետության նույն իրականացնել հարկային բարեփոխումներ հետևյալ հաջորդականությամբ՝

1. Հաշվի առնելով ԵԱՏՄ անդամ երկրներում հարկային և մաքսային համակարգերի ներդաշնակեցման հիմնախնդիրները, ինչպես նաև միասնական գործարար միջավայր ձևավորելու հրատապությունը՝ ՀՀ տնտեսության ոլորտների զարգացման և գործազրկության մակարդակի նվազեցման համար եկամտային հարկի դրույքաչափերը վերանայել՝ 24.4 և 26 տոկոսներից նվազեցնելով 13 տոկոսի, ինչը գործում է Ռուսաստանում և Բելոռուսիայում միասնական եկամտահարկի ձևով:

2. ՀՀ մրցունակ տնտեսության և գործարար ակտիվության բարձրացման համար շահութահարկի դրույքաչափը վերանայել՝ 20 տոկոսից այն նվազեցնելով 10 տոկոսի, ընդ որում, այդ փոփոխությունը նպատակահարմար ենք համարում կիրառել ՀՀ-ում արտադրող և ՀՀ ներքին շուկայում իրացնող ընկերությունների

համար, իսկ ԵԱՏՄ արտահանման դեպքում շահույթահարկի դրույքաչափի 10-ապատիկ իջեցումը կիրառել ոչ թե տարեկան 40-50 մլրդ. դրամ շրջանառության դեպքում, այլ համեմատական առավել ություններ ունեցող ապրանքների արտահանման դեպքերում, ինչպիսիք են՝ գյուղատնտեսական մթերքները, պահածոները, միրգը և բանջարեղենը:

Այսինքն, ՀՀ տնտեսության զարգացման և գործարար միջավայրի վարկանիշի բարձրացման համար անհրաժեշտ է վերանայել հարկային բեռը: Այդ առումով, ատենախոսության թեմայից ելնելով, առաջարկում ենք հաշվարկել հարկային բեռի վրա ազդեցություն ունեցող ուղղակի հարկերը՝ եկամտային հարկի և շահույթահարկի մասով, ինչպես նաև անուղղակի հարկերը՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի մասով: Այդ ազդեցությունները հաշվարկվել են 2001-2014թթ. ժամանակահատվածի համար՝ կազմելով տնտեսաչափական մոդելի միջոցով, ընդ որում, ներկայացված հարկատեսակները բերվել են իրական մեծության՝ դրանք ճշգրտելով 2001թ. ՍԳԻ-ի հետ: Պանելային շարքերի միջոցով գնահատվել են այն առանձին գործոնների նշանակալի ազդեցությունները հարկային բեռի վրա՝ հիմք ընդունելով F-վիճակագրի 5 տոկոսից փոքր կամ հավասար լինելու դրույթը՝

$$LN TAXBUR = \epsilon_0 + \epsilon_1 * LN CORPT + \epsilon_2 * LN LABT + \epsilon_3 * LN VAT - \epsilon * LN EXT \quad (3.3.13)$$

որտեղ՝

LN TAXBUR-ն՝ հարկային բեռն է, որը ցույց է տալիս հարկեր/ՋՆԱ

հարաբերակցությունը՝ լոգարիթմական արժեքով,

LN CORPT-ն՝ շահույթահարկն է՝ լոգարիթմական արժեքով,

LN LABT-ն՝ եկամտային հարկն է՝ լոգարիթմական արժեքով,

LN VAT-ն՝ ԱԱՀ-ն է՝ լոգարիթմական արժեքով,

LN EXT-ն՝ ակցիզային հարկն է՝ լոգարիթմական արժեքով:

(3.3.13) մոդելի միջոցով հաշվարկվել են դիտարկված հարկատեսակների ազդեցությունը հարկային բեռի վրա: Ընդ որում, հավելված 6-ում հիմնավորվել է այն, որ հարկային բեռի վրա վիճակագրորեն նշանակալի ազդեցություններ են ունեցել եկամտային հարկն ու ակցիզային հարկը: 2003-2014թթ. պանելային շարքերի միջոցով գնահատվել են անկախ փոփոխականների

ազդեցությունը կախյալ փոփոխականի վրա, մասնավորապես շահույթահարկի 1 տոկոսային կետի փոփոխությունը առաջացրել է հարկային բեռի 2.79 տոկոսային կետի դրական փոփոխություն, իսկ ակցիզային հարկի և եկամտային հարկի 1 տոկոսային կետի փոփոխությունը, հակառակը, առաջացրել է հարկային բեռի բացասական փոփոխություն՝ համապատասխանաբար 1.32 և 1.62 տոկոսային կետերի չափով՝

$$\text{TAXB} = - 169.9710012 + 2.793575507e-10 * \text{CORPT} - 1.628830336e-09 * \text{LABT} - 1.841000306e-09 * \text{VAT} - 1.327859417e-08 * \text{EXT} \quad (3.3.14)$$

Այսպիսով՝ ամփոփելով կատարված վերլուծության արդյունքները, կարող ենք եզրակացնել, որ ներկայիս ԵԱՏՄ ինտեգրման պայմաններում առաջին հերթին անհրաժեշտ է վերանայել ՀՀ-ում գործող հարկային օրենսդրությունը, դրանում փոփոխություններ կատարելով հատկապես եկամտային և ակցիզային հարկերի մասով: Վերջիններս կարելի է հիմնավորել այն դրույթով, որ հատկապես, այս հարկատեսակների մասով անհրաժեշտ է ՀՀ հարկային օրենսդրությունը և առանձին հարկերի մասին օրենքները վերանայել՝ ԵԱՏՄ անդամ երկրներում հարկային ներդաշնակեցման նպատակով: Այլ խոսքով՝ հարկային բեռի բաշխման հիմնախնդիրների կարգավորման գործում անհրաժեշտ է վերանայել հանրապետությունում իրականացվող հարկային քաղաքականությունը, քանի որ այն կաշկանդում է գործարար միջավայրի զարգացմանն ու մրցունակ տնտեսության ձևավորմանը:

Գտնում ենք, որ հարկային բարեփոխումների նպատակը գործարար միջավայրի վարկանիշի բարձրացումն ու ներդրումային ակտիվության բարձրացումն է, նոր աշխատատեղերի ստեղծումն է, պետական բյուջեում հարկային եկամուտների ավելացումն է: Հարկային բարեփոխումների գործիքներից են հանդիսանում հարկային արտոնությունները, որոնք կոչվում են նաև ակտիվ հարկային միջոցառումներ: Դրանց սահմանումն ու գործնականում կիրառությունը ուղղված է հարկման հորիզոնական արդարության սկզբունքի ամրապնդմանը: Ընդհանուր առմամբ, գործող

օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնություները կարելի է խմբավորել հետևյալ հիմնական խմբերում¹³⁹.

- 4) սոցիալական ուղղվածություն ունեցող հարկային արտոնություներ,
- 5) ոլորտային հարկային արտոնություներ,
- 6) գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ու ակտիվության բարձրացմանն ուղղված հարկային արտոնություներ:

Սոցիալական ուղղվածություն ունեցող հարկային արտոնություների կիրառության հիմնական նպատակը առողջապահական, կրթական ու գիտական նշանակության որոշ ծառայությունների մատուցումն ու ապրանքների մատակարարումը ավելացված արժեքի հարկից ազատելն է, ինչը, այլ հավասար պայմաններում հնարավորություն է ընձեռում նշյալ ապրանքներն ու ծառայությունները ձեռք բերել համեմատաբար ցածր գներով:

Սոցիալական ուղղվածություն ունեցող հարկային արտոնություների կիրառության մյուս հիմնական նպատակը ֆիզիկական անձանց կողմից սոցիալական պաշտպանության նպատակներով ստացվող որոշ եկամուտներ եկամտային հարկով հարկումից ազատելն է:

Այս առումով, նախքան սոցիալական ուղղվածություն ունեցող հարկային արտոնություների կրճատումը պետք է մանրամասն ուսումնասիրվի դրանց կիրառության արդյունավետությունը՝ բացահայտելու համար այն արտոնություները, որոնք չեն ապահովում անհրաժեշտ հասցեականություն: Այսինքն, սոցիալական ուղղվածություն ունեցող այն հարկային արտոնություները, որոնց կիրառությամբ հնարավոր չի լինում աջակցություն ցուցաբերել հասարակության այն խմբերին, որոնց համար, ըստ էության, նախատեսված են այդ արտոնություները, պետք է աստիճանաբար կրճատվեն, իսկ դրանց փոխարեն պետք է կիրառվեն պետական օժանդակության ուղղակի գործիքներ ու մեթոդներ, որոնք առավել հասցեական են և որոնց կիրառությունն

¹³⁹ Հարկային եվ մաքսային օրենսդրության վերանայման ռազմավարական սկզբունքների ուղեցույցին եվ սկզբունքներից բխող միջոցառումների իրականացման ժամանակացույցին հավանություն տալու մասին: ՀՀ կառավարություն 25.07.2013 N 29: Արձանագրային որոշում

առավել արդյունավետ է:

Միաժամանակ, հատկանշական է այն, որ սոցիալական ուղղվածություն ունեցող հարկային արտոնությունների շրջանակի կրճատման հնարավորություններն ու նպատակահարմարությունը պետք է քննարկել հասարակության տարբեր սոցիալական խմբերի կողմից ստացվող եկամուտների ընդգծված անհավասարության աստիճանի կրճատման, հասարակության եկամուտների վերաբաշխման՝ պետության գործառույթի արդյունավետության բարձրացման, ինչպես նաև հասարակության թույլ ապահովված խմբերի սոցիալական պաշտպանության այլ ընտրանքային գործիքների (այդ թվում՝ նպատակային ու հասցեական սոցիալական ծրագրերի) ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքների համատեքստում: Հակառակ պարագայում, սոցիալական ուղղվածություն ունեցող հարկային արտոնությունների կրճատումը կարող է նկատելի բացասական ազդեցություն ունենալ վճարունակության ու սոցիալական պաշտպանվածության ցածր աստիճան ունեցող բնակչության վրա:

Ոլորտային հարկային արտոնությունների կիրառությունը պայմանավորված է երկու հիմնական հանգամանքներով՝

1. Ներքին տնտեսության երկարաժամկետ և կայուն զարգացման տեսանկյունից տնտեսության որոշ ոլորտների զարգացումը համարվում է գերակայություն: Դրանք հիմնականում այն ոլորտներն են, որոնք ավանդաբար ձևավորել են ներքին տնտեսության նկարագիրը (ոսկերչություն, զբոսաշրջություն, գորգագործություն և այլն): Այս առումով, Կառավարությունը տարբեր գործիքներով (այդ թվում՝ հարկային արտոնությունների կիրառությամբ) օժանդակում է այդ ոլորտներում գործող տնտեսավարող սուբյեկտներին: Այս խմբի ոլորտային արտոնությունների կիրառության նպատակահարմարությունը հիմնավորվում է նաև դրանց արդյունավետությամբ և ներշրջանակով, հետևաբար նշյալ արտոնությունների շարունակական կիրառությունը կարևորվում է նաև տնտեսության զարգացման ներկափուլում:

2. Ոլորտային հարկային արտոնությունների կիրառության

պատճառն այն է, որ կան տնտեսության այնպիսի ոլորտներ, որտեղ արդյունավետ հարկային վարչարարության իրականացումը մշտապես դժվար լուծելի խնդիր է եղել հարկային մարմինների համար: Խոսքը գլխավորապես վերաբերում է տնտեսության գյուղատնտեսական ու ֆինանսական ոլորտներին:

Մասնավորապես, այստեղ խոսքը գնում է գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամուտների՝ շահութահարկով կամ եկամտային հարկով հարկումից ազատման արտոնության մասին¹⁴⁰: Պետք է նշել, որ այս արտոնության համար բավականին բարդ է որոշել, գյուղատնտեսական արտադրանքի ապրանքային արտադրության մասի (իրացման համար նախատեսված մասի) առանձնացումը սեփական կարիքների համար արտադրվող գյուղատնտեսական արտադրանքից:

Հարկային օրենսդրության համաձայն, գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու համար ֆիզիկական անձանցից պետական հաշվառում չի պահանջվում, ինչը նշանակում է, որ գյուղատնտեսական գործունեության ոլորտում գործող ֆիզիկական անձինք ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար համապատասխան կարգավիճակ չունեն: Այդ կապակցությամբ, նախքան գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամուտների հարկման համակարգի ներդրումը անհրաժեշտ է միջոցառումներ ձեռնարկել գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող անձանց հաշվառման ու ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար որոշակի կարգավիճակի տրամադրման ուղղությամբ:

¹⁴⁰ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 8: ՀՀՊՏ 2010.12.30/69(803).1

ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ

Տնտեսական հարաբերությունների զարգացման արդի փուլում գնալով մեծանում է տարբեր գործոնների ազդեցությունը գործարար միջավայրի զարգացման վրա: Տարբեր երկրներ կիրառում են տնտեսական, իրավական, քաղաքական և սոցիալական տարբեր գործիքներ՝ իրենց տնտեսությունները մրցունակ, գործարար միջավայրը՝ դյուրին, հարկային համակարգը՝ ճկուն դարձնելու համար: Ավելին, նրանք արագ են արձագանքում սպառողների և կառավարության որոշումներին՝ մշտապես ունենալով շուկայում կայուն դիրք և համեմատական առավելություններ՝ տնտեսության զարգացման գործում:

Ատենախոսությունում հիմնական արդյունքների վերլուծության և գնահատման արդյունքում կատարվել են եզրակացություններ, որոնց բովանդակությունը կայանում է հետևյալում՝

- ՀՀ գործարար միջավայրի վրա ազդում են տարբեր գործոններ, ընդ որում, հանրապետությունում ինստիտուցիոնալ բարեփոխումների, մասնավորապես՝ հարկային և մաքսային օրենսդրության, ներդրումների կարգավորման, գործազրկության կրճատման, իսկ հարկերի հավաքագրման դիվերսիֆիկացման և տնտեսության մրցունակության բարձրացման միջոցառումներն անմիջական ազդեցություն են ունեցել հարկային համակարգի վրա:
- ՀՀ հարկային համակարգի արդյունավետության բարձրացման և գործարար միջավայրի բարելավման համար անհրաժեշտ է բացահայտել տնտեսության զարգացման գերակայություններ և փնտրել ուղիներ՝ արտաքին շուկաները գրավելու համար: Այդ առումով, ժամանակակից մարտահրավերներից են տնտեսական բնույթի միջոցառումները՝ ուղղված հարկային բարեփոխումների գերակայությունների սահմանմանը, տնտեսության աշխուժացմանը:
- ՀՀ հարկային համակարգի կայունության ապահովման և ԵԱՏՄ ինտեգրացիոն գործընթացների համատեքստում առաջնային խնդիրներից են հարկային բեռի գնահատումը և դրա օպտիմալ բաշխումը: Այդ առումով, հարկային բարեփոխումները նպատակ են

հետապնդում պետական բյուջեում ապահովել հարկային եկամուտների շարունակական աճ: Այսինքն՝ շեշտը դրվում է հարկերի ֆիսկալ գործառույթին՝ անտեսելով հարկերի կարգավորիչ և խթանող գործառույթների կիրառությունը: Դեռևս հարկային համակարգում հիմնական կշիռը տրվում է սպառման հարկմանը, իսկ դա նշանակում է, որ հարկային բեռի օպտիմալացման հարցում անհրաժեշտ է իրականացնել արմատական փոփոխություններ, որոնք պայմանավորված են հարկային պարտավորությունների հաշվարկման նոր համակարգի ներդրման հետ:

- Աշխատանքում հիմնավորվել է ՀՀ տնտեսության և գործարար միջավայրի զարգացման համար գործարար միջավայրի վրա ազդող գործոնային վերլուծության ձևաչափի և կառուցակարգի մշակման անհրաժեշտությունը՝ ուղղված ներդրումային հոսքերի ներգրավմանը, նոր աշխատեղերի ստեղծմանը, գործարարակտիվության բարձրացմանը, բնակչության բարեկեցության բարելավմանը:

- Չնայած դրական փոփոխությունների, դեռևս հանրապետությունում գոյություն ունեն բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնք կաշկանդում են գործարար միջավայրի զարգացմանը: Ի թիվս դրանց, կարելի է ընդգծել հարկերի վճարման, միջսահմանային առևտրի, վարկերի ստացման, պայմանագրերի կիրարկման, ներդրողների շահերի պաշպանության հետ կապված խնդիրները, որոնք պայմանավորված են նաև կոռուպցիոն ռիսկերով, սովերային տնտեսությամբ, գործազրկության բարձր մակարդակով, եկամուտների անհավասարաչափ բաշխմամբ, հարկային վարչարարություն և քաղաքական դիրքորոշմամբ, անհավասար մրցակցային պայմաններով և այլն:

- ՀՀ տնտեսության զարգացումը պայմանավորված է ոչ թե հարկային ցածր դրույթաչափերով, այլ՝ երկարաժամկետ հատվածում տարբեր հարկատեսակների համար սահմանված հարկային արտոնություններով: Գործարար միջավայրի բարելավումը պայմանավորված է նաև տնտեսական իրավիճակի հետ, մասնավորապես տնտեսական աճի կայունությամբ: Այդ առումով, անհրաժեշտ է վերլուծել հարկային համակարգի ազդեցությունը տնտեսական աճի

վրա:

- ՀՀ գործարար միջավայրի վրա ազդում են ինստիտուցիոնալ բարեփոխումները, ինչպիսիք են հարկային և մաքսային օրենսդրության, ներդրումների կարգավորման, գործազրկության կրճատման, տնտեսության դիվերսիֆիկացման բարեփոխումները: Հիմնավորվել է այն, որ ՀՀ գործարար միջավայրի վրա անմիջական ազդեցություն ունի հարկային համակարգը, և այդ հիմքերով առաջարկել են հանրապետությունում կիրառել հարկային արտոնությունների շահութահարկի մասով, մասնավորապես վերամշակող արդյունաբերությունում:

- ՀՀ հարկային համակարգի կայունության ապահովման և ԵԱՏՄ ինտեգրացիոն գործընթացների համատեքստում առաջնային խնդիրներից են հարկային բեռի գնահատումը և դրա օպտիմալ բաշխումը: Այդ առումով, հարկային բարեփոխումները նպատակ են հետապնդում պետական բյուջեում ապահովել հարկային եկամուտների շարունակական աճ: Այսինքն՝ շեշտը դրվում է հարկերի ֆիսկալ գործառնություն՝ անտեսելով հարկերի կարգավորիչ և խթանող գործառնությունների կիրառությունը: Դեռևս հարկային համակարգում հիմնական կշիռը տրվում է սպառման հարկմանը, իսկ դա նշանակում է, որ հարկային բեռի օպտիմալացման հարցում անհրաժեշտ է իրականացնել արմատական փոփոխություններ, որոնք պայմանավորված են հարկային պարտավորությունների հաշվարկման նոր համակարգի ներդրման հետ:

- Վերլուծվել են տնտեսության հիմնական ոլորտների վրա ազդող գործոնները և դրանց հիման վրա հիմնավորվել են հարկային համակարգի ներդաշնակեցման հիմնախնդիրները ԵԱՏՄ անդամ երկրներում, ինչպես նաև առաջարկվել է ՀՀ տնտեսության ոլորտների զարգացման համար վերանայել ՀՀ հարկային գործիքների և լծակների կիրառությունը:

- Չնայած բավականին բարելավել է հարկային վարչարարությունը, այնուամենայնիվ, դեռևս գոյություն ունեն բավականին լուրջ հիմնախնդիրներ, որոնք բարդացրել են հարկային հարաբերությունները կարգավորող օրենսդրությունից օգտվելը և ստեղծել են այնպիսի իրավիճակ, երբ միատեսակ

հարկային հարաբերությունները կարգավորվում են տարբեր սկզբունքներով ու կանոններով, այսինքն՝ դեռևս գոյություն ունեն հարկային օրենսդրության առումով վարչարարության խնդիրներ՝ երկիմաստությունների և տարընթերցումների տեսքով: ՀՀ նոր հարկային օրենսգրքի միջոցով հնարավոր կլինի նկատելիորեն կենտրոնացնել և միօրինակ դարձնել հարկային հարաբերությունները կարգավորող բազմաթիվ իրավական ակտերը, ինչի արդյունքում հարկային օրենսդրությունը կդառնա առավել համակարգված, իսկ դրանից օգտվելը՝ դյուրին:

- Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության անդամակցությունը ԵԱՏՄ ինտեգրացիոն գործընթացներում, հարկային համակարգի բարելավման համատեքստում առաջարկվում է վերանայել ուղղակի հարկերի դրույքաչափերը և իրականացնել փոփոխություններ՝ նպատակ ունենալով ներդաշնակեցնել ՀՀ հարկային համակարգը ԵԱՏՄ-ի հարկային համակարգի հետ: Մասնավորապես, առաջարկվել է վերանայել եկամտային հարկի դրույքաչափը 24.4, 26, 36 տոկոսից դարձնելով միասնական 20 տոկոս: Գործող դրույքաչափի փոփոխությունը, իր հերթին, կբերի պետական բյուջեի հարկային եկամուտների կրճատմանը, սակայն առանձին հարկատեսակների բեռը գնահատելիս, հիմնավորվել է, որ ՀՀ-ում եկամտային հարկի բեռը բարձր է, որը գանձվում է աշխատավարձից: Այս հանգամանքը նկատելիորեն խոչընդոտում է ազգային տնտեսության մրցունակությունը և բացի այդ, խրախուսում է աշխատավարձի թերհայ տարարագրումը: Ներկայացվող բարեփոխումները մի կողմից կարող են լուծել մակրոտնտեսական և սոցիալական խնդիրները, ինչպիսիք են՝ աղքատության կրճատումը, զբաղվածության ավելացումը, աշխատավարձերի իրական մեծությունների հայտարարագրումն ու սովորային տնտեսության կրճատումը, մյուս կողմից, այդ առաջարկությունները կարող են նվազեցնել պետական բյուջեի հարկային եկամուտները, սակայն առաջացած տարբերությունը կարող է լրացվել այլ հարկերի դրույքաչափերի բարձրացմամբ:

- Հարկային բեռի և պետական բյուջեում հարկային եկամուտների չեզոքության ապահովման համար առաջարկվում է

Եկամտային հարկի դրույքաչափերի փոփոխմանը զուգահեռ վերանայել անուղղակի հարկերից ակցիզային հարկի դրույքաչափերը, քանի որ դրանք մի քանի անգամ ցածր են Եվրոպական և ԵԱՏՄ երկրներում համամասն դրույքաչափերից:

- ԶՅ-ում ստվերային շրջանառությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով ներկայացվել և առաջարկվել է վերանայել գործարքների և առանձին ապրանքների փաստաթղթավորման նկատմամբ պահանջներն ու հսկողությունը, մասնավորապես, փաստաթղթավորման ցածր մակարդակը՝ հնարավորություն չի ընձեռում պարզել իրական ՓՄՁ սուբյեկտներին և նրանց համար մշակել ու իրականացնել մեղմ հարկային քաղաքականություն և վարչարարություն, ինչպես նաև խոշոր տնտեսավարող սուբյեկտներին հնարավորություն է ընձեռում թաքցնել հսկայական իրացման շրջանառություններ՝ դրանով իսկ հարկային բեռը տեղափոխելով փոքր հարկ վճարողների վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ՑԱՆԿ

ՀՀ օրենսդրություն և այլ հրավական ակտեր

1. ՀՀ Սահմանադրություն և նախագահի հրավական ակտեր:
2. «Հարկերի մասին» ՀՀ օրենք: ՀՀ ՊՏ 1997.05.20/11, ՀՕ-107:
3. «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենք: ՀՀ ՊՏ 2012.12.28/66(940):
